

3981

С/7204307

Ա. ԴԵԲՈՐԻՆ

ԼԵՂԻԼԵ

ԿՈՐԴԵՍ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТРОЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՄԱՐՏԼԶՈՂ

ՄԱՏԵՐԻԱԼԻՍ

3K7

17-30

N 188

C 192607307
30 JUN 2005

Ca350

№

ԼԵՆԻՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1

3K7

7-30

Ա. ԴԵԲՈՐԻՆ

ВИБРОТЕХНИКА
ИНСТИТУТА
ДОСТОПОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԼԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՄԱՐՏՆՉՈՂ
ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏ

ՀԵՂԻՆԱԿԻ ՆԱԽԱԲԱՆՈՎ



2 APR 2013

3981

Արտատպված է Վ. ՎԱՀԱՆՅԱՆԻ, Ա. ԿԱՐԻՆՅԱՆԻ
 յեվ Դ.Ր. ՍԻՄՈՆՅԱՆԻ խմբագրությամբ
 հրատարակված «ԼԵՆԻՆ» Ժողովածուից:



6/203-67

Тип. Госиздата С. С. Р. Армени, Москва. Армянский пер., 2
 Главлит 25050 Тираж 1000

ՀԵՂԻՆԱԿԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Առանձին գոհունակությամբ յես իմացա, վոր հայ ընկերները մտադրվել են իրենց մայրենի լեզվով առանձին բրոշյուրով հրատարակել իմ հոգվածները Վ. Ի. Լենինի փիլիսոփայական հայացքների մասին: Հայ մարքսիստական գրականությունը այնքան ել հարուստ է: Նույնիսկ Մարքսի, Ենգելսի յեվ Պլեխանովի դասական աշխատությունները տակավին թարգմանված չեն հայերեն լեզվով*): Լենինի աշխատություններից հայերեն լեզվով թարգմանված է շատ քիչ բան: Ըստ յերեվոյթին, այդ բացատրվում է նրանով, վոր հայ ընկերների նշանավոր մասին մարքսիստական գրականությունը մատչելի չէ կամ բնագրերից, կամ ռուսական թարգմանությամբ: Սակայն մենք բոլորս շահագրգռված ենք, վորպեսզի մարքսիզմը թափանցի բանվոր դասակարգի ամենաընդարձակ շերտերը, վորպեսզի պրոլետարիատի ամենորյա դասակարգային պայքարը յեվ հեղափոխական գործունեությունը լուսավորվեն մարքսիզմի թեորիայի պայծառ լույսով, յեվ վոչ թե թելադրվեն միայն սոսկ դասակարգային բնազդով: Բանվոր դասակարգի յուրաքանչյուր քայլը պիտի իմաստավորվի մեր ամբողջական աշխարհայացքի բարձունքից: Պրակտիկան չի կարող պոկվել թեորիայից: Չե վոր վոչ թե մի ուրիշը, այլ հենց Լենինն եր ուսուցանում, վոր «առանց հեղափոխական թեորիայի չի կարող լինել յեվ հեղափոխական շարժում»:

Մարքսիզմի բոլոր մեծ թեորետիկները միշտ հսկայական նշանակություն են տվել թեորիային, արդարացիորեն տեսնելով նրա մեջ պրոլետարիատի դասակարգային պայքարի անփոխարինելի դերը: Ահա թե ինչու անհրաժեշտ է ձգտել, վորպեսզի գոնե իր հիմնական գծերով մեր թեորիան բանվոր դասակարգի սեփականությունը դառնա: Մարքսիզմը պիտի դառնա վոչ չ բանվոր դասակարգի աշխարհայացքը. նա պիտի դուրս մղի բանվոր դասակարգի գիտակցությունից կրոնական բնույթ կրող անցյալի բոլոր նախապաշարունակներն ու միացորդները: Մարքսիզմը մեր ժամանակների

*) Ի միջի այլոց, ընկ. Վահանյանը ինձ հաղորդեց, վոր համապատասխան քայլեր են նախաձեռնված թարգմանելու մարքսիզմի կլասիկների աշխատությունները հայերեն լեզվով: Դա չափազանց ուրախալի յերեվոյթ ե:

րում միակ ուսմունքն է, վոր կանգնած է գիտութեան բարձունքի վրա: Մարդկային պատմութեան մեջ առաջին անգամ գիտական աշխարհայացքը դառնում է մասսաների, իսկական ժողովրդի աշխարհայացք: Այդ փաստն ինքնին խոշոր համաշխարհային—պատմական նշանակութիւն ունի: Նա բանում է իրենով առաջնակարգ կարեւորութիւն ունեցող կուլտուր-պատմական մի հեղաշրջում: Հասկանալի չէ, վոր լրիվ չափով այդ կուլտուրական հեղաշրջումը կկատարվի կոմունիստական հասարակութեան մեջ: Բայց անհրաժեշտ է ձգաել, վորպէսզի մարդկութեան առաջապահ ավանգարդը—պրոլետարիատը արդեն իսկ կատարի այդ հեղաշրջումն իր գիտակցութեան մեջ:

Մարքսիզմը մի ամբողջական աշխարհայացք է, վոր ընդգրկում է յե՛ւ թեորիան, յե՛ւ պրակտիկան, յե՛ւ բնութիւնը, յե՛ւ հասարակութիւնը: Այդ աշխարհայացքը այլ կերպ բնութագրվում է պիտիւեկտիքական մատերիալիզմի անունով: Մարքսիզմը—դա գիտելիութեան մատերիալիզմն է: Յե՛ւ վորքան էլ ռեվոլյուցիոնիստները ջանք թափեն մատերիալիզմը փոխել իդեալիզմով, իսկ հեղափոխական գիտելիութեան խաղաղ եվոլյուցիոնիզմով, կամ թէ «կրիտիցիզմի» մեթոդով, այնուամենայնիւ գիտելիութեան մատերիալիզմը կանգուն կմնա, իբրեւ պրոլետարիատի աշխարհայացք, վորովհետեւ գիտութիւնը յե՛ւ կյանքն ամեն որ հաստատում են նրա ճշտութիւնը: Գիտական կամ մետաֆիզիքական մատերիալիզմին հակառակ, գիտելիութեան մատերիալիզմն իր կենտրոնական պրոբլեմն է համարում իրականութեան հեղափոխական փոփոխումը: Ուստի Մարքսը յե՛ւ Ենգելսը ուսուցանում էյին, վոր մատերիալիզմը—դա թեորետիքական կոմունիզմն է, իսկ կոմունիզմը—պրակտիքական—մատերիալիզմը: Այս մի քանի բառերի մեջ զարմանալի պարզութեամբ բնորոշված է մարքսիզմի կամ գիտելիութեան մատերիալիզմի վողջ ելութիւնը:

Լենինը, Մարքսի յե՛ւ Ենգելսի նման, գիտելիութեան մատերիալիստ էր: Մատերիալիստական գիտելիութեային Լենինը տիրապետում էր կատարելութեամբ յե՛ւ այն կիրարկում էր զարմանալի վարպետութեամբ. հենց մատերիալիստական գիտելիութեան նրան զարձրեց խոշորագույն քաղաքական առաջնորդ, տակտիկ յե՛ւ ստրատեգ: Պայմանների յե՛ւ յալ հաշվետման հիման վրա մանկութիւնը յե՛ւ նախատեսանելու բնորոշակութիւնները—հատուկ էյին Լենինին մեծագույն չափով: Գծախտաբար, Լենինի գործունեութեան այդ կողմը մեր շարադրութեան խնդիրը չի հանդիսանում: Մենք հարկադրված էյինք այստեղ սահմանափակվել միայն տեսական—իմացարանական բնույթ կրող այն հիմնական փիլիսոփայական պրոբլեմներով, վորոնք շարահյուսված են Լենինի կողմից նրա «Մատերիալիզմ յե՛ւ եմպիրիոկրիտիցիզմ» գրքում: Ուստի յես համարում եմ, վոր այս բոշոյութում կատարված է միայն աշխատանքի կեսը: Հիշված գրքում Լենինը մեր առջեւ հանդես է գալիս, վորպէս «մարանչող մատերիալիստ», վորը բազմակողմանի քննադատութեան է յենթարկում մարքսիստների շրջանում գոյութիւն ունեցող բոլոր իդեալիստական հոսանքները: Այդ գրքի մեջ Լենինը կատարել է խոշոր աշխատանք՝ մատերիալիզմի տեսակետից վերամշակելով բնագիտութեան գաղափարում կատարված նորագույն նվաճումները: Յե՛ւ ամեն մի մարքսիստ, վորը հետաքրք-

քրվում է աշխարհայացքին վերաբերող հարցերով, անպայման պէտք է դասական այլ աշխատութիւնների կողքին ուսումնասիրի յե՛ւ Լենինի գրքի բնագիրը: Յե՛ւ իմ այս բոշոյութը կաջակցի ընկերներին՝ յուրացնելու մարքսիզմի փիլիսոփայական գաղափարները յե՛ւ մասնավորապէս Լենինի գրքի բովանդակութիւնը գոնէ մի փոքր մասով, յես չափազանց ուրախ կլինեմ: Մակայն հույս ունենանք, վոր հայ ընկերները հոգ կտանեն թարգմանելու իրենց լեզվով ինչպէս Լենինի, Նուխպէս յե՛ւ Մարքսի, Ենգելսի ու Պլեխանովի աշխատութիւնները:

Ա. ԳԵՐՈՐԻՆ

16 հուլիսի, 1924 թ.

ԼԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՄԱՐՏՆՁՈՂ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏ

I

Հանձինք լենինի գերեզման իջավ վոչ միայն մեծ ապստամբը, վոչ միայն առաջնակարգ պոլիտիկը, վոչ միայն բանվոր դասակարգի հանճարեղ առաջնորդը, այլև մի նշանավոր մտածող—մարտնչող մատերիալիստ:

«Փիլիսոփաները միայն այս կամ այն կերպ բացատրել են աշխարհը, —ասում է Մարքսը, —սակայն խնդիրն այն է, վոր այն պետք է փոխել»։ Հին տիպի փիլիսոփան, վորը բացատրում է աշխարհը, սխալմամբ է հնարում, հայեցողաբար է վերաբերվում դեպի կյանքն ու իրականությունը, սկեպտիկորեն ենայում կյանքի փոթորկոտ հորձանքի վրա և դատապարտում են իրականությունը, ինչ չափով վոր առ չի պարփակվում իր կառուցած սխալման մեջ, —այս տիպի մշտածողը պատկանում է հին աշխարհին։ Աշխարհը բացատրելու բնագավառում այդ մտածողները յերբեմն խոշորագույն հայտնագործումներ են արել, սակայն նրանց միտքն ու կամքը համարյա թե յերբեք ողակված չեն յեղել անքակտելի և յերկաթե միասնությունում:

Բանվոր դասակարգի ազատագրական մեծ շարժումը յերեվան է հանում մի նոր տիպ հեղափոխական մտածողների, վորոնք իրենց համար նպատակ են դնում վոչ միայն աշխարհի իմացությունը, այլև նրա վերակառուցումը։ Լենինը հենց այդպիսի հեղափոխական մտածողի ցայտուն տիպ է, վորի կամքն ու միտքը վոչ թե իրարից խույս են տալիս դեպի տարբեր կողմեր, այլ դիալեկտիք միասնություն են կազմում։ Այս տեսակետից Լենինը լիովին արտացոլել է բանվոր դասակարգի «բնությունը», վորի իդյուոլոգն ու առաջնորդն է նա հանդիսացել։ Իր ամբողջ տիտանային կամքն ու ցայտուն միտքը նա նվիրեց բանվոր դասակարգի ազատագրման գործին։ Վորպես այդպիսին, Լենինը իրավ վոր չունի իրեն հավասար մեկը — սոցիալիզմի ամբողջ միջազգային պատմության մեջ։

Լենինը սոսկ պրակտիկ-հեղափոխական, եմպիրիկ չէր։ Բանվորական շարժման ամեն մի ետապը նա իմաստավորում էր մարքսիզմի ընդհանուր թեորիայի տեսակետից, վերցնելով այդ թեորիան իր ամբողջությամբ։ Մարքսիզմը, վորպես աշխարհը փոխելու թեորիա, այն լծակն է, վորի ոգնությունը Լենինը ձգտում էր հեղաշրջել ամբողջ աշխարհը։ Եմպիրիկ-պրակտիկը գործում է, այս-

պես ասած, ըստ պատահմունքի։ Նա չի տեսնում յերեվոլյուցների ամբողջությունը, նրանց ներքին կապն ու որինաչափությունը։ Մարքսի կամ Լենինի տիպի հեղափոխական մտածողը չի բավարարվում պատահական կամ մասնակի փաստերով, յերեվոլյուցների մակերեսով, այլ ձգտում է իր գործունեության մեջ հիմնվել յերեվոլյուցների «եյություն» վրա, նրանց որենքների վրա։ Հասարակության գործելու և զարգացման որենքները — նրա ներքին լծակներն ու զսպանակներն են։ Իրականությունը գտնվում է անընդհատ փոփոխության և զարգացման վիճակի մեջ, իսկ զարգացումը կատարվում է այդ ներքին որենքների համաձայն։ Մարդկությունը «կույր» է և խարխափում է խավարի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ այդ որենքները նրա համար գաղտնի յեն մնում։ Սակայն մարդկությունը «տեսներ» է սկսում, յերբ իմանում է այդ որենքները։ Մարդկությունը դառնում է «ազատ», յերբ նա տիրապետում է հասարակական եվոլյուցիայի կույր անհրաժեշտությունը։ Մարքսի թեորիան հենց մի այնպիսի ուսմունք է, վոր հայտնագործել է այդ որենքները։ Մարքսը մշակել է հասարակական-տնտեսական ֆորմացիայի հասկացողությունը։ «Յելակետ ընդունելով այն փաստը, վոր հիմնական» է ամեն մի մարդկային հանրակեցության համար — կյանքի միջոցներ հայթայթելու յեղանակը, — նա (Մարքսի թեորիան Ա. Դ.) կապեց դրա հետ մարդկանց միջով յեղած այն հարաբերությունները, վորոնք կազմակերպվում են կյանքի միջոցներ հայթայթելու տվյալ յեղանակների ազդեցության տակ, և այդ հարաբերությունների (ըստ Մարքսի տերմինոլոգիայի՝ «արտադրական հարաբերությունների») սխալման մեջ նա մատնանշեց հասարակության այն հիմքը, վորը պատվում է քաղաքա-իրավական ձևերով և հասարակական մտքի հայտնի հոսանքներով։ Արտադրական հարաբերությունների այդպիսի յուրաքանչյուր սխալման, Մարքսի թեորիայի համաձայն, հատուկ սոցիալական որգանիզմ է, վոր ունի իր ծագման, գործելու, բարձր ֆորմայի փոխանցվելու, մի ուրիշ սոցիալական որգանիզմի վերափոխվելու իր հատուկ որենքները»*)։

Սոցիալական աշխարհի բացատրություն թեորիան, ինչպես արտահայտվում է Լենինը, կայանում ենրա ծագման, գործելու, բարձր ֆորմաների փոխանցվելու, մի ուրիշ սոցիալական որգանիզմի վերափոխվելու հատուկ որենքների հայտնագործման մեջ։ Առանց թեորիայի, — իհարկե, ճիշտ և որյեկտիվ — ճշմարիտ թեորիայի, — չկա

*) Н. Ленин, "За 12 лет", էջ 57.

համաչափ, գիտակցական, պատմական և հասարակական գործունեություն։ Այդպիսի թեորիան անհրաժեշտ նախադրյալ է՝ գիտակցորեն ներգործելու պատմական պրոցեսի վրա։ Սակայն բավական չէ դեռ հայտնագործել վերոհիշյալ որենքնեքնը, չնայած այդպիսի հայտնագործումը ինքնըստինքյան հոյակապ մի գործ է։ Անհրաժեշտ է նույնպես, հենվելով այդ հայտնագործած որենքնեքնի վրա, ցույց տալ փոխոթյունների յեղանակները, իրագործել այդ փոփոխությունը և մի «սոցիալական որգանիզմը» մի ուրիշ փոխելու։ Կարելի չէ ունենալ սքանչելի թեորիա, սակայն իրականությունը վերաբերվել հայեցողաբար — «փիլիսոփայորեն»։ Վորպեսզի փոխել իրականությունը, անհրաժեշտ է, վոր ինքը թեորիան դառնա իրականություն, ակտիվ — ստեղծագործական ուժ, — մի խոսքով թեորիան պրակտիկայի փոխվի։ Մարքսիզմը ինքը մյուսներից բոլորովին տարբեր մի թեորիա չէ, կամ փիլիսոփայական աշխարհայացք, վոր պահանջում է պրակտիկայի կիրարկումը թեորիայի մեջ և թեորիայի կիրարկումը պրակտիկայի մեջ։ Մարքսիզմին ոտար և թեորիայի և պրակտիկայի անջատումը։ Թեորիայի և պրակտիկայի դիալեկտիկական միասնությունը պահանջում է, վորպեսզի թեորիան լինի «պրակտիկական», իսկ պրակտիկան լուսաբանվի թեորիայով, դառնա թեորիա։ «Մարքսի մոտ, — ասում է Լենինը, — ուսուպիզմի կաթիլ անգամ չկա այն իմաստով, վոր նա չի հնարում, յերեվակայորեն չի ստեղծում, «նոր» հասարակությունը։ Վոչ, նա ուսումնասիրում է, վորպես բնապատմական պրոցես, նոր հասարակության ծնունդը հնից, ֆորմաների փոխանցումը՝ դիմելով յերկրորդից դեպի առաջինը։ Նա վերցնում է մասսայական պրոլետարական շարժման փաստական փորձը և աշխատում է նրանից գործնական դասեր ստանալ։ Նա «ուսանում» է Կոմունայից, թե ինչպես մեծ հեղափոխական մտածողները չեյին վախենում սովորել ճշող դասակարգի մեծ շարժումների փորձից, յերբեք չըվերաբերվելով նրանց պեղանտ «բարոյախոսություն»*)։ Լենինի խոսքերը Մարքսի մասին միանգամայն կիրառելի չեն իրեն՝ Լենինի նկատմամբ։ Ավելին. նրանք կիրառելի չեն Լենինի վերաբերյալ ավելի մեծ չափով, վորովհետև նա հնարավորություն ուներ կիրառել իր թեորիան մի մեծ յերկրում, այն էլ միջազգային արտաքու կարգի բարդ պայմաններում, և դրանով էլ նա տարբերվում է Մարքսից։ Պետք է ասել, վոր Լենինը կարող եր, իհարկե, սխալներ

*) Ленин т. XIV, Государство и Революция 42 335.

գործել, վորի մասին նա ինքը վոչ պակաս անգամ է ասել, սակայն դրանք առանձին տեսակի սխալներ եյին։ Որթողոքս մարքսիստ լինելով, Լենինը գերծ եր գործարիականությունից։ Մարքսիզմն ուսուցանում է, վոր թեորիան ինքնին, ինքն իր մեջ արդարացումն և կրիտերիա ունեցող բացարձակ ճշմարտության իմաստով չունի ինքնամփոփ արժեք, կամ ինքնուրույն նշանակություն։ Լավ յուրացրած մարքսիզմի վոգին, կատարելապես տիրապետած նրա մեթոդին, Լենինը չեր կաշում վերացական թեորիաների, չեր յերկրպագում ֆետիշների։ Նա անողոք կերպով դեն եր շարտում այդ թեորիաները, հենց վոր համոզվում եր նրանց «վերացականություն» այսինքն՝ անկենսականության մեջ։ Մարքսի նման, Լենինը ուսանում է «մասայական պրոլետարական շարժման փորձից» և նրանից գործնական դասեր է հանում՝ թեորիայի մեջ կիրարկելու նպատակով։ Թեորիան ամենից առաջ պետք է կարողանա պրակտիկայի փորձմանը դիմանալ։ «Մարդը պետք է պրակտիկայով ապացուցի իր մտածողության ճշմարտությունը»։ Ինքը թեորիան ինքնուրույն մի բնագագավառ չէ։ Առաջնությունը պատկանում է պրակտիկային։ Պրակտիկայի փորձմանը դիմացող թեորիան որչեպիվ ճշմարտություն է։ Չպետք է սահմանափակվել, ուսուցանում եր Մարքսը, մեր գլխում գոյություն ունեցող որչեպիներով, այլ անհրաժեշտ է գործ ունենալ կոնկրետ որչեպիների հետ։ Ուստի և իրականությունը անհրաժեշտ է դիտել «մարդկային գործունեության ձևով, պրակտիկայի ձևով»։ Այսպես՝ թեորիան ստանում է բոլորովին յուրահատուկ բնույթ, քան նախկին մտածողների մոտ։

Ով ամենից լավ է հասկանում իրականության շարժիչ ուժերը, նա էլ ուրիշներից ավելի հեռու յե տեսնում։ Նա տեսնում է այն ուղին, վորով ընթանում է իրականությունը, նա ընդունակ է նախատեսել ապագան։ Սակայն, վորպես ազատագրական շարժման թեորիա, մարքսիզմը պահանջում է վոչ թե անկիրք և հայեցողական վերաբերմունք դեպի իրականությունը, այլ հենց իրեն իրականության փոփոխությունը, համաձայն հասունացած որչեպիով հնարավորությունների։ Լենինի անձնավորության մեջ միաժամանակ միացած եյին հեղափոխական մտածողն ու կյանքի կերպարանափոխողը։ Հեղափոխական մտածողները ներկայացնում են մի նոր, հատուկ տիպ մարդկանց, վորոնց դուրս է քաշում պրոլետարիատի պատմական շարժումը, և վորոնք զանազանվում են նրա-

նով, վոր իրենց անմիջական նպատակն են դնում աշխարհի փոփոխութեանը, կյանքի կերպարանափոխումը: Այդ պատճառով մարքսիզմը վոչ միայն թեորիա չէ, այլ պրոլետարիատի ազատագրական շարժման պրակտիկան, վոչ միայն իրականութեան բացատրութիւնն է, այլևս նրա փոփոխումը: Խոսելով Լենինի մասին, վորպէս կյանքի կերպարանափոխողի, մենք մի րոպե անգամ չենք մոռանում այն հատուկ որոյնքով պայմանները, վորոնք հնարավոր են դարձրել նրա գործունեութիւնը: Լենինը Մարքսի հանճարեղ աշակերտն է և հետեւորդը: Անկասկած է, վոր Լենինի ամբողջ ուժը կայանում էր, բացի իհարկէ նրա անհատական հանճարեղութիւնից, մարքսիզմը պրակտիկայում, կյանքում ճիշտ կիրարկելու մեջ: Լենինի ուժը մարքսիզմի մեջ է: Լենինիզմը հեղափոխական մարքսիզմն է, ինչպէս այդ հասկանում և կիրարկում էր Լենինը: Մարքսն ամենից առաջ հանճարեղ թեորետիկ է, մի վիթխարի միտք, վոր հարյուրավոր տարիներ առաջ էր տեսնում: Բուրժուազիան այդպիսի մտածողներ յերեւման չի բերել և յերբեք չի ունեցել: Նա ունեցել է շատ խոշոր հանճարեղ մտածողներ, վորոնք կառուցել են համապարփակ փիլիսոփայական սխառեմներ. նրանք ընդհանրապէս շատ բան են արել գիտութեան համար: Սակայն նրանց սխառեմները կրում են ակադեմիզմի կնիքը: Այդ մտածողներն ու գիտնականները թափանցել են ամենահեռավոր յերկնային մարմինները, մինչև ատոմի խորքերը, բայց հասարակա-պատմական գիտութեան համար նրանք արել են համեմատաբար շատ քիչ բան: Այստեղ նրանք յեղել են կոպիտ եմպիրիկներ, վորովհետեւ պատմութիւնը դեմ է նրանց: Նրանք պետք է սահմանափակելին և կանգնեցնելին պատմական զարգացման ընթացքը: Պրոլետարական հեղափոխական մտածողների ամբողջ հոգեկան կարողութիւնը կենտրոնացել է մարդկային հասարակութեան տիրապետման, նրա վերակառուցման, նրա շարժիչ ուժերի իմացութեան վրա: Մարքսը վեր հանեց հասարակական գիտութիւններն անհասանելի բարձրութեան, ճշգրիտ գիտութեան բարձրութեան: Մարքսիզմը պոլիտիկան գիտութեան վերածեց: Լենինը այս դպրոցի հանճարեղ պոլիտիկն էր: Նրա համար գիտական պոլիտիկայի թեորետիքական բազան մարքսիզմն էր, ուստի պետք չէ հակադրել Լենինիզմը—մարքսիստական պոլիտիկան և տակտիկան—մարքսիզմին, վորպէս փիլիսոփայական, պատմական և տնտեսական թեորիայի, վորի վրա կառուցվել է Լենինի պոլիտիկան և

տակտիկան, այլ պետք է տեսնել նրանում մարքսիզմի կիրարկումը և հետագա զարգացումը: Լենինիզմն իր հերթին հարստացրեց մարքսիզմը, այսինքն՝ մարքսիստական գիտութիւնը, մարքսիստական թեորիան, վոր դեռ չէր չի մարսել և չի իմաստավորել ամբողջ «Լենինյան» փորձը: Սակայն անկասկած է, վոր Լենինը լինելով Մարքսի հավատարիմ, որթողքս աշակերտը, չափազանց շատ բան է արել մարքսիզմի զարգացման և խորացման համար:

Հասարակութիւնը վորոշ դեպքում կարող է եքսպերիմենտի առարկա լինել: Բնութիւնը հակադրված է մեզ, վորպէս ինչ-վոր ոտար բան: Բնութեան մեջ եքսպերիմենտները հնարավոր են միայն սահմանափակ չափերով: Հասարակական կյանքում դրութիւնն այլ է: Այստեղ մենք մարդիկ ամենից առաջ հանդիսանում ենք ակտիվ գործիչներ և ստեղծագործողներ: Չե՞ վոր պատմութիւնը կատարվում է մարդկանց միջոցով, մինչդեռ բնութիւնը մարդիկ չեն ստեղծում: Լենինը խոշոր հասարակական եքսպերիմենտատոր է: Նա ամեն մի տեսական դրութիւնը յենթարկում էր գործնական փորձման:

II

Լենինի ամբողջ գործունեութիւնը հասկանալու համար անհրաժեշտ է անցնել նրա աշխարհայացքի և մեթոդի ընդհանուր հիմունքներին: Լենինը մարքսիստ էր, այսինքն՝ դիալեկտիքական մատերիալիստ: Նրա համար, ինչպէս և Մարքսի համար մտածողութիւնը պրակտիկայի միջոցով ապացուցում է իր ճշմարտութիւնը: «Կյանքի, պրակտիկայի տեսակետը,—ասում ենք,—պետք է լինի իմացաբանութեան առաջին և հիմնական տեսակետը: Յեւ նա անխուսափելիորեն հանգում է մատերիալիզմի, դեն շարտելով պրոֆետորական սխալաստիկայի անվերջ մտահնարումները: Իհարկէ, դրա հետ չպիտի մոռանալ, վոր պրակտիկայի կրիտերիան յերբեք չի կարող եյապէս լրիվ կերպով հաստատել, կամ բացասել մարդկային այս կամ այն պատկերացումը: Այդ կրիտերիան նույնպէս այնքան «անվորոշ է», վորպէսզի թույլ չտա մարդու գիտելիքներին «աբսոլյուտի» փոխվելու, և միյնալու ժամանակ այնքան վորոշ է, վորպէսզի անողորմ պայքար մղի իդեալիզմի և ագնոստիցիզմի բոլոր տարբեր տեսակների դեմ: Յեթե այն, ինչ հաստատում է մեր պրակտիկան՝ միակ, վերջին, որոյնքով ճշմարտութիւնն է,—հապա այստեղից բխում է, վոր ճշմարտութեան միակ ուղին պիտի ճանաչել գիտութիւնը, վոր կանգնած է մատերիալիստական

տեսակետի վրա*)։ Հետո նա խոսում է Մարքսի թեորիայի մասին նույն վոգով։ «Բայց վորովհետև պրակտիկայի կրիտերիան, այսինքն՝ բոլոր կապիտալիստական յերկրների զարգացման ընթացքը վերջին տասնամյակում—ապացուցում է Մարքսի ամբողջ հասարակա-տնտեսական թեորիայի ճշմարտությունը ամբողջապես, այլ վոչ թե նրա այս կամ այն մասը, այս կամ այն ձևակերպումը, ապա պարզ է, վոր դատել մարքսիստների «գոգմաարկի» մասին, նշանակում է աններելի զիջում անել բուրժուական եկոնոմիային. միակ յեզրակացությունը, վոր բղխում է մարքսիստների կողմից բաժանվող այն կարծիքից, թե Մարքսի թեորիան որչեղտիվ ճշմարտություն է, հետեվյալն է. —գնալով մարքսյան թեորիայի ուղիով, մենք ավելի ու ավելի կմոտենանք որչեղտիվ ճշմարտության (յերբեք չսպառնելով այն)։ գնալով ամեն տեսակ ալ ուղին երով, մենք վոչնչի չենք կարող հանգել, բացի ստից և խառնաշփոթից»**):

Թափանցեք, ընթերցող, այս յերկու ցիտատների մեջ։ Այստեղ Լենինը պարզ և համառոտ կերպով ձևակերպում է մարքսիստական իմացաբանության հիմնական միտքը, վոր կազմում է նրա սեփական պրակտիք գործունեություն տեսական ֆունդամենտը։ Յեվ ի՞նչ ենք մենք տեսնում։ Լենինը Ֆեյերբախի, Մարքսի, Ենգելսի և Պլեխանովի ուսմունքի համաձայն, ընդգծում է ամենից առաջ մարդկային պրակտիկան իր ամբողջությամբ իմացաբանության հիմքում դնելու անհրաժեշտությունը։ Այս մոմենտը կազմում է մարքսիստական փիլիսոփայության, այսինքն՝ մատերիալիզմի բնորոշ կողմը, մինչդեռ իդեալիզմը «դնում է և լուծում սուբյեկտիվության և որչեղտիվության, աշխարհի իրական և վոչ իրական լինելու հարցերը միայն թեորետիք տեսակետից», ինչպես արտահայտվում է Ֆեյերբախը։ Իդեալիստական փիլիսոփայությունը ճշմարտության կրիտերիան փնտռում է հենց մտքի մեջ։ Իսկ մարքսիստական փիլիսոփայությունը դիմում է պրակտիկային։ Այդ պատճառով իդեալիզմը միշտ գործ ունի կենսազուրկ արստրակցիաների հետ, մինչդեռ մատերիալիզմը ամենից բարձր է դասում կյանքի, պրակտիկայի տեսակետը։ Մատերիալիզմը և իդեալիզմը՝ յերկու դասակարգային իդեոլոգիաների արտահայտություններն են, ըստ վորում իդեալիզմը արտադրության անմիջական պրոցեսից, արտադրական պրակտիկայից կտրված դասակարգի իդեոլոգիան է մա-

տերիալիզմն արտադրող դասակարգի, այսինքն՝ ըստ եյություն, պրակտիկ դասակարգի աշխարհագրացողություն, աշխարհամբռնողություն արտահայտությունն է։ Իդեալիզմի համար ճշմարտ-մարդկային գործունեությունը միայն թեորետիք գործունեությունն է, մտքի գործունեությունը մինչդեռ մարքսիստի համար պրակտիկ գործունեությունն է ճշմարտ մարդկային գործունեությունը։ Մատերիալիստ Ֆեյերբախը ասում էր նույնիսկ, վոր փիլիսոփայությունը, համեմատած պրակտիկայի հետ, «անհրաժեշտ չաբիք»*) և։

Այսպես Լենինը իմացաբանության հիմքում դնում է մարդկային ամբողջ պրակտիկան։ Սակայն այստեղ անհրաժեշտ է շեշտել, վոր

*) Այս առթիվ թող թույլատրվի մեզ մատնանշել այն բարձր յեվ մեր տեսակետից արդարացի գնահատումը, վոր տվել է Լենինը Ֆեյերբախին։ Փիլիսոփայության մեջ Լենինը, իհարկե, Պլեխանովի «աշակերտն» է, այդ մասին նա հաճախ է ասել։ Սակայն այն հանգամանքը, վոր նա, ինչպես յեվ մենք բոլորս սովորել ենք Պլեխանովից, չխանգարեց Լենինին ինքնուրույն կերպով մոտենալ մի շարք հարցերի յեվ մի քանի եյական կետերում «ուղղել» Պլեխանովին։ Այս յերկու մտածողները հավասար չափով թանգ են մեր սրտին։ Մենք չենք պատկանում նրանց թվին, ովքեր ժխտում են Պլեխանովին հանուն Լենինի, կամ Լենինին՝ հանուն Պլեխանովի։ Վորոշ իմաստով նրանք լրացնում են միմիանց։ Պլեխանովը ամենից առաջ թեորետիկ է։ Իսկ Լենինը, նախ յեվ առաջ պրակտիկ է, պոլիտիկ, առաջնորդ։ Սակայն նրանք յերկուսն էլ չափազանց շատ բան են արել մեր աշխարհայացքի զարգացման յեվ խորացման համար։ Դառնալով Լենինին, մենք ուշադրություն ենք դարձնում այն բանի վրա, վոր մինչդեռ Պլեխանովը 1908 թ. լույս տեսած իր «մարքսիզմի հիմնական խնդիրները» դրքում կանգնած էր այն տեսակետի վրա, թե Ֆեյերբախը չի հասկանում «պրակտիկ - քննական գործունեությունը», Լենինը իր «մատերիալիզմ յեվ եմպիրիոկրիտիցիզմ» գրքում, վոր լույս տեսավ 1909 թվին, վորոշակի կանգնած էր հակառակ տեսակետի վրա։ Այդ խնդրում Լենինը Ֆեյերբախին չէր բաժանում Մարքսից ու Ենգելսից։ Յեվ Ֆեյերբախը, —ասում է Լենինը, Շուլցի, Ֆիխտեյի ու Մախի տեսակետով—Մարքսի յեվ Ենգելսի նման, իմացաբանության հիմնական հարցերում անթույլատրելի «թուշք», է գործում դեպի գործնականը։ «Ֆեյերբախը իմացաբանության հիմքն է դնում մարդկային ամբողջ պրակտիկայի հաշվեհաշվում»։ (Собр. соч. т. X № 114). Իդեալիզմից դեպի մատերիալիզմը՝ հողվածում (1915 թվ.) Պլեխանովը Ֆեյերբախի վերաբերմամբ իր տեսակետը փոխեց անկասկած Լենինի ազդեցության տակ։ Ավելի հետաքրքրական է այն, վոր Պլեխանովը, յերբ հաստատում է, վոր «Ֆեյերբախյան փիլիսոփայության վոգուն միանգամայն համապատասխանում է այն միտքը, թե փիլիսոփայական թեորիայի անջատումը պրակտիք գործունեությունից կործանիչ ազդեցություն ունի նրա վրա», հենվում է այն տեղի վրա, վոր մեջբերել է Լենինը։

*) Ленин, Собрание сочинений, т. X № 115.

**) Նույն տեղը, № 115.

Լենինը պրակտիկայի պրիմատը չի հասկանում այն մտքով, ինչպես այդ հասկանում են մախիստներն ու պրագմատիստները: Մարքսիզմի իմացաբանությունն այս հիմնական յեղակետի այդպիսի սխալ ըմբռնողությունն ու մեկնաբանումն ենք վոչ միայն մախիստների մոտ: «Իմացությունը կարող է բխողգիտական ոգտակար լինել,—ասում է Լենինը, առարկելով մախիստներին,—ոգտակար լինել մարդու պրակտիկայում, կյանքի տեսակի պահպանության համար միայն այն ժամանակ, յեթե նա արտացոլում է որեկտիվ, մարդուց անկախ ճշմարտությունը: Մատերիալիստի համար մարդկային պրակտիկայի «հաջողությունը» ապացուցում է մեր մտապատկերների համապատասխանությունը մեր կողմից ըմբռնվող իրերի որեկտիվ բնությունը: Սուլիպիստի համար «հաջողությունը» այն ամենն է, ինչ ինձ պետք է պրակտիկայի մեջ, վորը կարելի չեղիտել իմացաբանությունից անջատ: Յեթե պրակտիկայի կրիտերիան մտցնենք իմացաբանության հիմքը, ապա անխուսափելիորեն մատերիալիզմ ենք ստանում,—ասում է մարքսիստը: Պրակտիկան թող լինի մատերիալիստական, սակայն թեորիան այլ հարց է,—ասում է Մախը: Մարքսիզմի և մատերիալիզմի ըմբռնողությամբ բուրժուական գոհիկ պրակտիցիզմն ընդհանուր վոչինչ չունի, իհարկե, պրակտիկայի հետ: Ինչպես է Լենինը հասկանում մարդկային պրակտիկայի հաջողությունը: Ինչպես է նա հասկանում մեր մտապատկերների համապատասխանությունը որեկտիվ իրականությունը: Ինչպես մեր մտապատկերները և հասկացողությունները որեկտիվ իրականության բացարձակ արտացոլումը չեն, այդպես էլ մարդկային պրակտիկայի, մարդկային գործունեության հաջողությունը որեկտիվ ճշմարտության մոտենալն է միայն: Հարցի այդպիսի ճիշտ և խոր-մարքսիստական ըմբռնումը վկայում է, վոր Լենինի աշխարհայացքի մեջ բացակայում է վորեկտիվ գոգմատիզմ և գոկտրինականություն: «Գնալով մարքսյան թեորիայի ուղիով, մենք ավելի ու ավելի յենք մոտենում որեկտիվ ճշմարտության, յերբեք չսպառելով այն»: Հենց այս պատճառով Մարքսի թեորիան որեկտիվ ճշմարտություն է: Այն, ինչ հաստատում է մեր պրակտիկան, թե գուտ տեսական և թե հասարակական գործունեության բնագավառներում, այդ է միակ որեկտիվ ճշմարտությունը: Չկա այլ ուղի դեպի որեկտիվ ճշմարտությունը: Մակայն Լենինը խոսում է հենց ուղիի, մեթոդի մասին, լավ հասկանալով, վոր ամեն մի տվյալ ճշմարտություն վոչ

թե բացարձակ, այլ հարաբերական ճշմարտություն է: Ուստի կարելիորն ուղին է, դեպի ճշմարտություն տանող ճիշտ ուղղությունը: Մենք յերբեք չենք տիրապետում բացարձակ ճշմարտությանը: Մեր իմացության և մեր գործունեության մեջ մենք միայն մոտենում ենք նրան: Պրակտիկայի կրիտերիան բավականաչափ այն մոտենում ենք նրան: Պրակտիկայի կրիտերիան բավականաչափ «անվորոշ» է, վորպեսզի գերծ պահի գոգմատիզմից ու բացարձակ տեսականներից, և նա բավականաչափ վորոշ է, բացասելու ամեն տեսակի իդեալիզմ ու անողորմաբար պայքարելու նրա դեմ: Ուստի Լենինն իր պրակտիկ-հեղափոխական գործունեության մեջ միշտ վրձնական նշանակություն էր տալիս վորոշ լոգոնգներին, քաղաքական ձեվերին և այլն փորձմանը պրակտիկայում: Վորոշ ֆորմաներ որինակ, դեմոկրատիայի կամ կոնստիտուցիայի ֆորմաները, վորպես «իյուզիաներ», վոր ճշմարիտ են զարգացման միաստիճանի վրա, բայց խաբուսիկ և սխալ՝ զարգացման բարձր աստիճանի վրա—կարելի չե հաղթահարել վոչ թե տեսականորեն, այլ գործնականապես, նրանց փորձման յենթարկելու միջոցով: «Դեմոկրատիայի զարգացումը մինչեւ վերջը, այդպիսի զարգացման ձեվերի վորոնումը, պրակտիկայում նրանց փորձման յենթարկելն և այլն, այս բոլորը կազմում է սոցիալական հեղափոխության համար մղվող պայքարի ինդիկներից մեկը»^{*)}: Լենինը մի այլ տեղ ընդգծում է բուրժուական պարլամենտարիզմի պատմական սահմանափակությունը ու պայմանականությունը: Մարքսիստների համար լամենտարիզմը, ձեվական դեմոկրատիան և պետությունը ընդհանրապես ռեալականություններ են, վորոշ աստիճաններ ու յեղանակներ, սակայն դրա հետ միասին ֆորմալ հավասարության և վարձուստրկության միջով յեղած հակասությունը կբացի մասսաների աչքերը, վորոնք ապրում են այդ պատմական փորձը, նրա հետ կապված իրենց բոլոր տանջանքներով: Մասսաները պատմական զարգացման ընթացքում պետքե գիտակցեն և գիտակցում են այդ բոլոր ձեվերի պատմական սահմանափակությունը, և նրանք, որեկտիվ տեսական զարգացման հետ, վորն ստեղծում և սրում է բոլոր հակասությունները, մոտենում են սոցիալիզմին, վորպես որեկտիվ իրականություն:

*) Ленин т. XIV, էջ 361:


III

Սակայն ի՞նչ է որյեկտիվ ճշմարտությունը: Յեւ ի՞նչ հարաբերություն կա բացարձակ ճշմարտության ու հարաբերական ճշմարտության միջեւ: Նշանավոր չափով մեզ արդեն հայտնի յե լենինի պատասխանը այս հարցերին: Բայց անհետաքրքրական չէր լինի ավելի մանրամասն կանգ առնել այդ հարցերի վրա, մանավանդ վոր այդ առթիվ ժամանակակից շատ մարքսիստ գրականագետների շրջանում շփոթ է տիրում:

Ինչպես հայտնի յե, Ա. Բոգդանովը պնդում է, վոր ճշմարտությունը միայն իդեոլոգիական ֆորմա յե: Այս հայացքի դեմ լենինը առարկում է, թե վորովհետեւ բացի մարդկային իդեոլոգիայից ուրիշ իդեոլոգիա չկա, հապա ուրեմն այս տեսակետից չի կարող որյեկտիվ, այսինքն՝ սուբյեկտից անկախ ճշմարտություն գոյություն ունենալ: Սակայն այս տեսակետի անհեթեթությունը ակնբախ է: Նախ այս տեսակետը հերքվում է միանգամայն ակնհայտնի փաստերով: «Բնագիտությունը,—ասում է լենինը,—թույլ չի տալիս կասկածելու, վոր ճշմարտություն է իր այն պնդումը, թե յերկիրը գոյություն ունի մինչեւ մարդկությունը: Մատերիալիստական տեսակետից սա միանգամայն հնարավոր է. արտացոլողից անկախ արտացոլվողի (վոր անկախ է արտաքին աշխարհը գիտակցելուց) գոյությունը մատերիալիզմի հիմնական նախատրվյալն է: Մատերիալիզմի այն պնդումը, թե յերկիրը գոյություն ունի մինչեւ մարդկությունը—որյեկտիվ ճշմարտություն է»^{*)}: Իսկ յեթե ճշմարտությունը փորձի կազմակերպող ֆորման է, կամ միայն իդեոլոգիական ֆորմա, ինչպես այդ պնդում են մախիստները և ուրիշները, ապա «չի կարող ճշմարիտ լինել այն պնդումը, թե յերկրի գոյությունը դուրս է մարդկային ամենմի փորձից»: Բնագիտությունը չի կապակցվում մախիզմի, պոզիտիվիզմի, եմպիրիոկրիտիցիզմի հետ: Մյուս կողմից, յեթե ճշմարտությունը մարդկային փորձը կազմակերպող ֆորմա յե լուր, հապա մեր փորձի սուբյեկտիվության և որյեկտիվության հարցը լուծելու վորյեվե կրիտերիա չկա: Յեթե այդպես նայել հարցին,—ասում է լենինը,—ուրեմն կաթոլիկությունը նույնպես ճշմարտություն է հանդիսանում: «Վորովհետեւ, անկասկած է, վոր կաթոլիկությունը մարդկային փորձը կազմակերպող ֆորմա յե»: Այս գրությունից մտածում են յեթե գտնել

^{*)} Ленин. X т., էջ 98

նրանով, վոր որյեկտիվություն ասելով հասկանում են հանրանշանակալիություն, հասարակական — կազմակերպված փորձ: Բայց միթե կրոնը հանրանշանակալիություն չունի: «Կրոնի ուսմունքը, ասում է լենինը,—ավելի մեծ չափով է հանրանշանակալի», քան գիտության ուսմունքը: Մարդկության մեծ մասը մինչեւ այսօր դեռ կողմնակից է առաջին ուսմունքին: Կաթոլիկությունը «հասարակականորեն—կազմակերպված, ներդաշնակված և համաձայնեցված» է իր դարեվոր զարգացմամբ. «պատճառական շղթայի» մեջ նա «տեղավորվում» է ամենամանկից երկրպագով, վորովհետեւ կրոնները ծագել են վոչ առանց պատճառի, նրանք ժամանակակից պայմաններում ժողովրդական մասսաների մեջ պահպանվում են վոչ թե պատահար, և փրկիսոփայության պրոֆեսորները կրոնին հարմարվում են միանգամայն «որինաչափորեն»: Յեթե այդ անկասկած հանրանշանակալի և բարձր-կազմակերպված հասարակա-կրոնական փորձը «ներդաշնակ չէ» գիտության «փորձին», հապա նշանակում է, վոր մեկի կամ մյուսի միջեւ կա սկզբունքային, արմատական տարբերություն: Այդ արմատական, սկզբունքային տարբերությունը ջնջվում է, յերբ ժխտում են որյեկտիվ ճշմարտությունը, ջնջվում է գիտության և ֆիդեյիզմի, այսինքն՝ գիտության և հավատի միջեւ յեղած տարբերությունը. կրոնը այդ դեպքում հենվում է միյեվնույն իմացաբանական հիմքերի վրա, ինչպես և գիտական իմացությունը: Այսպես, մարքսիստները, թեկուզ անգիտակցաբար, գիտական-փրկիսոփայական հիմք են դնում ֆիդեյիզմի և տերտերականության ներքո, ինչպես արտահայտվում է լենինը: Մատերիալիստական իմաստով, որյեկտիվ ճշմարտության հասկացողությունը խիստ սահման է գծում կրոնական և գիտական փորձի միջեւ: Նա չի ջնջում նրանց միջեւ յեղած սահմանը, այլ ընդհակառակը, նրանց միջեւ արմատական, սկզբունքային տարբերություն է սահմանում: «Յեթե գոյություն ունի որյեկտիվ ճշմարտություն (ինչպես մտածում են մատերիալիստները), յեթե բնագիտությունը, արտացոլելով արտաքին աշխարհը մարդու «փորձի» մեջ, նա՛ միայն ընդունակ է տալ մեզ որյեկտիվ ճշմարտություն, ապա անպայմանորեն ամեն տեսակի ֆիդեյիզմ ժխտվում է: Իսկ յեթե որյեկտիվ ճշմարտություն չկա, ճշմարտությունը, (ինչպես և գիտական ճշմարտությունը) միայն մարդկային փորձը կազմակերպող ֆորման է, ուրեմն հենց դրանով ընդունվում է տերտերականության հիմնական նախատրվյալը, դուռ է բացվում նրա առջեւ և տեղ



ե մաքրվում կրոնական փորձի «կազմակերպող ֆորմաների» համար»*):

Հասկանալի յե, վոր մարտնչող մատերիալիստ Լենինը չի կարող ամենափոքր զիջումն անգամ անել ամեն տեսակի ագնոստիկներին, ինչ զգեստով ել վոր նրանք ծածկված լինեն: Լենինը հասկանում ե, վոր «չգիտեմությունը», կամ «չեմ կարող գիտենալը» միայն ֆիդելիզմի յուրահատուկ ֆորմա յե, տերտերականության չափազանց նուրբ տեսակը, — դրական գիտությունների և տեխնիկայի հրակայական ծաղկման դարում, դասակարգային սրված պայքարի շրջանում: Լենինը յերեման ե հանում «չեմ կարող գիտենալու» դասակարգային բնույթն ու եյությունը: Բանվոր դասակարգի այդ հեղափոխական հանձարը, մարդկության նոր տան խոշոր կերտողը, կյանքի նոր ֆորմաների արվեստավորը անողորժաբար պատռում ե և դեն շարտում, վորպես փթած, ապականող մի փալա, բոլոր հաշիւանման նուրբ, իդեալիստական կառուցվածքները, վորոնք միայն մաշում ու քանդում են կառուցվող տան ֆունդամենտը: Ամենափոքր շեղումը մատերիալիզմից Լենինը վորակում ե, վորպես ֆիդելիզմին արվող աջակցություն և զիջում՝ դասակարգային թշնամուն:

Որչեկտիվ ճշմարտության բացասումը հանգում ե անթույլատրելի «համբերատարության» ու ոպորտունիզմի՝ մաքի և փիլիսոփայության բնագավառներում: Սակայն այս փիլիսոփայական ոպորտունիզմի անխուսափելի հետեւանքն ե քաղաքական, դասակարգային ոպորտունիզմը, բանվորներին խաբելը, մարքսիզմի խեղաթյուրումը: Որչեկտիվ ճշմարտության բացասման անխուսափելի հետեւանքն ե «քաղքենի, ֆիլիստրական, վախկոտ համբերատարությունը դեպի չար վոգիններ, կաթոլիկական սրբերի և նման բաների ուսմունքը»: Բայց այնպես չպիտի հասկանալ, իբր թե Լենինը կանգնած ե «դասակարգային սուբյեկտիվիզմի» հողի վրա, իբր թե նրա համար որչեկտիվ ճշմարտությունն այն ե, ինչ ոգտակար ե և շահավետ բանվոր դասակարգին: Մենք արդեն գիտենք, վոր Լենինի համար իմացությունը ոգտակար ե միայն այն դեպքում, յերբ նա արտացոլում ե որչեկտիվ ճշմարտությունը: Մատերիալիզմը և մարքսիզմը ճշմարիտ են վոչ թե նրա համար, վոր ոգտակար են, հանրանշանալի և արտահայտում են պրոլետարիատի հասարակական - կազմակերպված փորձը: Ընդհակառակը, նրանք

*) Ленин Собр. соч. X т., 42 100.

ոգտակար են, «հանրանշանալի» և այլն, վորովհետեւ արտացոլում են որչեկտիվ ճշմարտությունը: Արդի պայմաններում միայն պրոլետարիատը կարող ե կանգնել մատերիալիստական որչեկտիվիզմի հողի վրա: Դասակարգային սուբյեկտիվիզմը ուսկցիոն դասակարգերի բնորոշ գիծն ե կազմում: Ուստի ֆիդելիզմը և իդեալիզմի բոլոր տեսակները հենց այդ դասակարգերի իդեոլոգիան են հանդիսանում: Յեւ հենց դրանց ուսմունքն ե, վոր հակասում ե բնագիտությանը:

Իսկ ինչ վերաբերում ե մասնավորապես մախիստներին, պետք ե ասել, վոր նրանք սուբյեկտիվիստներ են ու ագնոստիկներ: Նրանք չեն ընդունում որչեկտիվ, մարդուց անկախ ուսալականությունը, վորպես մեր զգացողությունների աղբյուր: Նրանք զգացողությունների մեջ չեն տեսում այդ որչեկտիվ ուսալականության ճիշտ պատկերը և դրանով ուղղակի հակասում են բնագիտության ու դուռ բանում ֆիդելիզմի առջեւ: Ընդհակառակը մատերիալիստների համար աշխարհը ավելի հարուստ ե, ավելի կենդանի, ավելի բազմազան, քան նա թվում ե, վորովհետեւ գիտության զարգացման ամեն մի քայլը նրա մեջ նոր կողմեր ե բանում: Մատերիալիստի համար մեր զգացողությունները միակ և վերջին ուսալականության պատկերներն են: Վերջին՝ վոչ թե այն մշտեով, վոր այդ ուսալականությունն արդեն իմացված ե մինչեւ վերջ, այլ այն մաքով, վոր բացի նրանից չկա. և չի կարող լինել մի ուրիշ»): Որչեկտիվ իրականությունը յերբեք չի կարող իմացվել «մինչեւ վերջը»: Այս իմաստով, անհեթեթ ե խոսել բացարձակ ճշմարտության մասին, վորովհետեւ «բնության և պատմության իմացության համապարփակ, մի անգամ ընդմիշտ սահմանված սխտեմը հակասում ե դիալեկտիքական մտածողության հիմնական որենքներին, չնայած վոր նա չի բացասում, այլ ընդհակառակը, ընդունում ե, վոր արտաքին աշխարհի սխտեմատիկ իմացությունը սերնդից սերունդ հսկայական քայլեր կարող ե անել»: (Ենգելս): Այս դիալեկտիքական հայացքը իմացության պրոցեսի նկատմամբ — ոտար ե ինչպես մետաֆիզիկ արսոյուտիստներին, այնպես ել մետաֆիզիկ ույլատիվիստներին: Վոմանք պահանջում են բացարձակ ճշմարտություն, այսինքն՝ մինչեւ վերջ իմացված ճշմարտություն և պակասով չեն կարող բավարարվել: Մյուսները ժխտում են որչեկտիվ ճշմարտության գոյությունը այն հիման վրա, վոր մեր իմացությունը գտնվում ե զարգացման վիճակի մեջ: Այն հանգամանքից և այն անկասկած փաստից, թե արտաքին աշխարհի իմացությունը չի սպառվում

մինչեւ վերջ և «գիտութեան զարգացման յուրաքանչյուր քայլը, — ինչպէս, արտահայտւում է Լենինը, — նրա մեջ նոր կողմեր ե բանում», նրանք անում են այն անհեթեթ յեղափոխութիւններ, թե արտաքին աշխարհը գոյութիւն չունի: Մա իսկական salto mortale յե, և վոչ թե salto vitale: Մետաֆիզիքական արսուղուտիզմի լուսի տակ աշխարհը պատկերանում է պատրաստի, վերջացած մի անգամ ընդ մի շտապով, մեռած, քարացած կերպով, և նրա բոլոր կատեգորիաները ընդունում են անփոփոխ ու հավիտենական բնույթ: Կարող եր արդյոք մարքսիստը հաշտվել այդպիսի տեսակետի հետ: Կարող եր արդյոք Լենինը — այդ միշտ դեպի առաջ նետվող և ամեն ինչ խորտակող կյանքի հեղափոխականը իր բնավորութեան եյուրթամբ ընդունել պատրաստի և քարարած աշխարհը: Պե՞տք չեր արդյոք հալել այդ աշխարհը հեղափոխութեան կրակի մեջ, վորպէս զի հետո կառուցել նոր, ավելի լավ աշխարհ: «Աշխարհը ավելի հարուստ է, ավելի կենդանի, ավելի բազմազան, քան նա թվում է, վորովհետեւ գիտութեան զարգացման յուրաքանչյուր քայլը նրա մեջ նոր կողմեր ե բանում», նոր հնարավորութիւններ, նոր հորիզոններ, ավելի լայն հեռանկարներ: Յեթե այս աշխարհը չփոփոխվեր իրեն հատուկ որենքների ուժով, ապա, իհարկի, վոչ մի արտաքին ուժ չեր կարող նրան շարժման մեջ դնել: Հիմնվելով աշխարհի փոփոխականութեան և զարգացման այդ որենքների վրա, յենթարկվելով նրանց, գործելով նույն ուղղութեամբ, վորով աշխարհն է ինքնին զարգանում, մենք ընդունակ ենք աշակցել նրա ավելի արագ զարգացման տեմպին, մենք մասնակցում ենք այդ ընդհանուր կոսմիքական, — ասում եմ կոսմիքական, վորովհետեւ մարդկային հասարակութիւնը կազմում է կոսմոսի մի մասը — պրոցեսի զարգացման:

Հակառակ մետաֆիզիկ արսուղուտիստներին, կամ որեկտիվիստներին, սուբյեկտիվ ռեյատիվիստները հաստատում են մեր զգացողութիւնների փոփոխականութիւնը, բացասելով միաժամանակ արտաքին աշխարհի, որեկտիվ ռեալականութեան գոյութիւնը: Մակայն մեր զգացողութիւններն են իրենց չի կարող ստացվել աշխարհի փոփոխականութիւնը: Սուբյեկտիվիզմը նույնպէս չի համաձայնում մարքսիզմի հետ, ինչպէս և բնագիտութեան հետ: Ռեյատիվիզմը դնել իմացաբանութեան հիմքը, նշանակում է անխուսափելիորեն ինքն իրեն դատապարտել կամ արսուղուտ սկեպտիցիզմի, ագնոստիցիզմի և սոփիստութիւն, կամ թե՛ սուբյեկտիվիզմի: Ռեյատիվիզմը, վորպէս իմացաբանութեան

հիմք, վոչ միայն մեր գիտելիքների հարաբերութեան ճանաչումն է, այլ բացասումն է ամեն մի որեկտիվ, մարդկութեան անկախ գոյութիւնն ունեցող չափի կամ մոդելի, վորին մոտենում է մեր իմացութիւնը: Լոկ ռեյատիվիզմի տեսակետից կարելի յե արդարացնել ամեն մի սոփիստութիւն, կարելի է «պայմանական» ճանաչել նապոլեոնի մահը 1821 թ. մայիսի 5-ին, կարելի յե մարդու և մարդկութեան համար լոկ «հարմարութիւն» հայտարարել գիտական իրեոլոգիայի կողքին (վորը «հարմար» է մի կողմից) կրոնական իրեոլոգիայի գոյութիւնը, (վորը շատ «հարմար» է մի ուրիշ դեպքում) և այլն*):

Ճշմարտութեան մաս կա ինչպէս արսուղուտ որեկտիվիզմի պնդումների մեջ, նույնպէս և մեր գիտելիքները հարաբերական ճանաչելու մեջ: Այդ պնդումներից յուրաքանչյուրն առանձին վերցրած ինքըստինքյան սուտ է: Այդպիսի մասնակի, միակողմանի պնդումներից ամբողջութիւն, գիտելիքի ամբողջական թեորիա, կամ աշխարհայացք կառուցելու ձգտումը տանում է դեպի մետաֆիզիկան: Մասն ամբողջութիւն չե, չնայած ամբողջութիւնը կազմված է մասերից: Բացարձակ և հարաբերական ճշմարտութեան փոխհարաբերութեան հարցին միայն դիալեկտիքական մատերիալիզմն է գիտական լուծում տալիս: Մատնանշված հակադրութիւնները բացարձակի կամ որեկտիվականի և հարաբերականի միջեւ վոչ թե մե տա փիզիքական հակադրութիւնն են եր են, այլ հարաբերական, դիալեկտիքական հակադրութիւնն են: «Դիալեկտիքական մատերիալիզմի համար գոյութիւն չունի անանցանելի սահման բացարձակ և հարաբերական ճշմարտութիւնների միջեւ»: «Ժամանակակից մատերիալիզմի, այսինքն՝ մարքսիզմի տեսակետից, ասում է Լենինը, պատմականորեն պայմանական են մեր գիտելիքների որեկտիվ, բացարձակ ճշմարտութեանը մոտենալու սահմանները, բայց անպայմանական են այդ ճշմարտութեան գոյութիւնը, անպայմանական է այն, վոր մենք մոտենում ենք նրան: Պատմականորեն պայմանական են նկարի կոնտուրները, սակայն անպայմանական է այն, վոր այդ նկարն արտահայտում է որեկտիվորեն գոյութիւն ունեցող մոդելը: Պատմականորեն պայմանական է այն, թե յերբ և ինչ պայմաններում իրերի եյութեան վերաբերող մեր իմացութեամբ մենք հասել ենք մինչեւ ալիքարինի հայտնագործումը քարածխային մագնիսի մեջ, կամ

*) Ленин, նույն տեղը, էջ 109—110.

մինչեւ ելեկտրոնները հայտնագործմանը՝ ատոմի մեջ, սակայն անպայմանական ե այն, վոր ամեն մի այդպիսի հայտնագործում, «անպայման որոշեկտիվ իմացութեան» մի քայլ է՝ դեպի առաջ։ Մի խոսքով, պատմականորեն պայմանական ե ամեն մի գիտական իդեոլոգիա, սակայն անպայման ե այն, վոր ամեն մի գիտական իդեոլոգիային (վոր տարբեր ե, որինակ, կրոնականից) համապատասխանում ե որոշեկտիվ ճշմարտութեանը, բացարձակ բնութեանը։ Դուք կասե՞ք՝ հարաբերական ե բացարձակ ճշմարտութեան այդ տարբերումը անորոշ ե։ Իսկ յետ կապտասխանեմ՝ նա հենց այնչափ ե «անորոշ», վորպեսզի խանգարի գիտութեանը դոգմայի վերածվելու, բառիս ամենավատ իմաստով, վերածվելու ինչ-վոր մեռած, քարացած, վոսկրացած բանի, բայց նա միջնակցին ժամանակ հենց այնքան «վորոշ ե», վորպեսզի ամենավճռական ե անդարձ կերպով բաժանվի ֆիզիկայից ե ագնոստիցիզմից, փիլիսոփայական իդեալիզմից ե Յոմի ու կանտի հետեւորդների սոփեստութեանից։ Այստեղ ե այն սահմանը, վորը դուք չնկատեցիք ե չնկատելով այն, գլորվեցիք ռեակցիոն փիլիսոփայութեան ճահիճը։ Դրալեկտիքական մատերիալիզմի ե ռելյատիվիզմի միջեւ յեղած սահմանն այդ ե»*)։

IV

Բնագիտութեան գալառում կատարված հայտնագործումների տեսակետից զարմանալի մեր եպոխայում, յերբ յուրաքանչյուր նոր հայտնագործում հաստատում ե դիալեկտիքական մատերիալիզմի ճշտութեանը, յերբ ամենախոշոր ֆիզիկոսները սկսում են գիտակցաբար կանգնել դիալեկտիկայի տեսակետի վրա, լիովին չըհասկանալով դեռ այն պրոգն, վորով նրանք խոսում են, — հենց այդ ժամանակում մենք տեսնում ենք արդեն գծագրվող հետադարձ շարժում մարքսիստների միջեւ, վորոնք, իբրեւ հեգելականներ բացասում են դիալեկտիկան՝ բնութեան մեջ (մենք նկատի ունենք ամենից առաջ Գ. Լուկաչին**): Մեզելսը միանգամայն իրավացի կերպով մատնանշում ե այն բանը, վոր բնութեանը դեալեկտիկայի համար փորձնաքար ե, ե մենք պետք ե շնորհակալ լինենք բնագիտութեանը այն առիթով, վոր նա դիալեկտիկայի փորձման համար ամեն որ իր հետ բերում ե աճող նյութ,

*) Նույն տեղը եջ 109.

**) Տես նրա գիրքը, „Geschichte und Klassenbewusstsein“. Berlin.

ե դրանով հենց ապացուցում ե, վոր բնութեան մեջ, վերջնական հաշվով, ամեն ինչ կատարվում ե դիալեկտիքորեն ե վոչ թե մետաֆիզիկորեն*)։ Մենք կարծում ենք, վոր Մեզելսի այս նշանավոր միտքը մեր ժամանակի համար, այժմ բնագիտութեան մեջ կատարվող հեղափոխութեան որոք, առանձնահատուկ խոր իմաստ ունի։ Յեւ ի՞նչ։ Միթե՞ նորաբանները, վորոնց մասին խոսում եյինք, աշխատել են վորոշվե փաստարկում բերել իրենց հայացքի ոգտին ե որթորդս մարքսիստների, դեալեկտիքական մատերիալիստների մեջ հանրաճանաչված Մեզելսի հայացքի ժխտման համար։ Վոչ, այդ մենք չտեսանք։ Մեզելսը միանգամայն ճիշտ կերպով մատնանշում ե, վոր Հեգելը նատուրփիլիսոփայութեան, բնագիտութեան մեջ «զգալի չափով կանտից յետ» ե մնացել։ Հեգելը զարգացումը տեսնում եր միայն «հոգու» սփերայում, իսկ իբրեւ բնութեան բաժին նա թողնում եր լուկ «գոյութեանը»։ Թույլատրելի յե մեզ արդո՞ք այդպիսի դարձ կատարել դեպի Հեգելը, վորով ե կվերականգնվելին նրա սխալները, գուցե ե նրա իդեալիզմը, մինչդեռ այն պրոցեսը, վոր կատարվում ե արդի ֆիզիկայի մեջ, կարելի յե ձեւակերպել Լենինի խոսքերով՝ ժամանակակից ֆիզիկան յերկուսն քի մեջ ե. նա դիալեկտիքական մատերիալիզմ ե ծնում»։

Տարերային մատերիալիզմը բնագիտութեան բնագալառում, վորի մասին խոսում ե Լենինը, դանդաղորեն ե աստիճանաբար փոխվում ե գիտակցական ձիշտ ուղին ե կատարվում ե դիալեկտիկայի հետ։ Սակայն այդ բեկման, այդ կրիզիսի ժամանակ, վոր ապրում ե ժամանակակից ֆիզիկան, զարմանալի չի, վոր մեզ պատահում ենք շատ «տարրերինակ» հայտարարութեանի։ Ֆեդիկայի մեջ կատարվող նոր հայտնագործումները ոգտագործվում են իդեալիստների կողմից նյութի՝ ուրեմն ե մատերիալիզմի բացասման համար։

Լենինը մատերիալիզմի պաշտպանութեան նպատակով շատ ուրբ կերպով սահմանագիծ ե անցնում փիլիսոփայական ե ֆիզիքական հասկացողութեան եր միջեւ։ Անողտակար չե, այս առթիվ հիշել, վերջերս մամուլում արտահայտվող փիլիսոփայութեան «խորտակողներին», ե այն բանակոխվել, վոր դեռ մինչեւ այսոր շարունակվում ե «փիլիսոփայութեան ոգտակարութեան մասին»։ Այդ ընկերները, վոր նույնպես «նորաբաններ են», կարծում են,

*) Энгельс, „Анти-Дюринг“, 1918 г., бж 21

թե փիլիսոփայությունը արդեն կարելի չէ դեն շարտել և պետք է բավականանալ դրական գիտություններով: Իսկ «նորաբաններից» «նորաբան» Մենմենը նույնիսկ հնարավոր է կարծում ամեն ինչ «թաղել» իր «հուշակավոր» «նոր բիոլոգիայի թեորիայի» մեջ, համարելով մատերիալիզմը «շահագործող խաբուսանք»^{*)}:

Լենինը այդ մասին ի հարկե այլ կարծիքի չէ, լավ հասկանալով փիլիսոփայության և հասարակական գիտությունների միջեւ յեղած տարբերությունը: «Այդ պրոֆեսորներից և վոչ մեկին, — ասում է նա, — վորոնք ընդունակ են ամենաարժեքավոր աշխատություններ տալ քիմիայի, պատմության, ֆիզիկայի մասնագիտական բնագավառներում, — նրանց և վոչ մի բառին անգամ չի կարելի հավատալ, յերբ խոսքը փիլիսոփայությանն է վերաբերում»: «Մարքսիստների խնդիրն է... կարողանալ յուրացնել և վերամշակել այն նվաճումները, վոր անում են այդ «գործակատարները» (այսինքն բուրժուական գիտնականները Ա. Դ.)... և կարողանալ հարվածել նրանց ռեակցիոն ձգտումները, կարողանալ տանել իրենց գիծը և պայքարել մեր թշնամի ուժերի ու դասակարգերի ամբողջ գծի դեմ»^{**)}: Յեւ վ գիտության նվաճումները մշակել կարողանալու ու սեփական գիծ տանելու համար անհրաժեշտ է ունենենալ սեփական փիլիսոփայական աշխարհայացք, վոր հնարավորութուն է տալիս իրագործել այդ խնդիրը և չընկնել «ֆիզիքական» կամ «ֆիզիոլոգիական» իդեալիզմի ազդեցության տակ: Անհրաժեշտ է կարողանալ բաժանել և տարբերել փիլիսոփայական կատեգորիաները՝ ֆիզիքական և բոլոր այլ կատեգորիաներից: Ի՞նչպես կհրամայեք կատարել այդ աշխատանքն առանց գիտենալու «փիլիսոփայական կատեգորիաները»: Շփոթում են, որինակ, ասում է Լենինը, նյութի այս կամ այն կազմության հարցը նյութի գնոսեոլոգիական կատեգորիայի հետ, որյեկտիվ ճշմարտության, գոյության հարցերի հետ: Յեթ ուրյեկտիվ ճշմարտությունը գոյություն ունի, ապա նրա հանար փիլիսոփայական հասկացողություն և պետք է Այդ փիլիսոփայական հասկացողությունը նյութն է: «Նյութը, — ասում է Լենինը, — փիլիսոփայական կատեգորիա է, վորակելու համար որյեկտիվ ռեալականությունը, վորը տրված է մարդուն նրա զգացողությունների մեջ, բայց գոյություն ունի անկախ նրանցից և, նա պատճենավորվում է, լու-

*) Տես ընկ. Ն. Բուխարինի սքանչելի բրոշյուրը «Енчменияда»

**) Ленин X. т. 62 290.

սանկարվում է, արտացոլվում է մեր զգացողությունների միջոցով: Ուստի խոսել այն մասին, թե այդպիսի հասկացողությունը կարող է «հնանալ» դա յերեխայական թոթովանք է, մոդային ռեակցիոն փիլիսոփայության փաստարկումների անիմաստ կրկնություն»^{*)}:

Հակառակ մետաֆիզիքականի՝ ռեալեկտիքական մատերիալիզմը ամեն մի ֆիզիքական ուսմունք նյութի կազմության մասին քննում է միայն, վորպես հարաբերական մոտեցում որյեկտիվ իրականությանը, վորը յերբեք լրիվ կերպով մինչեւ վերջը չի կարող սպառվել: Իսկ նյութի փիլիսոփայական հասկացողությունը չի զուգադիպում և չի կարող զուգադիպել ամբողջովին նյութի ֆիզիքական հասկացողության հետ, վորը գիտության յուրաքանչյուր տվյալ աստիճանի զարգացման վրա արտահայտում է միայն որյեկտիվ ռեալականության տվյալ սահմանը: Նյութի փիլիսոփայական հասկացողությունը ինչ վոր «արսույուտ» է: Սակայն ի՞նչ է նշանակում այդ «արսույուտը»: Նյութի փիլիսոփայական հասկացողությունը «նշանակում է վոչ այլ ինչ, յեթե վոչ որյեկտիվ ռեալականություն, վոր գոյություն ունի անկախ մարդկային գիտակցությունից և արտացոլվում է նրանով»^{**)}: Ճանաչել որյեկտիվ ռեալականությունը՝ նշանակում է, «այսպես կամ այնպես», ինչպես ընդգծում է Լենինը, ճանաչել բացարձակ ճշմարտությունը: Դիալեկտիկի համար բացարձակ ճշմարտությունը կազմվում է հարաբերական ճշմարտություններից: Մեզելսը Դյուրինգի մասին գրած իր քննադատության մեջ մասնանշում է, թե ինչպես պետք է անսահմանության պրոբլեմը դիալեկտիկորեն քննել: Անսահմանությունը կազմված է սահմանական մեծություններից: Սա, իհարկե, հակասություն է: Սակայն առանց հակասությունների չի կարելի մտածել անսահմանությունը: «Հենց այն պատճառով, — ասում է Մեզելսը, — վոր անսահմանությունը հակասություն է, նա ներկայացնում է ժամանակի և տարածության մեջ անընդհատ ծավալվող անսահման մի պրոցես: Այդ հակասության դադարումը կլինի անսահմանության վերջը»: Այդպիսի չէ, ինչպես հայտնի չէ, և Հեգելի տեսակետը: «Դիալեկտիկան, — ասում է Լենինը, համաձայն Մեզելսի և Հեգելի հետ, — ընդունում է մեր բոլոր գիտելիքների հարաբերականությունը, սակայն վոչ թե որյեկտիվ ճշմարտությունը բացասելու իմաստով, այլ մեր գիտելիքների ճշմար-

*) Նույն տեղը, էջ 103.

**) Ленин, նույն տեղը, էջ 218—219.

տությանը մոտենալու սահմանների պատմական պայմանականությունների իմաստով: Ինչպես վոր անսահմանությունը կազմվում է սահմանական մեծություններից, այդպես ել բացարձակ ճշմարտությունը կազմվում է հարաբերական ճշմարտություններից: «Այդպես, մարդկային մտածողությունը ըստ իր բնության ընդունակ է տալ և տալիս է մեզ բացարձակ ճշմարտություն, վոր կազմվում է հարաբերական ճշմարտությունների գումարից: Գիտության զարգացման յուրաքանչյուր աստիճանը ավելացնում է նոր հատիկներ բացարձակ ճշմարտության այդ գումարին՝ սակայն յուրաքանչյուր գիտական դրույթի ճշմարտության սահմանները հարաբերական են, և յերբեմն լայնանում, յերբեմն սղմվում են գիտելիքի հետագա աճումով»^{*)}: Դիտելիքի կամ իր մեջ պարփակում է հարաբերականության, բացասման, սկեպտիցիզմի մոմենտ, սակայն նա չի հանգում, ինչպես ընդգծում է Լենինը, ռեյատիվիզմի: Լենինի այս միտքը անհրաժեշտ է առանձնապես ընդգծել, վորովհետև վշատ մարքսիստներ չեն հասկանում «բացասման», հարաբերականության մոմենտի և որքեկտիվ ռեալականության միջեվ յեղած փոխհարաբերության պրոբլեմի դիալեկտիքական բնույթը: Նրանք չեն հասկանում, վոր որքեկտիվ ռեալականությունը մի ինչ վոր անսահմանություն է, յերբեք լրիվ չսպառվող, բայց մեզ համար կազմվում է վերջացող հարաբերական սահմաններից: Դրա համար վոմանք հանգում են ժամանակային, սահմանափակ, պայմանական և հարաբերական սահմանի ճանաչման, վորն իբր թե չի արտացոլում որքեկտիվ ռեալականությունը: Այսպիսի տեսակետը տանում է դեպի սուբյեկտիվիզմ և սկեպտիցիզմ, ու գիտական գիտակցության դրական բնույթի և որքեկտիվ ռեալականության ժխտման: Իսկ ուրիշները ընկնում են մի այլ չափազանցության մեջ՝ նրանք գիտության զարգացման յուրաքանչյուր տվյալ աստիճանը դիտում են, վորպես որքեկտիվ ռեալականության կատարյալ և բացարձակ արտացոլում, վոր տանում է դեպի իրականության և մարդկային իմացության մետաֆիզիքական ըմբռնումը: Նոր ֆիզիկան, Լենինի կարծիքով, սայթաքել է դեպի իդեալիզմը, վորովհետև ֆիզիկոսները չգիտեն դիալեկտիկան: «Բացասելով մինչ այժմ հայտնի ելեմենտների և նյութի հատկությունների անփոփոխականությունը, նրանք սայթաքեցին մինչեվ նյութի բացասումը, այսինքն՝ ֆիզիքական աշխարհի որքեկտիվ ռեալականության բացասումը: Բա-

*) Ленин, նույն տեղը, էջ 108.

ցասելով ամենայնական և հիմնական որեքներ թացարձակ բնույթը, նրանք գլորվեցին մինչեվ բնության մեջ գոյություն ունեցող վորքեկտիվ որքեկտիվ որքեկտիվության բացասումը, մինչեվ բնության որեքները լոկ պայմանականություն, «սպասումի սահմանափակություն», «տրամաբանական անհրաժեշտություն» և այլն հայտարարելը: Պնդելով մեր գիտելիքների մոտավոր, հարաբերական բնույթի վրա, նրանք գլորվեցին մինչեվ իմացությանից անկախ գոյություն ունեցող և այդ իմացությամբ մոտավորապես ճիշտ, հարաբերականորեն ուղիղ կերպով արտացոլվող որքեկտիվ բացասումը»^{*)}:

Մետաֆիզիկները պաշտպանում են ելեմենտների կամ նյութի հատկությունների անփոփոխականությունը և բնության ու հասարակության որեքների բացարձակ բնույթը: Իսկ ռեյատիվիստները կանգնած են հակադիր տեսակետի վրա: Մեր գիտելիքի հարաբերական բնույթից, նյութի ելեմենտների փոփոխականության փաստից է այլն, նրանք յեզրափակում են ամեն մի որքեկտիվ ռեալականության և որքեկտիվության բացակայությունը և որեքների գուտ պայմանական կամ սուբյեկտիվ բնույթը: Հարցի ինչպես առաջին, նույնպես և յերկրորդ ըմբռնումը հավասար չափով սխալ է: Լենինը, վորպես դիալեկտիքական մատերիալիստ, ապացուցում է այդ տեսակետներից յուրաքանչյուրի սխալականությունը: Այն ինչ զարգացման մի աստիճանի վրա թվում է անփոփոխ և բացարձակ, մի ուրիշ աստիճանի վրա յերեվան է գալիս, վորպես հարաբերական մի բան: Այսպես, որքեկտիվ մինչեվ վերջին ժամանակները յենթադրում եյին, վոր անթափանցելիությունը, ինքեցիան, մասսան կազմում են նյութի բացարձակ հատկությունները: Այժմ գիտենք, վոր այդ այդպես չէ:

Սակայն պետք է նկատել, վոր դիալեկտիքական մատերիալիզմը սուր կերպով տարբերվում է մետաֆիզիքականից կամ մեխանիքականից, վորի հետ կապված է, ըստ յերեվելիքի, վորոշակի կոնկրետ ֆիզիքական մի ուսմունք նյութի ու նրա հատկությունների մասին: Բայց դիալեկտիքական մատերիալիզմը, վորպես վիլիստոփայական աշխարհայացք զգալիորեն խորացրել է այս բոլոր հարցերը, մի կողմից ավելի լայն դաշտ հատկացնելով ֆիզիքական հետախուզումներին և ուսմունքներին, չկապելով իրեն վորքեկտիվ կոնկրետ ֆիզիքական ուսմունքի հետ աշխարհի կազմության մասին: Չնայած դրանով նյութի փիլիսոփայական հասկացողությունը, ճիշտ է, ս է դ մ վ ու մ է, բայց-

*) Ленин, նույն տեղը, էջ 219.

միաժամանակ և խորան ու մե, վորովհետեւ նա յենթադրում է կոն-
կրետ ֆորմաների և նյութի հատկությունների անսահման քանա-
կություն: Ինչպիսին ել վոր լինեն ֆիզիքական գիտությունների
նվաճումները, այնուամենայնիվ նրանք չեն շոշափում նյութի փի-
լիսոփայական ուսմունքը: Յեւ այս իմաստով կարելի չե-
սել, վոր փիլիսոփայական մատերիալիզմը ծառայում է Լենինի հա-
մար, վորպես պատվար «ֆիզիքական», «ֆիզիոլոգիական» և այլ տե-
սակի իդեալիզմի դեմ: Ի հարկե, ճիշտ է, վոր մատերիալիզմը,
եպոխա կազմող յուրաքանչյուր հայտնագործման հետ, նույն-
իսկ բնագիտական-պատմական բնագավառում» («Հիսոսելով ար-
դեն մարդկության պատմության մասին»), ինչպես արտահայտվում
է Մենգելսը, պետք է փոփոխի իր ֆորման, ասում է Լենինը: Սակայն
շփոթել ֆորման հիմնական եյություն հետ, դավաճանել մատերիալիզ-
մի եյությունը նրա ֆորմայի քննադատման աստառի տակ, ան-
թույլատրելի չէ, իսկ այդ է, վոր անում են մախիստները: Այժմ
մենք արդեն գիտենք, թե Լենինը ինչ է հասկանում մատերիալիզմի
ֆորմայի տակ: Դա նրա վորոշակի, կոնկրետ տեսակն է, վորը
տրվում է պատմականորեն — հարաբերական բովանդակությամբ, այ-
սինքն՝ կոնկրետ ուսմունքով նյութի կազմության և հատկությունների
մասին, կամ ուսմունքով վորոշ պատմականորեն — սահմանափակված
որենքների մասին տվյալ սոցյալական որդանիզմի, նրա զանգացման
տվյալ պատմական աստիճանում: «Հետեւաբար, — ասում է Լենինը,
— Մենգելսի մատերիալիզմի «ֆորմայի» ռեվիզիան, նրա նատուրփի-
լիսոփայական դրությունների ռեվիզիան վոչ միայն իր մեջ չի
պարփակում վոչինչ «ռեվիզիոնիստական», բառիս ընդունված իմաս-
տով, ընդհակառակը, անհրաժեշտորեն պահանջվում է մարքսիզմի
կողմից»: Նյութի փիլիսոփայական հասկացողությունն անքակտելիորեն
կապված է միայն նյութի մի հատկությամբ հետ՝ նա պնդում
է նյութի օբյեկտիվ կացությունը, նրա գոյությունը
մեր գիտակցությունից դուրս. այստեղից հետեւում է յերկրոր-
դը՝ նյութի ներգործումը մեր զգացողությունների վրա, նրա ար-
տացողումը մեր զգացողությունների մեջ: Սրանով Լենինը ընդգծում
է յերկու մոմենտ՝ գոյություն, որյեկտիվ կացություն մոմենտը և
տեսա-իմացական մոմենտը, վոր արտացոլումն է մեր զգացողու-
թյունների մեջ: «Մենգելսի տեսակետից անփոփոխական է, — ասում է նա, —
միայն մի բան՝ այն վոր անկախ մարդկային գիտակցությունից
գոյություն ունեցող և զարգացող աշխարհը արտացոլվում է մարդ-

կային գիտակցության միջոցով (յերբ գոյություն ունի մարդկային
գիտակցությունը): Վոչ մի այլ «առն փոփոխականություն»,
վոչ մի ուրիշ «եյություն», վոչ մի աբսոլյուտ սուբստանցիա
այն իմաստով, ինչ իմաստով վոր այդ հասկացողությունները
գեղադրել է պարապ պրոֆեսորական փիլիսոփայությունը,
Մարքսի յեւ Մենգելսի համար գոյություն չունեն: Իրերի
«եյությունը» կամ «սուբստանցիան» նույնպես հարաբերական են.
Նրանք արտահայտում են միայն մարդկային որյեկտների իմացու-
թյան խորացումը. և յեթե յերեկ այդ խորացումը ատմից դե-
նը չեր անցնում, իսկ այսօր՝ ելեկտրոնից և եֆիրից դենը, ուս-
տի գիտելիքական մատերիալիզմը պնդում է, վոր մարդը
իմանում է բնությունը առաջադիմող գիտության միջոցով, և
այդ իմացության հիշված բոլոր ուղիները ժամանակա-
վոր, հարաբերական, մոտավոր բնույթը ունեն: Ելեկտրոնը
նույնպես անսպառ է, ինչպես և ատմը, բնությունը ան-
սահման է, սակայն նա անսահման գոյություն ունի, և ահա գի-
տակցությունից և մարդու զգացողություններից դուրս բնության
գոյության կատեգորիք, անպայման ճանաչումն է, վոր տար-
բերում է գիտելիքական մատերիալիզմը ռեյատիվիստական
աֆոստիցիզմից և իդեալիզմից»*):

Ատոմի քայքայվելիությունը, նրա անսպառելիությունը, նյու-
թի բոլոր ֆորմաների և նրա շարժման փոփոխականությունը միշտ
դիալեկտիքական մատերիալիզմի հենարանն են յեղել: Բնու-
թյան բոլոր սահմանները պայմանական են, հարաբերական, շար-
ժական և նրանք արտահայտում են մեր խելքի մոտեցումը դեպի
նյութի իմացությունը, սակայն դա բոլորովին չի ապացուցում,
վոր բնությունը ինքը սիմվոլ է, պայմանական նշան, այսինքն՝
մեր խելքի արդյունք»**):

Մատերիալիզմի այդպիսի ընդարձակ, ճշմարիտ դիալեկտիքական
ըմբռնողության դեպքում տապալվում են ինքստինքյան այն բոլոր
առարկությունները, վոր սովորաբար հարուցում են «քննադատ-
ները»: Մետաֆիզիքական մատերիալիզմը ընդունում է բացարձակ,
անփոփոխ ելեմենտների կամ եյությունների գոյությունը: Մեխա-
նիքական մատերիալիզմը հենվում է մեխանիկայի և սրա որենք-
ների վրա: Սակայն դիալեկտիքական մատերիալիզմն այդ բոլոր

*) Նույն տեղը, էջ 220.

**) Ленин, նույն տեղը, էջ 236.

մեղքերի մեջ բոլորովին անպարտ է: Ուստի ֆիզիկայի բնագավառում կատարված նորագույն հայտնագործումները վոչ միայն մատերիալիզմը չեն հերքում, այլ ընդհակառակը, հաստատում են դիալեկտիքական մատերիալիզմի ճշտությունը: Մետաֆիզիկական հայացքը բնութան վերաբերյալ իրապես կատարյալ և վերջնական պարտություն է կրում: Այդ դեռ չի գիտակցված շատ մարքսիստների կողմից, չխոսելով արդեն մատերիալիզմի հակառակորդների մասին: Սակայն գիտելիքական մատերիալիստները, դրանց թվում իհարկե և Լենինը, արդեն վաղուց գերազանցորեն հասկացել են այդ շարժման ելույթները: Մարքսի և Ենգելսի աշխարհայացքը ժամանակակից բնագիտությունից ստանում է միայն նոր ամրապնդում: Լենինը, վորպես գիտելիքական մատերիալիզմի խոշոր ներկայացուցիչներից մեկը, նույնպես համարում է, վոր «բնությունը փորձաքար է գիտելիքային համար»:

Ինչ վերաբերում է աշխարհի մեխանիքական պատկերին, ինչպես արդեն ասել ենք, այդ պատկերը մատերիալիզմի համար պարտադիր չէ: Նոր ֆիզիկական առաջադրում է նյութի ելքաորական թեորիան, նյութի փոխարեն նա առաջադրում է ելքաորականությունը: Յեթե մինչեւ այժմ բնագիտությունը ֆիզիքական աշխարհի ամբողջ բովանդակությունը վեր եր ածում յերեք գաղափարների՝ նյութի, ելքաորականության և էֆիրի, հապա նյութը, յերեւի, կհաջողվի ելքաորականության վերածել: Դրանով մեխանիկայի որոնքները վոչ թե պարզապես հերքվում են, ինչպես մի քանիսն են կարծում, այլ նրանց «գործունեություն սփերան», այսպես ասած, սահմանափակվում է: Մեխանիկայի որոնքները դիտվում են արդեն, վորպես ելքաորմագնեադիզմի մասնակի դեպք, կամ իբրեւ աշխարհի ելքաորողինամիքական պատկեր: Աշխարհը շարժվող նյութ է: Մեխանիկան, այս նոր ուսմունքների վերջնական հաղթանակի դեպքում, կդառնա դանդաղ, ուշալ շարժումների լուսանկարը, ասում է Լենինը, իսկ ելքաորմագնեադիքական թեորիան կդառնա հսկայական արագընթաց շարժումների լուսանկարը: Մասայի մասնությունը, իներցիայի ռեզոնանսը կապահանքն իրեն ուժը միայն մարմինների միջին արագություն համար: Այսպիսով հին մեխանիկան դեն չի շարժվում, այլ կիրառվում է ավելի նեղ սահմաններում: Համեմայն դեպ ինչպես մեխանիկայի, նույնպես և նոր ֆիզիկայի մեջ մենք գործ ունենք ու եյալ շարժումն երի և որյ եկտիվ ու եյալ ալա ն ու թյ ա ն, այսինքն՝ նյութի շարժման, փոփոխության և կերպարա-

նափոխման հետ: «Լաբորատորիայում և գործարանում կատարվող նյութալի ալա ն կերպարանափոխումների այս դիալեկտիկան, իդեալիստի աչքում, — ընդգծում է Լենինը, — հանդիսանում է՝ վոչ թե իբրեւ մատերիալիստական դեալեկտիկայի հաստատում, այլ մի առարկություն՝ մատերիալիզմի դեմ»: Իսկապես անհեթեթ բան է նոր ֆիզիկայից իդեալիստական յեզրակացություններ անել: Մեր լաբորատորիաներում մենք «գործ ունենք» ելքաորականության, ատոմների և ելքաորոնների հետ: Մենք վոչ միայն «դիտում ենք», այլ յեւ «գգում» ենք նյութական կերպարանափոխումների դեալեկտիկան: Ակնբախ է, վոր յեթե այդ պրոցեսները ուշալ, որյեկտիվ, նյութական, պրոցեսներ, չլինեյին նրանք բոլորովին գոյություն չեյին ունենա, և մենք նրանց մասին վոչինչ չեյինք իմանա: Ճիշտ է, — այն, ինչ այժմ մենք գիտենք և դիտում ենք շատ ավելի իմաստալի է, քան հին մեխանիկան, սակայն այդ ամենը նյութի շարժումն է ժամանակի և տարածության մեջ: Մարդկային խելքը հայտնագործել է բնություն մեջ շատ զարմանալի բաներ և կհայտնագործի ել ավելին, այդպիսով կմեծացնի իր իշխանությունը բնության վրա, սակայն դա չի նշանակում, վոր բնությունը մեր խելքի կամ արատրակտ խելքի ստեղծագործությունն է, այսինքն՝ ուրդովյան աստծու, բողոքանույան «տեղադրման» (ПОДСТАНОВКА) և այլն ստեղծագործությունը:

Ինչպես հայտնի յե, մետաֆիզիքական մատերիալիզմի դեմ դուրս են յեկել, մարքսիզմի հիմնադիրները, և նրա հիմնական սխալը տեսել են նրա «մեխանիքական» ուղղության մեջ. այսպիսի պայմաններում իրոք ապշում ես այդ «ծերերի» հեռատեսությունը: Ժամանակակից ֆիզիկայի բարձունքից նրանց հայացքները ստանում են ավելի խորը փրկիստիայական իմաստ:

Մարքսը և Ենգելսը հետեւողական դեալեկտիկներ և մատերիալիստներ եյին, ուստի նրանք ուրիշներից ավելի հեռու և ավելի խորն եյին տեսում: Վորպես դեալեկտիկներ նրանք գիտեյին, վոր մեր իմացությունը չի տրված պատրաստի և վերջավորված ձերով, վոր հարաբերական գիտելիքը տառնում է դեպի որյեկտիվ գիտելիք, և վոչ լրիվ գիտելիքը՝ դեպի ավելի լրիվ և ճշգրիտ գիտելիք: Նրանց հետքով գնաց և Լենինը, վորի մեջ խորունկ ունալիզմը միացած եր անսպառելի հեղափոխական ենտուզիազմին և սրակտիկ իդեալիզմին: Նա վերցընում եր զարգացման յուրաքանչյուր առանձնակի «ողակը» կամ մոմենտը, վորպես մոտավոր ու հարաբերական արտահայտություն, կանգ

չառնելով, չսառնելով առանձին աստիճանները վրա, այլ պրակտիկորեն հաղթահարելով նրանց, և շարժվելով ավելի ու ավելի առաջ: Նրան ոտար եր ինչպես ա ն հ ի մ ն ու ա ո պ ի զ մ ը, նույնպես և սողացող ե մ պ ե ը ի զ մ ը: Մենք դժբախտություններ չենք: Մեր ուսմունքը, — ասում է նա մարքսիզմի մասին, — վոչ թե դժգոհ յե, այլ գործունեության ուղեցույց: Մենք չենք հավակնում, վոր Մարքսը կամ մարքսիստները գիտեն դեպի սոցիալիզմը տանող ուղին իր ամբողջ կոնկրետությունը: Դա ցնդաբանություն է: Մենք գիտենք այդ ճանապարհի ուղղությունը, մենք գիտենք թե ինչ դասակարգային ուժեր են դեպի նա տանում, իսկ կոնկրետ ձեւով, պրակտիկորեն այդ ցույց կտա միայն մի լ ի ռ ն ե ը ի փ ո Ր ձ ը, յերբ նրանք գործի կանցնեն*): Նա յերբեք աչքաթող չեր անում վերջնական նպատակը, վորին նա ձգտում էր, հենվելով ժամանակակից հասարակության որոշակի վարդապետական վրա: Սակայն նա միաժամանակ գիտակցում էր, վոր դեպի վերջնական նպատակը տանող ուղին ծանր է և տանջալի, և անհրաժեշտ է մի շարք խոչնդոտներ, կոնկրետ աստիճաններ հաղթահարել, վորովհետեւ առանց նրանց իրական, պրաքտիկ հաղթահարման չկա հետագա շարժում դեպի առաջ: Յեթե ամբողջությունը կազմվում է այդպիսի առանձնակի, հարաբերական մոմենտներից, ապա յուրաքանչյուր առանձին մոմենտում պետք է կարողանալ ընդգրկել նրա եյությունը, այսինքն՝ ամբողջության վոգին և արտացոլումը: Հենց դրանում է կայանում աշխարհը դիալեկտիկորեն դիտելու կարողությունը, աշխարհին տիրելու արվեստը: Այսպիսին է մարքսիստական մեթոդի անհաղթելի ուժը, վորին Լենինը կատարելապես տիրապետում էր:

Նա իր խառնվածքի ամբողջ ուժով հարձակվում էր նրանց վրա, ովքեր մի կերպ գուցե մարսել են Մարքսի տնտեսական և պատմական թեորիան, սակայն չեն կապել այն նրա հիմքի հետ, իրենց չեր պարզել նրա փիլիսոփայական արմատները, այսինքն՝ դիալեկտիկական մատերիալիզմը: Զի կարելի մատերիալիստ լինել վերելում (այսինքն՝ հասարակական գիտությունների մեջ կողմնակից լինել պատմական մատերիալիզմին) և իդեալիստ՝ ներքեւում (այսինքն՝ բնության վերաբերյալ), ինչպես և չի կարելի մատերիալիստ լինել ներքեւում, իսկ իդեալիստ՝ վերելում: Դիալեկտիկական մա-

Ленин, XIV т. ч. II № 83—84. Բերած բառերի մեջ հրաշալի արտահայտված է Լենինյան ինչպես «պրակտիկական» այնպես յեւ «թեորետիկական» փիլիսոփայության ամբողջ «եյությունը»:

տերիալիզմն ամբողջական աշխարհայացք է, վոր ընդգրկում է և բնությունը և հասարակությունը: Լենինը այդ աշխարհայացքի փայլուն ներկայացուցիչն է: Նրա պրակտիկ գործունեության յուրաքանչյուր քայլը անքակտելի կապված էր նրա աշխարհայացքի հետ և լուսավորվում էր մարքսիզմի ամբողջ լույսով:

V

Հաստատելով վոր աշխարհը մեր ըմբռնումների մեջ արտացոլվող շարժուն նյութ է, մեր զգայարանների վրա ներգործող որոշակի, անկախ մարդուց գոյություն ունեցող ռեալականություն, ապա պարզելով հարաբերական և որոշակի ճամարտության միջեւ յեղած փոխհարաբերությունը, պարզելով նույնպես և պրակտիկայի նշանակությունը, վորպես մեր մտածողության ճշմարտության և իրականության կրիտերիայի, այժմ մենք կարող ենք անցնել մի քանի այլ հարցերի, վորոնք նույնպես առաջնակարգ նշանակություն ունեն մատերիալիստական իմացաբանության համար:

Ձեր վորոշումը նյութի, — ասում են մախիստներն ու մատերիալիզմի այլ հակառակորդները, — լոկ կրկնաբանություն է և վոչ-գիտական: Յեւ նրանք պահանջում եյին ու մինչեւ հիմա եւ պահանջում են նյութի «վորոշումը»: Ակներեւ է, նրանք կամենում են ստանալ այնպիսի «վորոշում», վոր նրանց բավարարի: Սակայն բնական է, վոր այդպիսի վորոշում մատերիալիստը չի կարող տալ: Իսկապես, ինչի՞ շուրջն է ամբողջ այդ վեճը: Մատերիալիստները պնդում են, վոր նյութը սկզբնական է, իսկ հոգին՝ յերկրորդական, այսինքն՝ հոգին որգանական նյութի ինչ-վոր հատկությունը կամ դրությունն է: Հետեւաբար «մատերիալիզմի և մախիզմի» միջեւ յեղած տարբերությունը տվյալ հարցում հանդում է հետեւյալին: Մատերիալիզը, բնագիտության համաձայն, իբրեւ սկզբնական տվյալ՝ ընդունում է նյութը, համարելով յերկրորդական՝ գիտակցությունը, մտածողությունը, զգացողությունը, վորովհետեւ պարզ արտահայտված ֆորմայի մեջ զգացողությունը կապված է միայն նյութի բարձր ֆորմաների հետ (որգանական նյութ), և «նյութի շնքի ֆունդամենտի» մեջ միայն կարելի յե յենթադրել զգացողությանը ման ընդունակության գոյությունը*): Սակայն մախիզմը յեղնում է հենց հակադիր պնդումից. նա սկզբնական է ըն-

*) Ленин—Собрание сочинений т. X, № 30.

դունում զգացողությունները, վորոնցից իբր թե կազմվում են ֆիզիքական մարմինները: Բոլորովին կարեվոր չե տալ հասկացողություն լրիվ վորոշումը: Այս հակադրումը, կարուկ սահմանագծումը յերկու փիլիսոփայական ուղղությունների միջև շատ բան ե տալիս նյութի «վորոշման» համար: Իհնչի՞ համար են «վորոշումներ», Ձե վոր՝ ակնբախ ե, յեթե մախիստները և այլ իդեալիստները հրաժարվեն իրենց իսկապես սխոլաստիքական հայացքներից, ըստ վորի առանց սուբյեկտի, առանց մեր յեսի գոյություն չունի աշխարհը, ըստ վորի մարդը մտածում ե առանց ուղեղի և ֆիզիքական աշխարհը ստեղծում են գիտակցությունը կամ զգացողությունը, յեթե նրանք հրաժարվեն այդ միատիկայից, վոր մոտ ազգակցություն ունի կրոնական հավատացումներին, ապա տարածաշրջանները մախիստների և մատերիալիստների միջև միանգամից զգալի չափով կըկրճատվեն: Սակայն հենց բանն այն ե, վոր նրանց պահանջած վորոշումները անտեղի յեն, վորովհետեւ վեճի առարկան յերկուսի համար ել պարզ ե: Յերկու կողմերն ել լավ հասկանում են, թե խոսքը ինչի մասին ե:

Բայց թող ընթերցողը չմտածի, վոր մատերիալիստները խույս են տալիս նյութի վորոշման հարցից: Ահա թե ինչ ե գրել այդ առթիվ Լենինը. «...ամենափոքր խորհրդածությունը կարող եր ցույց տալ այդ մարդկանց, վոր չի կարելի, գործի եյություն տեսակետից չի կարելի տալ այլ վորոշում իմացաբանություն յերկու վերջին հասկացողություններին, բացի այն ցուցմունքից, թե նրանցից վորն ե ընդունվում, վորպես սկզբնական: Իհնչ ե նշանակում «վորոշում» տալ: Սանշանակում ե տվյալ հասկացողությունները մի ուրիշ, ավելի ընդարձակ հասկացողության հանգեցնել: Որինակ, յեթե յես վորոշում եմ՝ եշը կենդանի յե, յես «եշ» հասկացողությունը ավելի ընդարձակ հասկացողության եմ հանգեցնում: Այժմ հարց ե ծագում, կա՞ն արդյոք ավելի ընդարձակ հասկացողություններ, վորոնց հետ գործ ունենար իմացաբանությունը, քան կացություն և մտածողություն, նյութի և զգացողության, ֆիզիքականի ու տեխնիքականի հասկացողությունները: Վոչ: Սրանք ամենաընդարձակ հասկացողություններն են, վորոնցից զենը չի անցել մինչեւ այժմ իմացաբանությունը, յեթե ըստ եյություն նկատի չունենալ նոմենկլատուրայի միշտ հնարավոր փոփոխությունները»^{*)}:

^{*)} Նույն տեղը, եջ 118.

Ամեն մի մտածող մարդ պետք ե ընդունի, վոր Լենինը իրավացի յե: Հենց այսպես են բոլոր մատերիալիստները հարցին նայում: Այս ուղիով ել ընթանում ե և գիտությունը: Կացությունը և մտածողությունը հակադրությունն են, վորոնց սահմանից զենը և վորոնցից հեռուն վոչ գիտությունը և վոչ ել իմացաբանությունը չեն անցել: Կամ արտահայտված այլ կերպ՝ դրանք ամենաընդհանուր և ամենաընդարձակ հասկացողություններն են: Յեւ հենց այդ պատճառով չի կարելի «վորոշել» նյութը մի այլ անհրաժեշտորեն ավելի նեղ հասկացողությամբ: Այս դատողությունը վորոշ առաջադրում ճշմարիտ ե նույնպես և «հոգու» վերաբերյալ:

Սակայն վորքան ել աղքատ ե վորոշումներով վերջին հասկացողությունը (այսինքն՝ նյութի հասկացողությունը) այնուամենայնիվ նա միանգամայն «վորոշվում» ե: Մենք նախընթացում արդեն ընդգծել ենք այդ հասկացողության առանձին մոմենտները: Նրանք հետեւյալին են հանգում: Առաջին, նյութը սկզբնական ե, և բոլոր մնացածները — զգացողությունը, գիտակցությունը — կազմում են նյութի հատկությունը կամ դրությունը, այսինքն՝ ինչպես արտահայտվում ե Լենինը, «չատ բարձր զարգացման արդյունք» են դրանք, վորովհետեւ «բնագիտությունը դրականապես հաստատում ե, վոր յերկրորդ գոյություն ունեւ այնպիսի դրության մեջ, յերբ նրա վրա չկար և չեր կարող լինել վոչ մարդ և վոչ ել ընդհանրապես վոր յեվ ե կենդանի արարած: Որգանական նյութը ավելի հետագա յերեւույթ ե, յերկարատեւ զարգացման արգասիք»^{*)}: Յերկրորդ, նյութը որեւէ տիպի ունակություն ե, վոր գոյություն ունի վոր յեվ գիտակցությունից դուրս և անկախ: Վորովհետեւ հենց վոր դուք «կապում եք» աշխարհը գիտակցությանը, հենց վոր կանգնում եք այն տեսակետի վրա, վոր «միջավայրը» այսինքն՝ արտաքին աշխարհը անքակտելիորեն կապված ե գիտակցության, վոր յեվ «յես»-ի հետ, անխուսափելիորեն կանգնում եք իդեալիստական տեսակետի վրա: Սակայն իդեալիստական տեսակետը բնագիտության աղաղակող հակասությունն ե: Ամեն մի կոնցեպցիա, վոր հակառակ ե բնագիտությանը, դրանով ապացուցում ե իր անհիմն լինելը:

Հետո, նյութը արտացոլվում ե մեր զգացումների մեջ, այսինքն՝ նա իմացվում ե մեր կողմից տպավորությունների միջոցով, մեր զգայաբանքների վրա կատարած նրա ներգործությունը շնորհիվ: Այս թեզի ճշմարտության վերաբերյալ անմիջապես կա-

^{*)} Նույն տեղը, եջ 56.

կած ե հարուցվում հոգուն «կապված» իդեալիստների շրջանում: Չի վոր մեր զգացումների վրա կարող ե ներգործել և «հոյին» Այսպես են դատում նրանք, յեթե վոչ բարձրաձայն, գոնե իրենց մտքում: Սակայն բանն այն ե, վոր նյութը զգայական իր ե, նա անմիջականորեն կամ միջնորդապես տրված ե զգացումների մեջ: Ինչ չափով վոր խոսքն արտացոլումների, նյութական աշխարհի պատկերների մասին ե, ապա պարզ ե, վոր «նյութի» և նրա «պատկերների» միջով գոյություն ունի վորոշ համապատասխանություններ, ինչ վոր միատարրության, համեմայն դեպս մի քանի հատկությունների վերաբերյալ, վոր վոչ մի կասկած առաջ չի բերում:

Ապա մատերիալիստները պնդում են, վոր նյութին հատուկ ե շարժումը, նա կազմում ե նյութի գոյության հիմնական ֆորման: Սա նույնպես չափազանց կարեւոր «վորոշում» ե: Շարժվող նյութն այն ե, ինչը լեցնում ե տարածությունը: Կամ այլ կերպ ասած, նյութը տարածական ե և փոփոխական: Դա նշանակում ե, վոր ժամանակը և տարածությունը նույնպես նրա հիմնական «վորոշումներն» են: Աշխարհում բոլոր առարկաները գոյություն ունեն «մեկը մյուսից դուրս և մեկը մյուսից հետո», ինչպես արտահայտվում ե Ֆեյեբրբախը: Վորովհետեւ ժամանակը շարժումից բխող հասկացողություն ե, ապա նա յենթադրում ե այն բանի գոյությունը, ինչ շարժվում ե: Տարածությունը և ժամանակը, ասում ե նույն Ֆեյեբրբախը, յենթադրում են իրերի գոյությունը, վորովհետեւ տարածությունը կամ տարածականությունը յենթադրում ե նախապես գոյությունը ինչ վոր բանի, ինչ տարածական ե, և ժամանակը, շարժումը յենթադրում են այն բանի գոյությունը, ինչ շարժվում ե, վորովհետեւ ամբողջ տարածականը և ժամանակականը նշանակում ե, վոր ամեն ինչ տարածական ե և շարժվում ե:

Զմտնելով նյութի «հասկացողության» հետագա վերլուծման մեջ, մենք արդեն ասածի հիման վրա իրավունք ունենք այժմ տալ նյութի ավելի ընդարձակ վորոշումը, վոր հետեւյալն ե՝ նյութը որեւէ տիպ առարկանություն ե, վոր գոյություն ունի ժամանակի և տարածության մեջ, ներգործում ե մեր զգացումների վրա և նրանց մեջ արտացոլվում: Ավելի լայն մտքով նյութը «միջնորդավորությունների» (опосредствование) այսինքն՝ հարաբերությունների և կապերի անսահման, կոնկրետ ամբողջությունն ե: Եւ վ կոնկրետ գիտական դիսցիպլինները—մատեմատիկան, մեխանիկան, ֆիզիքան, քիմիան, բիոլոգիան և մյուսները—գործ ունեն «միջնորդավորությունների»,

այսինքն՝ նորից նույն նյութի պրոցեսների, հարաբերությունների և կապերի զանազան ֆորմաների ու աստիճանների հետ:

VI

Այսպիսով դուրս ե գալիս, վոր վոչ թե նյութն ե «կապված» հոգուն, այլ հոգին ե «կապված» նյութին: Բանականությունը բնության աննշան «մասնիկն» ե միայն, նրա ամենաբարձր պրոդուկտներից մեկը, նրա պրոցեսների արտացոլումը: Մենք գիտենք միայն մարդկային բանականության մասին: Իսկ իդեալիստները ձգտում են այդ մարդկային բանականությունը դարձնել «արտաբնական», այսինքն՝ ունիվերսալ բանականություն: Յեւ ըստ այնմ ինքը բնությունը դառնում ե մի մասնիկը այդ մարդկային բանականության՝ վորն «ընդարձակվում ե» մինչեւ «արտաբնական», այսինքն՝ բացարձակ բանականության աստիճանը: Միթե ակներեւ չե այդպիսի կառուցվածքի անհեթեթությունը: Ավենարյուսը—եմպիրիոկրիտիցիզմի կամ մախիզմի հիմնադիրը — փորձում ե վանել այդ անհեթեթությունը նրանով, վոր մտցնում ե «պոտենցիալ» կենսորոնական անդամի հասկացողությունը, այսինքն՝ միստիքական պոտենցիալ գիտակցության հասկացողությունը: Իբրեք, յեթե միջավայրը, այսինքն՝ արտաքին աշխարհը, անքակտելիորեն կապված ե գիտակցության հետ, հապա ինչպես կարող ե այդ աշխարհը, այսպես կոչված «հակաանդամը», ըստ Ավենարյուսի տեղմինողգիայի, գոյություն ունենալ այն ժամանակ, յերբ «կենսորոնական անդամը» (գիտակցությունը) գտնվում ե դեռ եմպիրիոնալ դրություն մեջ: Աշխարհը վերացումից փրկելու, կամ ավելի ճիշտ՝ իր թեորիան փրկելու համար Ավենարյուսը մտցնում ե «պոտենցիալ» կենսորոնական անդամի հասկացողությունը: Լենինը բացում ե հարցը այդ կերպ դնելու ամբողջ անհեթեթությունը: «Այսպես, ասում ե նա, — կոորդինացիան անքատելի յե: Այս պնդումը պարտադիր ե եմպիրիոկրիտիկի համար, նրա փիլիսոփայության հիմունքների, զգացողությունների և նրանց կոմպլեկսի փրկության նպատակով: Մարդը այդ կոորդինացիայի կենսորոնական անդամն ե (այսինքն՝ արտաքին աշխարհը գոյություն ունի՝ միայն անքակտելիորեն կապված մարդկային գիտակցության հետ. Ա. Դ.): Իսկ յեթե չկա մարդը, յերբ նա դեռ չի ծնվել, այնուամենայնիվ կենսորոնական անդամը հավասար չե գերոյի, նա դարձել ե միայն պոտենցիալ կենսորոնական անդամ: Կա-

րելի յե միայն զարմանալ, թե ինչպես կարող են գտնվել մարդիկ, վորոնք ընդունակ լինեն լրջորեն ճանաչել այնպիսի մի փիլիսոփայի, վորը հրամայում է նման դատողություններ, — վրդոված բացականչում է Լենինը: Միթե սա միտքիկա չե, — շարունակում է Լենինը, — միթե սա ֆիդելիթի միտքիկա չե: Յեթե կարելի չե մտածել պոտենցյալ կենտրոնական անդամ ապագա միջավայրի վերաբերյալ, հապա ինչո՞ւ չմտածել ա՛յն ա ն ց յ ա լ միջավայրի վերաբերյալ, այսինքն՝ մ ա ռ դ ու մ ա հ ի ց հ ե տ ո ՞ ՞ *): Լենինի այս նկատումից չի կարելի ազատվել նյութի «վորոշման» վերաբերող հակապահանջներ դնելով: Յեվ միթե Լենինը ճշմարիտ չե, յերբ նա ցույց է տալիս, վոր այդ «միտքիկան» ուղիղ ճանապարհով տանում է դեպի թեոլոգիան: Իրոք, այդպիսի թեոլոգիական յեզրակացություններ արվում են, յեթե վոչ Ավենարյուսի և նրա ուսու հետևորդները կողմից, գոնե իմանենալ դպրոցի դեկավարների, որինակ սուլիպիստ Շուբերտ—Ջոլդերնի և ուրիշների կողմից: Լենինը մեր մյուս մատերիալիստների հետ միասին բոլորովին ճիշտ կերպով պաշտպանում է այն միտքը, թե եմպիրիոկրիտիկների և իմանենատականների միջով սկզբունքային տարբերություն չկա, և վոր նրանք յերկուքն ել հավասարապես կանգնած են իդեալիստական տեսակետի վրա:

Ի՞նչ դիրք են բռնում իմանենատականները այս հարցի վերաբերյալ: Շիբը չի կարող գոյություն ունենալ անկախ մեր գիտակցությունից. մենք միշտ ինքներս մեզ մտածում ենք, վորպես բանականություն, վոր ձգտում է իմանալ ալդ իրը: Եմպիրիոկրիտիկական կոորդինացիան, իհարկե, վոչնչով չի տարբերվում այդ սոֆիստիկայից: «Այդ թեորիայի սոֆիստիկական այնքան ակնբախ է, վոր անհարմար է վերլուծել այն», իրավացիորեն ասում է Լենինը: Յեթե մենք մեզ «մտածում ենք», ապա մեր ներկայությունը յ եր ե վ ա կ ա յ ա կ ա ն կլինի, իսկ յերկրի գոյությունը նախ քան մարդու ծագումը՝ իրական է: Իրապես, յերկրի շիկացած դրությունը, զորորինակ, մարդը տեսնել չե՞ր կ ա ռ ո ՞ ՞, ըստ վորում և «մտածել» նրա ներկայությունը ո բ ս կ ու ռ ա ն տ ի դ մ կլինի, ճիշտ այնպես, յեթե յես պաշտպանելի դոկտրին գոյությունը այսպիսի փաստարկումով «յեթե յես մտածելի» ինքս ինձ, վորպես դիտող, ապա յես կարող կլինելի դիտել դոկտրինը» **): Այս արմատական սոֆիզմ

*) Նույն տեղը, էջ 57.

**) Նույն տեղը, էջ 58.

մ ի ն է հանգում ժամանակակից բուրժուական ամբողջ փիլիսոփայությունը, ըստ վորի բնությունը, նյութը չեն կարող գոյություն ունենալ անկախ մտքից: Այդ սոֆիզմը համարյա բոլոր դպրոցական հոսանքների, այսինքն՝ իշխող փիլիսոփայության լծակն է, նրա կենտրոնական կետը: Մարքսիզմը կամ մատերիալիզմը ինքն իրեն հակադրում է իդեալիզմի բոլոր յերանգներին և ուղղություններին, վորպես միակ փիլիսոփայական ուղղությունը, վոր գիտական լինելու իմաստով խիստ հետեւողական է և բացասում է միտքիքական ու իդեալիստական բոլոր թեքումները, ինչպիսի գգեստներով ել նրանց «կրողները» զարդարված լինեն: Մատերիալիզմն անմիացնելի յե այդ բոլոր «հնարքները» հետ և արմատով նրանց դեն է շարտում: Նա պայքարում է և պետք է պայքարե մարքսիզմի, ինչպես և մարդկային տրամաբանություն խեղաթյուրումների դեմ: Լենինը, վորպես մարտնչող մատերիալիստ միշտ անողոք պայքար է մղել բոլոր նրանց դեմ, ովքեր մտցնում են «մասսայի մեջ կատարելապես ֆիդելիզմին մոտեցող» փիլիսոփայություն:

Այսպես, յեթե ճիշտ է, — իսկ դա անկասկած ճիշտ է, — վոր բնությունը գոյություն ունեն գիտակցությունից առաջ՝ ապա նշանակում է նա իրենից ներկայացնում է սկզբնականը, իսկ գիտակցությունը կամ բանականությունը, ինչպես ճիշտ ասում է Լենինը, կազմում են միայն բնության մասնիկը, բնության արդյունքը, այսինքն՝ ինչ վոր առաջացած է յերկրորդական մի բան: Յեթե ապացուցված է, վոր առանց ուղեղի չկա միտք, վոր միտքը բարձր-կազմակերպված նյութի արդյունքն է, ապա դրանով հենց նորից ապացուցված է արդեն, վոր հոգին չի կարող սկզբնական լինել և չի կարող իրենից նյութ ծնել: Մատերիալիզմը յեղնում է մեր գիտակցությունից դուրս գոյություն ունեցող հավիտյան շ ա ռ ժ վ ո ՞ ՞ և փ ո փ ո խ վ ո ՞ ՞ ն յ ու թ ի ճանաչումից: Իդեալիզմը հետեւողական լինելով, պետք է ընդունի, վոր միտքը գոյություն ունի առանց ուղեղի, իսկ շ ա ռ ժ ու մ ը՝ առանց նյութի: Յեվ իսկապես, «շարժումն առանց նյութի մտածելու վորձը առաջադրում է նյութից պոկված մտքի գոյությունը: Սակայն նյութի վոչնչանալով, վոչնչանում է և միտքը: «ուղեղի և նյարդային սիստեմի վոչնչացման հետ անհետանում են և մտապատկերներն ու զգացողությունները», անհետանում է ամեն ինչ: Այսպես մենք հաջող հանգում ենք փիլիսոփայության մեջ յերկրորդ հիմնական գծին, իդեալիզմին, վորը սկզբնականը համարում է հոգին կամ միտքը: Սակայն դուրս է գալիս,

վոր իրապես չի կարելի պատկերացնել մտքի գոյությունը առանց նյութի, վորովհետև վե՛ր վո՛ր չի տրված տեսնել միտքը առանց նյարդային սխտեմի և ուղեղի: Ուրեմն մնում է միայն մի հնարավորություն՝ ընդունել, վոր այն ամենը, ինչ գոյություն ունի, ներառյալ և գիտակցությունը, նյութ է: Յե՛ւ նյութն է այն ամենաբարձր կամ վերջին հասկացողությունը կամ ռեալականությունը, վոր պարփակում է իր մեջ յերեվոյթները ամբողջությունը: «Իհարկե, նյութի և գիտակցության հակադրությունը բացարձակ նշանակություն ունի շատ սահմանափակ բնագավառի սահմաններում, տվյալ դեպքում բացառապես իմացաբանական այն հիմնական հարցի սահմաններում, թե ինչն ընդունել սկզբնական, և ինչը՝ յերկրորդական: Այդ սահմաններից դենը տվյալ հակադրությունների հարաբերականությունը անկասկած է»*):

VII

Տարածության և ժամանակի պրոբլեմը, ինչպես և նյութի պրոբլեմը, Լենինը վեր է լուծում նույն մատերիալիստական իմաստով: Նրա տեսակետից նյութը, մեր զգացողությունների մեջ արտացոլվող ռեալականություն է: Նյութի ֆիզիքական հասկացողությունը տալիս է մեզ այդ որյեկտիվ ռեալականության հարաբերական պատկերը: Բոլոր ֆիզիքական ուսմունքները միայն մոտեցումներ են՝ դեպի որյեկտիվ ռեալականությունը: Նրանք մարդկային գիտելիքի հաջողություններից կախված՝ շարունակ փոփոխվում են: Դրա համար, պետք է զանազանել նյութի փիլիսոփայական հասկացողությունը և ֆիզիքական ուսմունքը նյութի մասին: Ճիշտ նույն դրություն մեջ են ժամանակի և տարածության հասկացողությունները, վորոնք մատերիալիստի համար ամենից առաջ վոչ թե դատողության ֆորմաներ են, այլ կացության ֆորմաներ, այսինքն՝ որյեկտիվ «կատեգորիաներ»: «Աշխարհում չկա վոչինչ, բացի շարժվող նյութից, և շարժվող նյութը չի կարող շարժվել այլ կերպ, յեթե վոչ ժամանակի և տարածության մեջ: Մարդկային մտապատկերները ժամանակի և տարածության մասին հարաբերական են, սակայն այդ հարաբերական հասկացողություններից է, վոր կազմվում է բացարձակ ճշմարտությունը. այդ հարաբերական մտապատկերները, զարգանալով, ընթանում են արքայուտ ճշմարտության գծով, մոտենում են նրան: Տարածության և ժամանակի մասին մարդկային մտապատկերների փոփոխականությունը նույնքան քիչ է հեր-

*) Նույն տեղը, էջ 119.

քում ժամանակի և տարածության որյեկտիվ ռեալականությունը, ինչպես վոր նյութի կազմության և շարժման ձևերին վերաբերող գիտական գիտելիքների փոփոխականությունը չի հերքում որյեկտիվ ռեալականությունը և արտաքին աշխարհը»*):

Ժամանակի և տարածության միշտ փոփոխվող մարդկային մեր հասկացողությունները և որյեկտիվորեն գոյություն ունեցող իրական ժամանակն ու իրական տարածությունը տարբեր բաներ են: Ժամանակի և տարածության մեր զարգացող և փոփոխվող հասկացողությունները այնպիսի բան չեն, վոր կախված չլինեն ռեալ ժամանակից և տարածությունից: Ընդհակառակը, նրանք ռեալ ժամանակի և տարածության արտացոլումներ են և որյեկտիվ ճշմարտության մոտեցումները: Յեթե իմացաբանությունը լուծում է մարդկային ամեն մի գիտելիքի աղբյուրի, ծագման և նշանակալիության հարցը, ապա նա այս հարցին ել պետք է պատասխան տա այն իմաստով, վոր տարածության և ժամանակի մեր հասկացողությունների աղբյուրը հանդիսանում է որյեկտիվ ռեալականությունը, որյեկտիվ ժամանակն ու տարածությունը:

Լենինը, վորի մեջ ամենից առաջ միշտ պոլիտիկն է խոսում, վորն ամբողջ հոգով ատում է այն ամենը, ինչ այս կամ այն կերպ, ուղղակի կամ անուղղակի, հանգում է ֆիզիքիզմին և ռեալիցիոն ուղղությունների ուժեղացման, թունոտ նկատում է, վոր «յեթե ժամանակն ու տարածությունը միայն հասկացողություններ են, ապա այդ հասկացողություններն ստեղծող մարդկությունը իրավունք ունի դուրս գալ նրանց սահմաններից, իսկ բուրժուական պրոֆեսորները իրավունք ունեն ռոճիկ ստանալ ռեալիցիոն կառավարություններից այդ յեղքի որինականությունը և միջնադարյան «անհեթեթությունը» ուղղակի կամ անուղղակի կերպով պաշտպանելու համար»**):

Ովքեր ընդունում են ժամանակը և տարածությունը միայն իբրեւ մարդկային հասկացողություններ, դրանց տեսակետով վոչ թե մարդն է գտնվում ժամանակի և տարածության մեջ, այլ ժամանակը և տարածությունն են գտնվում մարդու մեջ: Այդ իդեալիստական տեսակետի վրա յեն կանգնած ինչպես Կանտը և նրա հետեւորդները, նույնպես և Մախը իր կողմնակիցների հետ: Կասե՞ք մենք, թե ժամանակը և տարածությունը մարդկային, «կազմակերպվող» մտքի

*) Նույն տեղը, էջ 143.

**) Նույն տեղը, էջ 145.

արդյունք են, կամ թե՛ նրանք զգացողությունների շարքերի, կարգի բերված» և ներդաշնակված սխտեմներ են, մարդկային հայեցողության ֆորմաներ, — այս բոլոր դեպքերում մենք կանգնած ենք իդեալիստական տեսակետի վրա: Ռեկյատիվիզմը, հակառակ դիալեկտիկայի, տեսնում է միայն ժամանակի և տարածության փոփոխվող հասկացողությունները, անընդունակ լինելով կապել նրանց որբեկտիվ ռեալականության հետ, դիտել այդ հասկացողությունները, վորպես հարաբերական մոտեցում դեպի որբեկտիվ ռեալականությունը: Ուստի ռեկյատիվիզմի համար յուրաքանչյուր հարաբերական «աստիճան» փոխվում է արտոյուտի, ծածկում է իրենով կարծես թե ամբողջ իրականությունը: Ճիշտ է, Մախը հակառակ կանտի, կողմնակից է ժամանակի և տարածության հասկացողության ծագմանը փորձից: Սակայն այդ դեպքում անհրաժեշտ է ընդունել, վոր փորձում տրված է մեզ որբեկտիվ ռեալականությունը, այսինքն՝ որբեկտիվ ժամանակն ու տարածությունը: Հակառակ դեպքում ստացվում է մի հակասություն, ըստ վորի Մախը և նրա հետեւորդները քարանում են ժամանակի ու տարածության հասկացողության վրա: «Յեթե ժամանակի և տարածության զգացողությունները մարդուն կարող են տալ բիոլոգիայես նպատակահարմար ուղեցույց, ապա բացառապես միայն այն պայմանով, վոր այդ զգացողությունները արտացոլեն մարդուց դուրս գտնվող որբեկտիվ ռեալականությունը: Մարդը չէր կարող բիոլոգիայես հարմարվել միջավայրին, յեթե նրա զգացողությունները չտային նրան միջավայրի որբեկտիվ ուրեքն — ճիշտ մտապատկերը»: «Յեթե ժամանակի և տարածության ռեալատիվ, հարաբերական հասկացողության մեջ վոչինչ այլ բան չկա, բացի հարաբերականությունից, յեթե չկա որբեկտիվ (թե մարդուց և թե մարդկությունից անկախ) ռեալականություն, վոր արտացոլվում է այդ հարաբերական հասկացողություններով, ապա ինչո՞ւ համար մարդկությունը, մարդկության մեծամասնությունը իրավունք չպիտի ունենա ժամանակից ու տարածությունից դուրս գոյություն ունեցող եյակների մասին հասկացողություն ունենալ»*):

Մի խոսքով, յերբ մենք հարաբերական հասկացողությունները պոկում ենք որբեկտիվ ռեալականությունից, յերբ մենք մետաֆիզիկորեն ենք դիտում այդ հասկացողությունները, նրանց անշատ և իրականությունից՝ կտրված դրություն մեջ, մենք անխուսափելի կերպով

*) Նույն տեղը, էջ 149.

պով հանգում ենք իդեալիզմի: Լենինը ամբողջ իր կրքոտությամբ և համոզմունքով պաշտպանում է մարքսիզմը կամ մատերիալիզմը ամեն տեսակի խեղաթյուրումներից: Բացի այն զուտ տեսական նկատումներից, վորնա բերում է իդեալիստական հայացքները հերքելու համար, Լենինի զուտ փիլիսոփայական գրվածքների յուրաքանչյուր տողում զգացվում է քաղաքական ագիտատորը, ամեն տեսակի եքսպլոատացիայի, տերտերականության ատողը և կրքոտ պայքարողը՝ հանուն «մարդկության ճնշված մասսաների» շահերի: Ամենավերացական պրոբլեմները նա քննում է պրոլետարիատի շահերի և սոցիալիզմի զարգացման տեսակետից: Յեվ այդ ճիշտ է: Մարտնչող մատերիալիզմը միայնակիսի աշխարհայացք է, վոր ամենասերտ կերպով կապված է մարդկության «պրակտիկայի» հետ: Նա զուտ «թերեթափական» ինչ վոր մի բան չէ: Ներքեվում կտեսնենք, վոր Լենինը ամեն մի փիլիսոփայական ուղղության մեջ տեսնում է դասակարգերի պայքարն արտացոլող գաղափարների պայքարը:

Պոկել Ենգելսի՝ ժամանակի ու տարածության մարդկային հասկացողությունների հարաբերականության վերաբերող ուսմունքը ժամանակի և տարածության որբեկտիվ ռեալականությունից, — նշանակում է մարքսիզմը, վոր մի ամբողջական փիլիսոփայություն է, «շիլափիլով» դարձնել: Լենինի համար, դա նշանակում է խեղաթյուրել մարքսիզմը, գլորվել դեպի իդեալիզմը, ռեվիզիոնիզմը և անցնել բանվոր դասակարգի թշնամիների բանակը: Ռեկյատիվիստների հիմնական թեորետիքական սխալն այն է, վոր նրանք շփոթում են ժամանակի ու տարածության մարդկային հասկացողությունների փոփոխականությունը և նրանց բացառապես հարաբերական բնույթը՝ այն փաստի անփոփոխականության հետ, վոր մարդը և բնությունը գոյություն ունեն միայն ժամանակի ու տարածության մեջ, իսկ ժամանակից և տարածությունից դուրս գոյություն ունեցող եյակները, վոր ստեղծված են տերտերականության կողմից և պահպանվում են մարդկության ճնշված մասսաների խավար յերեվակայությունով, դրանք միայն հիվանդ ֆանտազիաներ են, փիլիսոփայական իդեալիզմի ծամածուրծություններ, անպետք հասարակարգի՝ անպետք արդյունք: Դիտության ուսմունքը նյութի կազմության, աննդիքի միական բաղադրիչ մասերի, ատոմի և էլեմենտների մասին կարող է հնանալ և հնանում է որեցոր, սակայն չի կարող հնանալ

այն ճշմարտությունը, թե մարդը չի կարող սնվել մտքերով և յերեսաներ ծնել՝ լոկ միայն պլատոնական սիրով: Իսկ ժամանակի և տարածության որչեկտիվ ռեալականութունը բացասող փիլիսոփայությունը նույնքան անհեթեթ է, ներքնապես փթած և կեղծ, ինչպես և այդ վերջին ճշմարտությունների բացասումը: Իդեալիստների և ագնոստիկների խորամանկությունները ընդհանուր առմամբ նույնքան կեղծ են, վորքան և փարիսեցիների պլատոնական սիրո քարոզները*):

Ամփոփելով այս բաժնում Լենինի հայացքները նյութի, ժամանակի ու տարածության վերաբերյալ, մենք գալիս ենք հետևյալ յեզրակացություններին: Ձանազան զգայարանների միջոցով մենք ըմբռնում ենք նյութական իրականությունը, որչեկտիվ ռեալականությունը: Այս «հարաբերական» ըմբռնումներից մարդկությունը, յերկար պատմական փորձի և գործազման, այսինքն՝ պրակտիկայի շնորհիվ, մշակում է նյութի ժամանակի ու տարածության վերացական հասկացողությունները. այդ հասկացողությունները մենք չենք հնարել, ընդհակառակը, նրանց համապատասխանում են մարդկությունից և նրա փորձից անկախ, որչեկտիվ ռեալականություններ: Մեր «փորձը» և մեր իմացությունը ավելի և ավելի յե հարմարվում ոբյեկտիվ տարածության ու ժամանակին (ինչպես և որչեկտիվ նյութին, Ա. Դ.), ավելի ու ավելի ճիշտ և խորը կերպով արտացոլելով նրանց):

VIII

Իդեալիստները վոչ միայն ժամանակն ու տարածությունն են հայտարարում գիտակցության սուբյեկտիվ ֆորմաները, այլև պատճառականությունը, որին աշխարհագրական ու անհրաժեշտությունը: Մատերիալիզմը այս հարցումն ել կանգնած է տրամադծորեն հակադիր տեսակետի վրա: Յեղնելով արտաքին աշխարհի որչեկտիվ իրականության ճանաչումից, մատերիալիստը, իհարկե, միանգամայն հետեւողական կերպով ընդունում է նույնպես և որչեկտիվ որին աշխարհագրական, պատճառականությունն ու անհրաժեշտությունը: Յեւ այս պրոբլեմի վերաբերյալ Լենինը, համաձայն լինելով Նիցեիսի ու ընդհանրապես գիտելիության մատերիալիզմի հետ, տարբերություն է անցընում մեր հասկացողություններում մոտավորապես արտացոլվող որին աշխարհագրական ու պատճառականության և մեր հասկացողությունների

*) Նույն տեղը, էջ 152.

ու մեր ամեն մի իմացության աղբյուրն հանդիսացող որին աշխարհագրական միջով: Մենք վերացական հասկացողություններ ենք մշակում այն տրապավորություններից ու զգացողություններից, վոր մեզ տալիս է արտաքին աշխարհը: Մատերիալիզմի տեսակետից պատճառական կախումը գտնվում է հենց իրերի մեջ, կամ ավելի ճիշտ, նա արտահայտում է վորոշ հարաբերություն ռեալ իրերի միջով: Սակայն մաթիստները, ինչպես հայտնի յե, փորձում եյին «դուրս վանել» պատճառականության կատեգորիան, համարելով այն ֆեմտիշ, և առաջարկում եյին փոխարինել այդ միանգամայն վորոշ հասկացողությունը «ֆունկցիոնալ կախումով»: Բայց չե վոր հարցը բոլորովին այլ բանի յե հանգում, և այստեղ, ինչպես ճիշտ նկատում է Լենինը, որչեկտիվ որին աշխարհագրական վերաբերող հարցը փոխում են այդ որենքի մատեմատիքական ձեւով և երկրպագան հարցով: «Փիլիսոփայական ուղղությունները զատող իսկապես կարելիոր իմացաբանական հարցը կայանում է վոչ թե նրանում, թե ճշտության վոր աստիճանին են հասել պատճառական կապերի մեր նկարագրումները, և կարող են արդյոք այդ նկարագրումները արտահայտվել մատեմատիքական ֆորմուլի մեջ,—այլ նրանում, թե այդ կապերի մեր իմացության աղբյուրը բնության որչեկտիվ որին աշխարհագրական է հանդիսանում թե՛ մեր խելքի հատկությունը, նրան հատուկ ընդունակությունը՝ իմանալ վորոշ ապրիոր ճշմարտություններ և այլն: Ահա ինչն է անդարձ կերպով բաժանում մատերիալիստ ֆեյերբախին, Մարքսին և Նիցեիսին ագնոստիկներից, (յումիստների) Ավենարիսից և Մախից»): Իսկ յեթե բնությունը ինքնըստինքյան չի յենթարկված վորոշ որին աշխարհագրական, յեթե «պատճառականության որենքը» միայն մեր խելքի հատկությունն է, հապա ինչո՞ւ բնությունը յենթարկվում է մեր բանականությանը: Յեթե պատճառի և գործողության միջով չկա անհրաժեշտ ոբյեկտիվ կապ, հապա ինչո՞ւ պատճառը չի կարող գործողությանը հետեւել: Ինչո՞ւ ժամանակը, վոր կազմում է իրականության եյական «տարրը» և նրա որին աշխարհագրական, յետ չի դարձվում: Յերբ Լենինը գրում եր իր գիրքը մատերիալիզմի և եմպիրիոկրիտիցիզմի մասին, նա չեր կարող նախատեսել, վոր հարաբերականության թեորիան իսկապես կկանգնի մի այնպիսի տեսակետի վրա, ըստ վորի «հետոն» ու «առաջ»-ը կարող են փոխել իրենց տեղերը: Բանից դուրս է գալիս, ամենեվին պարտադիր չե, վոր յես առաջ ծնվեմ, հետո կամաց-կամաց ծերանամ ու մեռնեմ: Հա-

*) Նույն տեղը, էջ 129.

րաբերականութեան թեորիայի տեսակետից յետ կարող եմ իմ կյանքը վերջից սկսել և կամաց-կամաց հասնել մինչեւ ծնունդը: Ամբողջ աշխարհը, ամբողջ կյանքը, մեր ամբողջ պրակտիկան տակնուվրա անող այս սոփիստիկան հենվում ե նույն իմացաբանական սկզբունքների վրա, ինչպես և մախիզմը, յումիզմը և այլն: Բարեբախտաբար իրականութեան մեջ դրուժյունն այլ ե: Ժամանակը, գուցե, ֆանտազիայի մեջ, վերացական հասկացողութեաններէ աշխարհում կարող ե յետ դարձվել, բայց վոչ ուշալ աշխարհում: Ամբողջ խնդիրն հենց դրանումն է: Ընթերցող, պատկերացրե՛ք մի րոպե, վոր ժամանակը ուրեմն և պատմութեանը և բնութեան բոլոր պրոցեսները յետ հոսեյին: Կինեմատոգրաֆի համար այդ հնարավոր ե, սակայն իրական կյանքում բանն ավելի բարդ է: Դժվար ե պատկերացնել, թե ինչպես ժամանակի մեջ հետեւմանքը կարող ե նախորդել պատճառին: Սակայն Ենշտեյնի հարաբերականութեան թեորիայից այսպիսի միատիքական յեզրակացութեաններ են արվում: Ծիշտ նույնը կատարվում ե որին աշխարհի մասնակցութեան ու պատճառականութեան նկատմամբ: Հակառակ այդ տեսակետին, մատերիալիզմը պետք ե պաշտպանի որքեկտիվ, որին աշխարհական և անհրաժեշտ կապը յերեւոյթների միջեւ, նախորդող պատճառի և նրան հետեւող գործողութեան միջեւ: Յեւ մատերիալիզմը իրավացի կլինի, վորովհետեւ նա կանգնած ե կոնկրետ և ուշալ իրականութեան հողի վրա, իսկ հարաբերականութեան թեորիան գործ ունի ամենագուտ արատրակցիաների, մատեմատիքական ֆիկցիաների հետ:

Ինչ վերաբերում ե ազատութեան և անհրաժեշտութեան պրոբլեմին, այդ պրոբլեմներն նկատմամբ յեւս Լենինը կանգնած ե մարքսիզմի տեսակետի վրա և անց ե կացնում նույն մեթոդոլոգիական ու իմացաբանական սկզբունքները, ինչպես և ժամանակի ու տարածութեան, նյութի և պատճառականութեան պրոբլեմների վերաբերյալ: Որքեկտիվ աշխարհը և նրա որեւէները միանգամայն իմանալի յեն մարդու համար, բայց յերեւե նրանք իմացվել չեն կարող մինչեւ վերջ: Որքեկտիվ անհրաժեշտութեանը գոյութեան ունի, և մարդն այդ անհրաժեշտութեանը կարող ե իմանալ, բայց կարող ե և չիմանալ: Վորչափով նա իմացված ե, անհրաժեշտութեանը կույր ե: Սակայն յեթե անհրաժեշտութեանը կույր ե, այսինքն՝ չի իմացված, հապա վորտե՞ղից մենք գիտենք նրա գոյութեան մասին: Այս հարցին Լենինը պատասխանում ե. — «Մենք չգիտենք բնութեան անհրաժեշտութեանը յեղանակի յերեւոյթների մեջ, և այդ չափով մենք անխուսափելիորեն յեղանա-

լի ստրուկներն ենք: Սակայն, չգիտենալով այդ անհրաժեշտութեանը, մենք գիտենք, վոր նա գոյութեան ունի: Վորտե՞ղից ե այդ գիտելիքը: Այնտեղից, վորտեղից այն գիտելիքը, թե իրերը գոյութեան ունեն մեր գիտակցութեանից դուրս և նրանից անկախ: Այդ գիտելիքն ստանում ենք հենց մեր գիտելիքների զարգացումից, վոր միլիոնավոր անգամ ցույց ե տալիս յուրաքանչյուր մարդուն, վոր մեր չգիտենալը փոխվում ե գիտելիքի, յերբ առարկան ներգործում ե մեր զգայարանքների վրա և ընդհակառակը՝ գիտելիքը փոխվում ե չգիտենալուն, յերբ այդպիսի ներգործութեան հնարավորութեանը վերացված ե»^{*)}: Փորձը մեզ սովորեցրել ե՝ ամեն տեղ, բնութեան բոլոր յերեւոյթների մեջ անհրաժեշտ կապ տեսնել: Յեթե մենք դեռ վորոշ դեպքերում չենք իմացել այդ անհրաժեշտութեանը, այնուամենայնիւ մենք գիտենք, վոր այդ դեպքերը չեն կարող ընդհանուր որեւէից բացառութեաններ կազմել: Անհրաժեշտութեան որեւէը հաստատվում ե անթիւ դեպքերում և հենց դրանով ել ապացուցում ե իր ընդհանրութեանը: Նշանակում ե, մենք կարող ենք սվյալ կոնկրետ դեպքում դեռ չգիտենալ յերեւոյթի որեւէը, սակայն մենք հաստատ գիտենք, վոր որեւէը կամ անհրաժեշտութեանը գոյութեան ունի, վորովհետեւ «միլիոնավոր» դեպքերից մենք հանգել ենք ընդհանուր որեւէի հաստատման, վորն ընդգրկում ե դրանց թվում, այսպես ասած վերացականորեն, և մեզ դեռ անհայտ այս դեպքը: Ուստի դիալեկտիկորեն դատելով, չգիտենալով վոչ թե բացարձակ չգիտենալ ե, այլ միայն հարաբերական չգիտենալ: Զգիտենալն այն մտքով, ինչպես մենք այդ պարզել ենք, միջինումն ժամանակ արդեն և գիտելիք ե—ընդհանուր վերացական որեւէի գիտելիքն, վորը պետք ե կոնկրետ, առանձին դեպքերում մասնագիտորեն ուսումնասիրվի, մասնագիտորեն իմացվի: Ծճմարտութեան կրիտերիան, ինչպես արդեն գիտենք, պրակտիկան ե: Հարկադրելով բնութեան որեւէներին՝ գործել վորոշ նպատակների համար, մենք ստուգում ենք նրանց ճշտութեանը և որքեկտիվութեանը: Ազատութեանը կայանում ե այդ որեւէները գիտենալու և այդ գիտելիքի հիման վրա գործելու հնարավորութեան մեջ: Պաշտպանելով «սալտոյիտալ» մեթոդը փիլիսոփայութեան բնագավառում, այսինքն՝ թռչելը թեորիայից դեպի պրակտիկան, թեորիայի ստուգումը պրակտիկայով, — մի մեթոդ, վոր առաջադրված ե մարքսիզմի

*) Նույն տեղը, էջ 156.

հիմնադիրները կողմից, Լենինը մասնաճյուղում է այդ արմատական տարբերության վրա մարքսիզմի և բուրժուական փրկիսոփայության միջով: Վերջինս «փախչում» է պրակտիկայից և գերադասում է միշտ մնալ արստրակցիայի, «գուտ թեորիայի» եմպիրեյանների շրջանակում: «Ենգելսի մոտ — ասում է Լենինը, — ամբողջ կենդանի մարդկային պրակտիկան խուժում է հենց իմացաբանության ներսը, տալով ճշմարտության որոշակի կտիվ կրիտերիան: քանի դեռ մենք չգիտենք բնության որեւէ բան, նա, գոյություն ունենալով և գործելով մեր իմացությունից դուրս, մեզ դարձնում է «կույր անհրաժեշտություն» ստրուկներ»: Հենց վոր մենք իմացանք այդ որեւէ բան, վոր գործում է, (ինչպես հազարավոր անգամ կրկնում եր Մարքսը) անկախ մեր կամքից և մեր գիտակցությունից, — մենք բնության տերն ենք: Բնության վրա իշխելը, վոր արտահայտվում է մարդկության պրակտիկայի մեջ, հետեւանք է բնության յերեվոյթներին և պրոցեսներին որբեկտիվ — ճիշտ արտացոլման մարդու գլխում: Նա ապացույց է այն բանի, վոր այդ արտացոլումը (այն սահմաններում, ինչ մեզ պրակտիկան է ցույց տալիս) որբեկտիվ, բացարձակ, հավիտենական ճշմարտություն է»*):

IX

Շարադրվածից պարզ է, թե վորն է այն տարբերությունը, վոր կա մատերիալիզմի և իդեալիզմի միջով: Մատերիալիզմը պնդում է, վոր սկզբնականը բնությունն ու կացությունն են, և նրանք գոյություն ունեն անկախ մարդուց, վոր մտածողությունը բնության կամ նյութական աշխարհի արդյունք է: Հարցի այսպիսի լուծման հետ զուգընթաց ծագում է մի նոր պրոբլեմ՝ թե մեր մտքերը աշխարհի մասին ինչ հարաբերության մեջ են գտնվում իրեն աշխարհի հետ, կամ մտածողությունը ինչ հարաբերության մեջ է կացության հետ: Ընդունակ է արդյոք մեր մտածողությունը իմանալ իրական աշխարհը, ստանալ նրա ուղիղ արտացոլումը: Իդեալիստները, ինչպես որինակ Կանտը, հաստատում են աշխարհի անիմանալիությունը, անդունդ են փորում «իրեն ինքնին», կամ որբեկտիվ աշխարհի և յերեվոյթների միջով: Ուրիշ իդեալիստներ, Յումի և Մախի տեսակի, բոլորովին ժխտում են «իրեն ինքնին» գոյությունը, այսինքն՝ արտաքին աշխարհը: Հարց է ծագում, սակայն, ինչպե՞ս է

*) Նույն տեղը, եջ 156

զարգանում մարդկային իմացությունը: «Յերեկ մենք չգիտեինք, վոր քարածխային մագնիսում ալիզարին գոյություն ունի: Այսօր մենք այդ իմացանք: Այստեղից պարզ է, վոր ալիզարին գոյություն ունի քարածխային մագնիսի մեջ և այն ժամանակ, յերբ մենք չգիտեինք այդ մասին: Իսկ յետե Կանտը, խոսելով իրեն ինքնին մասին, պնդում է, վոր նրանք սկզբունքորեն անմատչելի յեն գիտելիքին (այլ միայն հավատին են մատչելի), հապա նա միանգամայն սխալվում է և արտահայտում է միանգամայն անհեթեթ մի միտք: Վորովհետեւ, ինչպես մենք տեսանք ալիզարին առարկայի վերաբերյալ, իրն ինքնին դառնում է յերեվոյթ, այսինքն՝ իր մեզ համար, յերբ մենք այդ իրի մասին ստանում ենք վորոշ գագոյություններ: Կատարելապես վոչ մի սկզբունքային տարբերություն չկա և չի յել կարող լինել յերեվոյթի և իրն ինքնին միջով: Տարբերությունը լոկ նրանումն է, ինչ իմացված է, և նրանում՝ ինչ դեռ չէ իմացված»... այսպիսով «իմացաբանության, ինչպես և գիտության բոլոր գավառներում պետք է դատել իդեալիզմի կորուստը, — ասում է Լենինը, — այսինքն՝ մեր իմացությունը չընդունել պատրաստի և անփոփոխական ձեւով, այլ քննություն յենթարկել, թե ինչպես չգիտենալուց ծագում է գիտելիքը, թե ինչպես անկատար, վոչ ճիշտ գիտելիքը դառնում է ավելի լրիվ և ավելի ճշգրիտ»*):

Աշխարհի իմանալիություն կամ անիմանալիության այս հարցը տվյալ պայմաններում և հասարակական դասակարգերի տվյալ փոխհարաբերությունների շրջանակում «տարրերակ» կերպով լուծվում է այնպես, վոր բուրժուական միտքը բացասում է իրն ինքնին, արտաքին աշխարհի իմանալիությունը, մինչդեռ պրոլետարական միտքը և տակտիկան հենվում են որբեկտիվ աշխարհի իմանալիության վրա, սկզբունքով հնարավոր գտնելով այն տիրապետել: Մի կողմից, դպրոցական, բուրժուական փրկիսոփայությունը առաջարկում է մեզ հավատալ միայն արտաքին աշխարհի գոյությանը, իսկ մյուս կողմից մատերիալիստական փրկիսոփայությունը հաստատում է, վոր մեր գիտելիքը զարգանում է չգիտենալուց, վոր այդ գիտելիքը կրում է միայն հարաբերական բնույթ, և վոր իմացաբանության հիմքը կազմող կենդանի մարդկային պրակտիկան ամեն որ ապացուցում է մեզ «իրեն ինքնին» յերեվոյթների փոխվելը, այսինքն՝ փոխվել իրերի մեզ համար: Մեր իմացության մեջ սուբյեկտիվ մարդկային մտապատկերներին համապատասխանում են ու-

*) Նույն տեղը, եջ 80

յալ առարկաները: Ճիշտ այդպես և «մարդկային պրակտիկան», — ինչպես արտահայտվում է Լենինը, — ունի վոչ միայն ֆենոմենալ, այլևս ոբյեկտիվ-ռեալ նշանակություն: Մարդու իմացությունը արտացոլում է բացարձակ ճշմարտությունը. մարդկության պրակտիկան, ստուգելով մեր մտապատկերները, հաստատում է նրանց մեջ այն, ինչ համապատասխանում է բացարձակ ճշմարտության: Մենք մեր պրակտիք գործունեություն մեջ փոփոխում ենք վոչ միայն յերեվոյթները, այլևս հենց իրերը, ոբյեկտիվ ռեալականությունը: Այս իմաստով մեր գործունեությունը ինչպես և մեր իմացությունը, ունի վոչ միայն ֆենոմենալ, այլ ոբյեկտիվ-ռեալ նշանակություն:

Սակայն միանգամայն ակնբախ է, վոր այսպիսի ընդլայտումն արտացոլությունը և պրակտիք գործունեությունը հնարավոր են միայն այն դեպքում, յեթե մենք հնարավորություն ունենք հասնել մինչև ոբյեկտիվ աշխարհը, յեթե մեր իմացությունը կազմում է իրականության արտացոլումը: Դրա համար Լենինը առարկում է սիմվոլների կամ իյերոգլիֆների թեորիայի դեմ, ըստ վորի մեր մտապատկերները կազմում են միայն իրերի պայմանական նշանները: «Յեթե զգացողությունները իրերի պատկերները չեն, այլ միայն սիմվոլներ կամ նշաններ, «վոչ մի նմանություն» չունեն նրանց հետ, հապա դրանով արտաքին առարկաների գոյությունը վորոշ կասկածանքի յե յենթարկվում, վորովհետեւ նշանները կամ սիմվոլները միանգամայն հնարավոր են յերեվակայական առարկաների վերաբերյալ, և ամեն ոք գիտե այդ պիսի նշանների կամ սիմվոլների որինակներ»^{*)}:

Լենինը միանգամայն ճիշտ էր իր առարկությունների մեջ սիմվոլների կամ իյերոգլիֆների թեորիայի դեմ: Ընթերցողը գիտե, վոր Պլեխանովն, ընդհանրապես ասած, չի կանգնած իյերոգլիֆյական տեսակետի վրա, և վոր նա ընդունեց իր տերմինոլոգիայի վոչ ճիշտ լինելը, վորովհետեւ Պլեխանովի մոտ խնդիրը միայն տ էր մի-ն ու զ ի ա յ ի ն էր վերաբերում, սակայն վոչ թե հարցի եյ ու թ յ ա ն: Սիմվոլների թեորիան անկասկած տանում է դեպի իդեալիզմ: Յեւ չեւ չեւ հեւ հեւ, վորը կողմնակից էր սիմվոլների թեորիային, ալիզմ: Յեւ չեւ չեւ հեւ հեւ, վորը կողմնակից էր սիմվոլների թեորիային, չնայած նրա փրկափառական հայացքների ուժեղ մատերիալիստական ջղին, իրապես հաճախ սայթաքում էր դեպի իդեալիզմ: Յերբ նշանավոր գիտնականը գրում է, թե «իդեան և այդ իդեայով

^{*)} Նույն տեղը, էջ 125.

պատկերացվող ոբյեկտը, յերկու բաներ են, վոր պատկանում են, ակնհայտնի կերպով, յերկու միանգամայն տարբեր աշխարհների, կնշանակի, վոր նա կանգնած է կանայան տեսակետի վրա, վորին նա մասամբ հարում էր: Իսկապես այդպես հակադրել իդեան ի բ ա կ ա ն ու թ յ ա ն ը, յ ե ը ե վ ու յ թ ը՝ ո բ յ է կ տ ի ն, նշանակում է ամենագուտ իդեալիզմի կողմնակից լինել: Ըստ այդ տեսակետի զգացողությունները ինչ-վոր նշաններ են, պայմանական սիմվոլներ, վոր բոլորովին տարբեր են իրերի ռեալ աշխարհից: Սակայն յեթե իդեաների աշխարհը, այսինքն՝ մեր մտապատկերների աշխարհը բոլորովին տարբեր է իրերի աշխարհից, հապա մեր ներգործությունը աշխարհի վրա բոլորովին անհնարին է, և վորյեւ պրակտիկայի մասին խոսք լինել չի կարող: Այսպիսով, հարցը հանգում է հետեւյալին՝ մեր զգացողությունները կամ մտապատկերները միայն նշաններ են, պայմանական նշանակումներ իրերի բոլորովին տարբեր աշխարհի, թե՛ նրանք իրերի այս աշխարհի պատկերներ են: Յեթե մենք ընդունում ենք առաջին հիպոթեզը, ուրեմն սկզբունքային անանցանելի սահման ենք գծում յերեվոյթների և իրն ինքնին միջեւ: Ընդունելով յերկրորդ հիպոթեզը, ասում է Հելմհոլցը, մենք կանգնում ենք ռեալիստական կամ մատերիալիստական տեսակետի վրա: Հելմհոլցը ստիպված է ընդունել, վոր «ռեալիստական հիպոթեզն, անկասկած ամենապարզ հիպոթեզն է, վոր մենք կարող ենք պատկերացնել. նա փորձված է և հաստատված գործադրությամբ ամենաընդարձակ գավառներում, ճիշտ վորոշակի՝ իր առանձին մասերում և ուստի վերին աստիճանի պետքական ու բեղմնավոր է նա, իբրեւ գործունեության հիմունք»: Ակնհայտնի յե, վոր մատերիալիստական հիպոթեզը, Հելմհոլցի կարծիքով, բոլոր հիպոթեզներից ամենից լավ կերպով և ամենից շատ է բավարարում բոլոր գիտական պահանջներին: Իսկ յեթե մատերիալիստական տեսակետն ընդունում է պատկերներ թեորիան, ուրեմն այս դեպքում պետք է հիշել, ինչպես ճիշտ նկատում է Լենինը, վոր «պատկերավորումը յերբեք չի կարող ամբողջությամբ համեմատվել մոդելի հետ. սակայն այլ բան է պատկերավորումը, մի այլ բան՝ սիմվոլը, պայմանական նշանը: Պատկերավորումը անհրաժեշտորեն և անխուսափելիորեն յենթադրում է ոբյեկտիվ ռեալականությունն այն բանի, ինչ «արտացոլվում է»:

Մախատներն իրենց կողմից առաջադրում են իրենց թեորիան, վոր վերաբերում է մեր զգացողությունների, մտապատկերների, մտքերի ունեցած հարաբերությանը դեպի կացությունը: Հրաժարվելով

պատկերները և սիմվոլները թեորիայից, նրանք պնդում են զգայական մտապատկերների նույնասուծությունը ռեալ իրականություն հետ: Լենինը հավասար չափով պայքարում էր թե սիմվոլների թեորիայի և թե սուբյեկտիվ սենսուալիզմի վերջին թեորիայի դեմ, հակադրելով նրանց «մատերիալիստական հիպոթեզը»: «Մատերիալիստի տեսակետից ռեալ կացությունը գտնվում է «զգայական ըմբռնումների», տպավորությունների և մարդու մտապատկերների սահմաններից դուրս, իսկ ագնոստիկի տեսակետով այդ ըմբռնումների սահմաններից այն կողմ դուրս գալն անհնար է»: «Ասել թե «զգայական մտապատկերը մեզինից դուրս գոյություն ունեցող իրականություն է, ասում է Լենինը, նշանակում է վերադառնալ դեպի յուր զմեռ, կամ նույնիսկ դեպի բերկլեյականությունը, վոր թագնվում էր «կոորդինացիայի» մատախուղի» մեջ: Այդ իդեալիստական սուտ է, կամ ագնոստիկի խորամանկություն... վորովհետև զգայական մտապատկերը վոչ թե մեզինից դուրս գոյություն ունեցող իրականություն է, այլ միայն այդ իրականության պատկերը»^{*}): Յեվ հետո, «յերկիրը մեզինից դուրս գոյություն ունեցող իրականություն է. նա չի նարող «զուգադիպել» (նույնը լինելու մտքով) մեր զգայական մտապատկերներին, վոչ էլ նրանց հետ լինել անքակտելի կոորդինացիայի մեջ, վոչ էլ լինել «ելեմենտների կոմպլեկս», վորոնք այլ կողմից նույնաման են զգացողություններին, վորովհետև վերկիրը գոյություն ունեւ այն ժամանակ, յերբ դեռ գոյություն չունեին վոչ մարդը, վոչ զգայաբանները և վոչ էլ նյութը, վոր կազմակերպված լինեւ այնպիսի բարձր ֆորմայի մեջ, վորի ներկայութեամբ ավելի զգալի չափով է նկատելի նյութի զգացողություն ունենալու հատկությունը»^{**}):

Իմացաբանության հիմնական պրոբլեմների շարահյուսությունը թյունից և քննությունից ընթերցողի համար հուսով ենք պարզ է, թե Լենինը վորքան գերազանցորեն կիրառում է դիալեկտիկական իմացաբանությունը բնագավառում: Իմացաբանության բոլոր հիմնական հարցերը նրա մոտ ստանում են զուտ դիալեկտիկական լուծում: Նյութի և հոգու վերջին հակադրությունը իմացաբանության գավառում յերակետ է հանդիսանում իմացաբանական հիմնական ուղղությունները գատելու համար: Իմացաբանության բնագավառում նյութի հակադրումը հոգուն—նշանա-

^{*}) Նույն տեղը, էջ 90

^{**}) Նույն տեղը, էջ 90

կում է մատերիալիզմի հակադրումը իդեալիզմին: Մթազնել այդ տարբերությունը, հասկանալի չէ, վոր սխալ կլինեւ, վորից և Լենինը նախազգուշացնում է: «Իհարկե, նյութի և գիտակցության հակադրությունը բացարձակ նշանակություն ունի միայն շատ սահմանափակ շրջանի սահմաններում. տվյալ դեպքում բացառապես իմացաբանական այն հիմնական հարցի սահմաններում՝ թե ինչն ընդունել սկզբնական, և ինչը՝ յերկրորդական: Այս սահմաններից այն կողմ տվյալ հակադրության հարաբերականությունը անկասկած է»^{*)}:

Այսպիսով, նյութի տարբերվելը հոգուց նույնպես հարաբերական է: Յեվ տվյալ դեպքում, ուրեմն, չպետք է մտածել մետաֆիզիկորեն: «Բացարձակ անհրաժեշտության և բացարձակ ճշմարտության այս հարաբերական հակադրության սահմանները հենց այն սահմաններն են, վորոնք վորոշում են իմացաբանական հետախուզումների ուղղությունը: Այդ սահմաններից դուրս առաջադրել նյութի և հոգու, ֆիզիքականի ու հոգեկանի հակադրությունը, վորպես բացարձակ հակադրություն—մեծ սխալ կլինեւ»^{**}):

X

«Մատերիալիզմի և եմպիրիոկրիտիցիզմի» մասին Լենինի գրած գրքի առանձնահատկությունն այն է, վոր նա վորձում է դիալեկտիքական մատերիալիզմի տեսակետից վերամշակել բնագիտության, գլխավորապես ֆիզիկայի գավառում կատարված նորագույն նվաճումները: Լենինը մախիզմը դիտում է նոր ֆիզիկայի հետ կապված: Լենինը նույնիսկ Պլեխանովին—վորին, ընդհանրապես ասած, վորպես փիլիսոփայի, վորպես դիալեկտիքական մատերիալիզմի ներկայացուցչի, նա բարձր եր գասում,—հանդիմանում է, վոր նա մախիզմի վերլուծման ժամանակ անգիտացել է այս կապը, վորովհետև մատերիալիզմը ինչպես բնագիտության, նույնպես և մարդկության պատմության բնագավառում եպոխա կազմող յուրաքանչյուր հայտնագործման զուգընթաց փոխում է իր ֆորման: Ֆիզիկայի գավառում դիտվող կրիզիսի առանձնահատկությունն այն է, վոր նա ակնհայտի կերպով ցույց տվեց մեր գիտելիքների հարաբերականությունը:

Մախիզմը հենց այս կրիզիսի փիլիսոփայական արտահայտությունն է: Բոլորովին ծանոթ չլինելով դիալեկտիկայի հետ, մախիզմը խճըծ-

^{*)} Նույն տեղը, էջ 119

^{**}) Նույն տեղը, էջ 205

վեց ռեյատիվիզմի մեջ, և ռեյատիվիզմի շնորհիվ սայթաքեց դեպի յուրատեսակ ֆիզիքական իդեալիզմը: Շնորհիվ ֆիզիկոսների փոքրամասնությունը, —ասում է Լենինը, —վերջին տարիների նոր հայտնագործումների, հին թեորիաների բեկման ազդեցության տակ, նոր ֆիզիկայի ճգնաժամի ազդեցության տակ, ճգնաժամի, վոր առանձնապես ակնբախ կերպով ցույց տվեց մեր գիտելիքների հարաբերականությունը, այդ ֆիզիկոսները, դիալեկտիկական չգիտենալու պատճառով, գլորվեցին ռեյատիվիզմի միջով դեպի իդեալիզմը: Մեր որերի մոդա դարձած ֆիզիքական իդեալիզմը, —նույնչափ ռեալիզմ, նույնչափ կարճատև մի գրավվում է, ինչպես մոտավոր անցյալի մոդա դարձած ֆիզիկոսական իդեալիզմը*): Սակայն բնագետների մեծամասնությունը, թեկուզ տարբերային կերպով, մատերիալիզմի կողմն է կանգնած:

Լենինը տալիս է ֆիզիքական թեորիաների և նրանց հետ կապված անգլիական, գերմանական, ֆրանսիական և ռուսական գրականություն իմացաբանական թեորիաների տեսությունը: Ամեն տեղ ֆիզիկայի գալառումնա բանում է յերկու հիմնական հոսանք՝ տարբերային —մատերիալիստական և ֆիզիկա-իդեալիստական հոսանքները: Յուրաքանչյուր յերկրում ֆիզիքական իդեալիզմը փիլիսոփայության գալառում գլորվում է տիրապետող, վորոշակի սպիրիտուալիստական և ֆիզիկա-իդեալիստական ուղղությունների գիրկը: Ֆիզիքական իդեալիզմի ելությունը կայանում է մեզ տրված զգացողությունների և մեր գիտական թեորիաներով արտացոլվող որյեկտիվ ռեալականության բացասման մեջ: Իսկ տարբերային մատերիալիզմը, վոր դուրս է գալիս զանազան անունների տակ, ինչպես ռեալիզմ, նեոմեխանիզմ, և այլն, յեխում է որյեկտիվ ռեալականության ճանաչումից:

Լենինը դիտում է ֆիզիքական ռեալիզմը վորպես մի միջադային գաղափարական հոսանք, վոր վոչ թե կախված է վորյեվե փիլիսոփայական սխառմից, այլ բղխում է փիլիսոփայությունից դուրս գտնվող վորոշ ընդհանուր պատճառներից: Փիլիսոփայական իդեալիզմն է այն ընդհանուրը, ինչ միացնում է բոլոր յերկրների ֆիզիքական իդեալիզմը: Նրանց մեջ ընդհանուր է «միայն» մի բան՝ փիլիսոփայական իդեալիզմը, վորին նրանք բոլորն առանց բացառության հարում են ավել թե պակաս գիտակցությամբ, ավել թե պակաս վճռականությամբ: Վերցրեք այն փիլիսոփաներին, վորոնք հենվում են նոր ֆիզիկայի այս դպրոցի վրա, աշխատում

*) Նույն տեղը, էջ 302.

են իմացաբանորեն հիմնավորել և զարգացնել այն, և դուք կտեսնեք նորից գերմանական իմանականներին, Մախի աշակերտներին, ֆրանսիական նեոկրիտիցիստներին, անգլիական սպիրիտուալիստներին, ռուս Լոպատինին, գումարած միակ եմպիրիոմոնիստ Ա. Բոգդանովին: Նրանց բոլորի մեջ ընդհանուր է միայն մի բան՝ այն, վոր նրանք բոլորը ավել թե պակաս գիտակցաբար, ավել թե պակաս վճռականորեն, թեք և շտապ շեղումով դեպի ֆիզիկիզմը, կամ թե անհատական զգվանքով դեպի նա (Ա. Բոգդանով) փիլիսոփայական իդեալիզմ են քարոզում*): Փիլիսոփայական իդեալիզմը այսպիսով հենվում է ֆիզիքական իդեալիզմի վրա: Իսկ վերջինս անխուսափելիորեն փոխանցվում է փիլիսոփայական իդեալիզմի: Այսպես ստացվում է ինչվոր մի ու թյուն կամ արտահայտված ժամանակակից լեզվով կապակցություն (СМЫСЛА) փիլիսոփայության ռեալիզմն ուղղությունների և ֆիզիկայի իդեալիստական ուղղությունների միջև:

Ֆիզիքական իդեալիզմը մի կողմից առաջ է գալիս ֆիզիկայի զարգացմամբ: Մատեմատիքական ֆիզիկան տանում է դեպի նյութի փոխարինումը՝ մատեմատիքական հավասարություններով: Այս հարցի վերաբերմամբ Լենինը բերում է Ա. Ռեյի կարծիքը, վորը գերազանցորեն բացատրում է և լուսաբանում ֆիզիքական իրակա-նությունը արատակցիայի յենթարկելու այն պրոցեսը վոր մենք այժմ տեսնում ենք հարաբերականության թեորիայի մեջ: «Ֆիզիկայի ճգնաժամը, —ասում է Ա. Ռեյը, —մատեմատիկայի վորով ֆիզիկան տիրապետելու մեջ է կայանում: Ֆիզիկայի պրոգրեսը մի կողմից, և մատեմատիկայի պրոգրեսը մյուս կողմից, XIX դարում այդ յերկու գիտությունները ամենասերտ կերպով իրար մոտեցրին... թեորեթական ֆիզիկան դարձավ մատեմատիքական ֆիզիկա... Այդ ժամանակ սկսվեց ֆորմալ ֆիզիկայի, այսինքն՝ մատեմատիքական ֆիզիքայի, վոչ թե իբրեւ ֆիզիկայի ճյուղի, այլ վորմալ մատեմատիկայի ճյուղի շրջանը. մատեմատիքական ֆիզիկան պես մատեմատիկայի ճյուղի շրջանը. մատեմատիքական ֆիզիկան դարձավ զուտ մատեմատիքական: Այս նոր ֆազայում մատեմատիկոսը, վոր սովորել է կոնցեպտուալ (գուտ-տրամաբանական) տիկոսը, վոր սովորել է կոնցեպտուալ (գուտ-տրամաբանական) ելեմենտներին, վորոնք նրա աշխատանքի միակ նյութը (մատեմատիկական) են, իրեն ճնշված է զգում կոպիտ, նյութական ելեմենտներին, վորը նա համարում է վոչ այնքան յենթարկվող. նա չեր կարող չձգտել այն բանին, վորպեսզի հնարավոր չափով նը-

*) Նույն տեղը, էջ 256.

բանց ավելի շատ արատալիցիայի յենթարկել, նրանց պատկերաց-
նել իրեն միանգամայն վոչ նյութական, զուտ-տրամաբանորեն,
կամ նույնիսկ անգիտանալ նրանց: Նշեմենտները, վորպես ուսու,
որչեկտիվ տվյալներ, այսինքն՝ վորպես ֆիզիկական ելեմեն-
տներ, միանգամայն անհետացան: Մնացին միայն ֆորմալ հարա-
բերությունները, ներկայացված զիֆերենցիալ հավասարություն-
ներով*):...

Մատեմատիքական ֆիզիկական տարբերվում է եքսպերիմենտալ
ֆիզիկայից նրանով, վոր գործ ունի մատեմատիքական ֆորմուլա-
ներ, զիֆերենցիալ հավասարությունների հետ, վորոնք փոխարինում
են մարմինները կամ ֆիզիքական ելեմենտները: Այս արատալիցիա-
նությունը, այսինքն՝ մատեմատիքական հավասարությունները ընդունվում
են, իբրեւ կոնկրետ պատկերներ, հենց իբրեւ իրականություն:
Հավասարությունները բռնում են նյութի տեղը: Բնա-
կան է, վոր այդպիսի ճանապարհով հանգում են մատեմատիքական
կամ ֆիզիքական իդեալիզմին: Մատեմատիքական իմացություն ճա-
նապարհը, ըստ եյություն, վերելք է կոնկրետ, ֆիզիքական աշխար-
հից դեպի արատալիցիա, զուտ-տրամաբանական, վոչ-նյութական,
«կատեգորիաները» կամ ֆորմուլաները: Յուրաքանչյուր գիտական
դիսցիպլին վորոշ աստիճանի միակողմանի է, նա արտահայտում
է միայն արատալիցիան, իսկական կոնկրետ իրականությունը ար-
ատալիցիայի յենթարկելը: Յեթե գիտնականը կամ հետախուզողը
այս մոռանում է, յեթե նա իր արատալիցիաները ընդունում է,
վորպես կոնկրետ իրականություն, այն նույնացնելով արատալի-
ցիաների հետ, նա անխուսափելիորեն ընկնում է մոլորության մեջ:

Ֆիզիքական իդեալիզմն ստեղծող յերկրորդ հիմնական պատճա-
ռը Լենինը ճշմարիտ կերպով տեսնում է ուելյատիվիզմի սկզբուն-
քի մեջ: Դեալեկտիկայի չգիտենալու հետեւանքն է հանդիսանում
հարաբերական ճշմարտության պոկվելը որչեկտիվ ուելյալականու-
թյունից: Հետո Լենինը շեշտում է այն հանգամանքը, վոր ֆիզի-
քական իդեալիզմը հատուկ է վոչ ամբողջ ժամանակակից բնագի-
տությունը, ինչպես այդ սովորաբար հավատացնում են Մախի կող-
մակիցները, այլ բնագիտության մի ուղղությանը՝ այն եւ միայն
ֆիզիկայի մեջ: Սակայն տարբային մատերիալիզմը, վորին այս-
պես կամ այնպես բնագիտության մեծամասնությունը կողմնակից է,

*) Նույն տեղը, էջ 259.

անխուսափելիորեն ընթանում է, թեյել անուղղակի ճանապարհով,
դեպի գիտակցական դիալեկտիքական մատերիալիզմը:

Ընդհանուր առմամբ Լենինը ճշմարտորեն, ժամանակակից ֆի-
զիկայի առջեւ դրված յուրաքանչյուր փիլիսոփայական հարցի յետե-
վը տեսնում է մատերիալիզմի և իդեալիզմի պայքա-
րը: «Տերմինոլոգիական խորամանկությունների յետեւը, գելերտե-
րական սխոլաստիկայի աղբի յետեւը միշտ, առանց բացառության,
մենք գտել ենք յերկու հիմնական գծեր, յերկու հիմնական ուղղու-
թյուններ փիլիսոփայական հարցերի լուծման համար»: Ինչպես վոր
ընդհանրապես պոլիտիկայի մեջ գոյություն ունեն յերկու հիմնա-
կան բանական, նույնպես և փիլիսոփայության մեջ Լենինը տես-
նում է միայն յերկու կուսակցություններ, յերկու հիմնական ուղ-
ղություններ—մատերիալիստական և իդեալիստական: Յեւ ինչպես
վոր մանր բուրժուազիան և նրա կուսակցությունները մշտապես
ճոճվում են բուրժուազիայի ու պրոլետարիատի միջեւ, այդպես եւ
«մանր-բուրժուական» ուղղությունները փիլիսոփայության մեջ մեկ
հարում են մատերիալիզմին, մեկ իդեալիզմին, մնալով եյապես
իդեալիստական դիրքերի վրա: Ռելյատիվիստները, պոլիտիվիստնե-
րը, մախիստները ներկայացնում են միջին կուսակցու-
թյունը փիլիսոփայության մեջ, վոր յուրաքանչյուր առանձին հարցի
վերաբերյալ շփոթում է իդեալիստական և մատերիալիստական ուղ-
ղությունները: Ճիշտ է, մախիստները պարծենում են իրենց ան-
կուսակցականությամբ, տքնում են իրենց «բարձր դասել» մատե-
րիալիզմից և իդեալիզմից, հաղթահարել այդ հնացած հակադրու-
թյունը «փորձ» և այլն բառերի միջոցով: Սակայն այդ միայն խղ-
ճուկ ձիգեր են: Փիլիսոփայության այդ յերկու ուղղություններից
դուրս թռչել անհնարին է: Ուստի իրապես մախիստները պայքարում
են մատերիալիզմի դեմ և խաղաղ կենակցում են իդեալիզմի հետ:

Ժամանակակից դասակարգային հասարակության մեջ փիլիսո-
փայությունը նույնպես մի կուսակցություն է, ինչպես քաղաքա-
տնտեսությունը կամ ամեն մի իդեոլոգիա ընդհանրապես: Ուստի փի-
լիսոփայական ուղղությունների պայքարը արտացոլում է վերջնա-
կան հաշվով զանազան դասակարգերի պայքարն ու տենդենցները:
«Նորագույն փիլիսոփայությունը,—ասում է Լենինը,—նույնպես
կուսակցական է, ինչպես և յերկու հազար տարի սրանից առաջ»:
Հիմնական պայքարող կուսակցությունները՝ մատերիալիզմը և իդեա-
լիզմն են: «Վերջինը միայն ֆիզիկիզմի նրբացած, կարծրացած ֆոր-

ման ե, վորը կանգնած ե սպառազեն, ունի հակայական կազմակերպութիւններ և շարունակում ե անշեղ կերպով ներգործել մասսաների վրա, իր ոգտին ծառայեցնելով փիլիսոփայական մտքի ամենափոքրիկ տատանումները: Եմպիրիկը իտիցիզմի որչեկտիվ, դասակարգային դերը լիովին սպասավորելն ե ֆիդելիտետներին՝ ընդհանրապես մատերիալիզմի դեմ և մասնավորապես պատմական մատերիալիզմի դեմ մղվող պայքարում*):

Այսպես, Լենինի մարտնչող մատերիալիզմի թեորիան, փիլիսոփայութեան բնագավառից անցնում ե անմիջապես պոլիտիկայի բնագավառը:

XI

Մարքսիզմի բուրժուական քննադատները հաճախ մատնանշում եյին, վոր Մարքսը չունի պատկառելի փիլիսոփայական աշխատութիւններ, վորոնք թույլ տային նրան իրենց շարքին դասել: Սակայն, յետե՛ր Մարքսը փիլիսոփա չեր բառիս դպրոցական իմաստով, այնուամենայնիվ ո՛վ այժմ կարող ե բացատրել, վոր այդ հանճարը խոշորագույն մտածող ե հանդիսանում, և վոր նա կարող եր հեղաշրջում կատարել գիտութեան մեջ հենց այն պատճառով, վոր արհամարհեց դպրոցական իմաստութիւնը և բացահայտ արհամարհանքով վերաբերվեց գիտութեան պաշտոնական սպասավորներին: Յերբեք վոչ մի մտածող այնպիսի վիթխարի ազդեցութիւն չե ունեցել իսկական մասսաների կյանքի վրա, ինչպես Մարքսը, վորն ստեղծեց իր տեսակով միակ գիտական աշխարհայացքը, վոր ծծված ե կյանքով և նրա հարազատ պրոբլեմներով, այսինքն՝ պրակտիկայով՝ բառիս իսկական իմաստով. տասնյակ միլիոն մարդիկ համակվում են աստիճանաբար այդ աշխարհայացքով: Այդ աշխարհայացքը բուսել ե կյանքից և նրա պայմաններից. նա կյանքի ընդհանրացումն ե և իրական հարաբերութիւնների հանճարեղ սինթեզը և վոչ թե զուտ բանականութիւնից ե քամած, վորը կատարում են իդեալիստները: Մեր եպոխան իր վրա կրում ե Մարքսի ստեղծագործող մտքի զրոյմը, վորովհետեւ նրա միտքը ծրված ե կյանքի միս ու արյունով: Յեւ ամեն մեկի համար, ով կարող ե մտածել, ակներեւ ե, վոր հետագա պատմութիւնը պետք ե հաստատի մարդկութեան պատմական բախտին վերաբերող Մարքսի պրոգնոզի ճշտութիւնը:

Մենք կարող եյինք ցույց տալ, թե ինչպես արդի վորոշ պա-

* Նույն տեղը, եջ 303.

տեստավոր և դիպլոմավոր փիլիսոփաներ համաշխարհային պատերազմից առաջացած ճգնաժամի և վրա հասնող պրոլետարական հեղափոխութեան ազդեցութեան տակ, առանձնապես պարտված յերկրներում, սկսում են ճանաչել մարքսիզմի առանձին դրութիւնները, իհարկե, հագցնելով նրանց համապատասխան մետաֆիզիքական զգեստ: Այդ փիլիսոփաներն անընդունակ են յուրացնել մարքսիզմը, վորովհետեւ նրանք պատկանում են բուրժուազիային: Բայց միաժամանակ նրանց տատանումները ունեն վերին աստիճանի սիմպտոմատիքական նշանակութիւն. նրանք վկայում են հին աշխարհամբռնողութեան կործանումը և քայքայումը: Արդի հասարակութեան մեջ տիրապետող դասակարգի աշխարհայացքն անուժ ե: Նա անընդունակ ե ստեղծագործել կյանքը: Սակայն մարքսիզմը կամ մատերիալիզմը, ներկայացնում ե իրենից հին հասարակութեան խորտակման և նորը ստեղծելու թեորիան:

Լենինը ժամանակակից եպոխայի ամենախոշոր մտածողն ե, վորովհետեւ մեր տեսակետով մտածող ե հանդիսանում նա, ով տվյալ պատմական եպոխայում արտահայտում ե այդ եպոխայի երկական «գծերը», նրա պահանջները, — ով տանում ե իր յետեւից մասսաները դեպի լավագույն ապագան, արձակում ե հասունացած հեղափոխական ուժերը, և ով իրագործում ե արդեն իսկ ռեալ իրականութիւնը, վորը դեռ պիտի ազատվի իրեն ծածկող և կապող թաղանթից: Այդպիսի իրականութեան համար — իսկ մարքսիզմը գործող ուսմունք ե — պահանջվում ե և համապատասխան թեորիա: Ծնված դասակարգի ազատագրման մեծագույն աշխատանք — ասում ե Լենինը, պատմութեան մեջ ամենահեղափոխական դասակարգի շարժումը, անհնարին ե առանց հեղափոխական թեորիայի: Այդ թեորիան չի կարելի հնարել, նա բուսում ե աշխարհի բոլոր յերկրների հեղափոխական փորձի և հեղափոխական մտքի ամբողջութիւնից: Ուստի մարքսիստական մատերիալիզմը, ամբողջ մարքսիստական փիլիսոփայութիւնը վոչ այլ ինչ ե, յետեւ վոչ՝ արդի հասարակական հարաբերութիւնների ամբողջութեան քննադատութիւնը:

Յետե՛ր դիպլոմավոր փիլիսոփաները արասափի մեջ կընկնեն «ատվածային իմացութեան» այդպիսի «պրոֆանցիայից», այդ դեպքում մենք կմատնանշենք մեծ Հեգելին, վորի մատերիալիզմին կողմնակից չլինելը վոչ մի կասկած չի հարուցում: Հեգելը, ֆրանսիական հեղափոխութիւնը համարելով համաշխարհային պատմութեան

մի մեծ անցք, արեւի հոյակապ ծագումը, փառաբանում եր XVIII դարի մատերիալիստական և աթեիստական փրկսոփայութիւնը նրա խորտակող և քանդող քննադատութեան համար, վոր վերաբերում եր այն ժամանակվա հասարակարգին և նրա հետ կապված իդեո-լոգիային, վորովհետեւ չե վոր իդեոլոգիան մասն ե, թեկուզ իդեոլոգիական մասը—տվյալ իրականութեան:

Ի՞նչ ե փրկսոփայութիւնը (այսինքն՝ ընդհանրապէս թեորիան: Յեւ չեգելը այսպիսի պատասխան ե տալիս.— փրկսոփայութիւնը (թեորիան), իբրեւ իրականութեան վերաբերող գիտութիւն—եյապէս իրականութեան քննադատութիւնն ե, և վորովհետեւ համաշխարհային վոգին—(այսինքն՝ մեր տեսակետից պրոգրեսը, զարգացումը) յերբեք կանգ չի առնում, այլ կատարում ե իր հաղթական յերթը դեպի առաջ, ուստի փրկսոփայութիւնը, վոր որչեղտիվ իրականութեան արտացոլումն ե գիտակցութեան մեջ, հակառակ ե իրականութեանը, վորը նա պիտի յենթարկեր բազմակողմանի քննադատութեան նոր սկզբունքի տեսակետից, կամ թե ինչպէս արտահայտվում ե չեգելը, հոգու կյանքի նոր ֆորմայի տեսակետից: Ուստի չեգելը, զարգացնելով իր հայացքը փրկսոփայական զարգացման և փրկսոփաների դերի մասին, հայտարարում ե, վոր համաշխարհային պատմութեան ամեն մի առաջարժմանը ներկա եյին փրկսոփաները: Նրանք ունենում եյին և պետք ե ունենան կենդանի և անմիջական մասնակցութիւն հին կարգերի և հին իդեոլոգիայի խորտակման մեջ: «Ամենավտանգավոր, ամենահետեւողական և վճռական հեղափոխականները փրկսոփաներն են»—ասում ե չեգելը: Պետք ե նկատել, վոր չեգելը վորոշ չափով իրավացի ե, սակայն միայն վորոշ չափով: Յերբ պատմական ասպարեզ ե իջնում նոր հասարակական դասակարգ, նա առաջ ե քաշում իր մտածողներին, իր թեորետիկներին, վորոնք հեղափոխական դեր են խաղում հին իդեոլոգիան և մեռնող հասարակական հարաբերութիւնները բացասելու իմաստով: Նրանք առաջադրում են նոր սկզբունքներ, այսինքն՝ նոր աշխարհայացք, վորի բարձունքից և քննադատում են իրենց տրված աշխարհը: Այդ քննադատութիւնը սովորաբար շոշափում ե վոչ միայն հասարակական հարաբերութիւնները, սոցիալական աշխարհը, այլեւ յերեւելութիւններ լրիվ ամբողջութիւնը: Քննադատական եպոխաները անմիջականորեն կապված են «արժեքների վերագնահատման» հետ: Մեծ մտածողը նրանով ե մեծ, վոր առաջադրում ե նոր սկզբունք,

գիտելիքի նոր մեթոդներ, վորոնք թելադրվում են հասարակական կյանքի զարգացումով: Այդ մեթոդները և սկզբունքները տարածվում են բնութեան վրա ամբողջապէս, վորովհետեւ յուրաքանչյուր հասարակական դասակարգ ունի իր տենդենցը՝ իր «սկզբունքից» ստեղծելու ամբողջական աշխարհայացք: Այդ իմաստով բոլոր փրկսոփաները պատմութեան մեջ հաճախ հեղափոխականներ եյին հանդիսանում:

Վոչ մի հեղափոխութիւն չի կատարվում առանց թեորիայի և իդեոլոգիայի, վորի մեջ իդեալական կերպով արտացոլվում և ձեւակերպվում են իրականութեան հարաբերութիւնները: Սակայն, իհարկե, սխալ կլիներ պնդել, թե ընդհանրապէս փրկսոփաները ամենահետեւողական և վճռական հեղափոխականներն են: Չե վոր և մեռնող դասակարգերն ել առաջադրում են իրենց փրկսոփաներին, այսինքն՝ իդեոլոգիաներին, թեորետիկներին, վորոնք կաշում են հնից և ամեն կերպ այն արդարացնում են ու հիմնավորում: Այսպիսով պետք ե տարբերել մեռնող և ծնվող նոր աշխարհի մտածողներին: Վերջին կարգի մտածողները, անկասկած, միշտ առաջադեմ են, տանում են մարդկութիւնը դեպի առաջ և հնց դրանով ել հեղափոխականներ են: Նրանց թեորիաները հնարավոր չափով լի յեն գիտական բովանդակութեամբ, վորովհետեւ նրանք արտահայտում են տվյալ եպոխայի արտադիր ուժերի զարգացման պահանջները և համապատասխանում են հասարակութեան նվաճած տեխնիքական և թեորետիքական գիտելիքների աստիճանին:

Սակայն, յետեւ փրկսոփաները «վտանգավոր հեղափոխականներ» են հանդիսանում, կասկած չկա, վսր մեծ հեղափոխականներ են հանդիսանում այն իսկական փրկսոփաները, վորոնք կերպարանափոխում են աշխարհը և վոչ թե հնարում են այս կամ այն սխտեմը: Ստեղծագործութիւնը, այսինքն՝ աշխարհի կերպարանափոխումը և փրկսոփայութիւնը, այսինքն՝ համապարփակ թեորիան՝ գտնվում են փոխադարձ սերտ կապակցութեան մեջ: Բանվոր դասակարգի ազատագրական մեծ շարժումը, ինչպէս ճիշտ ասում ե Լենինը, անհնարին ե առանց հեղափոխական թեորիայի, առանց հեղափոխական փրկսոփայութեան: Նոր դասակարգի փրկսոփայութիւնը այդ իմաստով իր ելութեամբ հեղափոխական ե:

Միներվայի բուն սկսում ե իր թուշքը վերջալուսին, ասում եր չեգելը: Յերբ գոյութիւն ունեցող աշխարհը սկսում ե ճեղքված-

ներ տալ, յերբ պատմական հորիզոնի վրա պայծառ կերպով յերեւում ե հին աշխարհի մայրամուտը, յերբ իրականութիւնը դրսեւորում ե պարզորոշութեամբ իր ներքին հակասութիւնները, այն ժամանակ դուրս են թռչում իմաստուն բույերը և սկսում են իրենց կործանիչ աշխատանքը: Կացութիւնը նախորդում ե գիտակցութեանը: Գիտակցութեան կրծող քննադատութիւնը սկսվում ե այն ժամանակ, յերբ իրականութիւնն ինքն իրեն նշանավոր կերպով յենթարկել ե «ինքնաքննադատութեան»՝ ինքնաքայքայման իմաստով: «Փիլիսոփաները» չափազանց ուշ են հանդես գալիս, գոյութիւն ունեցող աշխարհի փրկութեան տեսակետից: Բայց յետեւ նրանց յերեւման գալու խնդիրն ե հանդիսանում գոյութիւն ունեցող աշխարհի քննադատութիւնը և կործանումը, այդ դեպքում նրանք յերեւման են գալիս ժամանակին, հենց աղջամուղջին: Մարքսի յերեւման գալը նշանակում ե կապիտալիստական աշխարհի մայրամուտը, նրա կործանման սկիզբը: Իմաստուն բուն՝ հանձինս Մարքսի, գուշակեց մահը արդի հասարակութեան, վոր հիմնված ե աշխատանքի ստրկութեան, մարդը մարդու ձեռքով շահագործելու վրա: Այդ ժամանակից իսկական հեղափոխականներ են հանդիսանում միայն պրոլետարական մտածողները, վորոնք իրապես ներկա յեն համաշխարհային պատմութեան մեծ առաջարկմանը:

Մարքսը լուծեց թեորիայի և պրակտիկայի փոխհարաբերութեան պրոբլեմը: Մեր եպոխայում, մոնոպոլիստական կապիտալիզմի կամ իմպերիալիզմի եպոխայում, Լենինը, շարունակելով մարքսի գաղափարները, իր մայրամուտին մոտեցող կապիտալիստական աշխարհի բարձր աստիճանի վրա, պրոլետարիատի հետ միասին ազդարարեց, վոր թեորետիքական սկզբունքի պատիվը պահանջում ե, ըստ Հեգելի արտահայտութեան, նրա գործնական իրականացումը, վորովհետեւ թեորետիքական սկզբունքի մեջ արդեն գոյութիւն ունի գործնական հարաբերութիւնը: Թեորիան պետք ե ապացուցի աշխարհի վրա իշխելու իր կոչումը նրանով, վոր գործնական հաղթանակ տանի. նա պետք ե դրսեւորի իր ճշմարտութիւնը, պրակտիկայում «իշխելու» իր «իրավունքը»: Առանց դրա նամանվում ե անպտուղ ծառի:

Համաշխարհային կոստատորոֆայի կրակում բուրժուական փիլիսոփայութիւնը և նրա ամբողջ թեորիան լիակատար խորտակում կրեցին: Բուրժուական մտքի ավելի խելացի ներկայացուցիչներն սկսում են հասկանալ, վոր միայն մարքսիզմը (իբրեւ թեորիա) դի-

մացավ մեծ փորձման, վոր ամեն մի ուրը բերում ե իր հետ Մարքսի 75 տարի առաջ արած գիտական նախատեսումների ճշտութեան նոր ապացույցներ: Բայց դասակարգային կուրութեան հետեւանքով անընդունակ լինելով ճանաչել և ընդունել մարքսիզմը, նրանք մարքսիզմից խույս են տալիս ամեն տեսակ անեծքներով:

Մեծ պատմական դեպքերը հանկարծակիի բերին բուրժուազիային և նրա մտածողներին: Գրոշ չարժեն այն թեորիաները, վորոնք անընդունակ են մարդկութեան ապագա բախտը և նրա զարգացման տենդենցները նախատեսել: Բուրժուական միտքը ըստ իր եյուլթեան պետք ե վոր խորտակվեր, վորովհետեւ նախ և առաջ նա արհամարհեց պատմութիւնը, յերկրորդ՝ նա գործնական, հետեւապես և թեորետիքական տեսակետից այնպես սարքվեց այս աշխարհում, կարծես թե նրան հավիտենական կյանք եր վիճակված: Գերպատմական ֆունդամենտի, հավիտենական ֆունդամենտի վրա յեր նա կառուցում իր փիլիսոփայական սխտեմները, իր աշխարհայացքը: Նա պաշտպանում եր հասարակական ֆորմաների անփոփոխականութիւնը և մշակում եր հավիտենական նորմաներ ու ճշմարտութիւններ, վորոնց չպետք ե դիպչել հավիտյան հոսող կյանքի շունչը, ժամանակի շունչը:

Մի ժամանակ բուրժուազիան գահ բարձրացրեց բանականութեան աստված ու հոգ, վորը շարունակում ե մտքերում իշխել մինչեւ այսօր: Այդ աստվածունին միակ ուրենսդրունին ե հանդիսանում: Նրա վրա ժամանակի կատեգորիաները ասես թե չեն տարածվում: Այդ ժամանակից բուրժուազիայի փիլիսոփայութիւնը գրեթե կառուցվում եր վերացական բանականութեան բնութեան վրա: Գիտակցութիւնը և նրա հավիտենական, անփոփոխ բնութիւնը հանդիսանում եյին մտածողների հետաքրքրութեան գլխավոր առարկան: Ինքը կացութիւնը, վոր իրականութիւնը բանտարկված եր գիտակցութեան սահմաններում, վորպես բանտի մեջ, վորտեղից յեռացող կյանքը յեւ չուներ դեպի ազատ ողբ: Իր մտածողութեան մեջ այդ փիլիսոփայութիւնը կանգ եր առնում իրականութեան շեմքին և չեր հանդգնում վտանգավոր թռիչք կատարել դեպի կյանքի մրրկածով ալիքները: Այդ ի դեպ վրա մտածողութեան մեջ չեր խանգարում բուրժուազիային միջնադարի ժամանակ գործնական ուրեն կառուցել կյանքը և իր գործունեութեամբ նախապատրաստել իր սեփական կործանման պայմանները: Այդպիսի յե բուրժուական կուլտուրայի ներքին հակասութիւնը:

¹Փիլիսոփայությունը դարձավ գիտելիքն երի գիտելիքը: Նա զբաղվում էր առավելագույն գիտակցության բնության հետազոտությամբ, բանականության տրամաբանական ստրուկտուրայով: Այդ փիլիսոփայական ուղղությունը բռնում էր մատենատիրական և ֆիզիքական գիտությունների որիննտացիան: Մտքի այդ հոսանքը կրում է այն միամիտ հավատը, թե բոլոր պրոբլեմները վճռվում են անժամանակյա մտքի միջոցով, վորովհետև գիտակցությունը ներառնում է իր մեջ կացությունը: Բացարձակ ճշմարտությունը արտահայտություն է ժամանակին անյինթակա գիտակցության, վորի մեջ հիմք են դրել բարոյականության, պետական կյանքի, արվեստի և այլն անխախտ որոնքները: Անմարմին Լոգոսը ճախրում է յերկրի վրա, նա գտնվում է հենց մեր մեջ: Ճշմարիտ «դատողությունը» ընդունակ է տալ աշխարհի ճշմարիտ իմացությունը: Մարդը իմանում է աշխարհը հասկացողության, զուտ մտքի միջոցով: Յեւ վայն, ինչ տարբեր է մտքից կամ գաղափարից—նյութական աշխարհը՝ խաբուսանք է: Բոլոր գիտությունները, բոլոր գիտելիքներն ըստ այդ հայացքի, բուռնում են լոգիկայից: Լոգիկան բարձրանում է յերեվոյթների ժամանակավոր, եմպիրիք հոսանքից դեպի վեր: Նրա սկզբունքները կայուն, հավիտենական սյուներ են, վորոնց վրա ամրացած է արդի գիտության վողջ շենքը, նրանք նույնպես և կյանքի ուսուցիչ ֆորմաներն են: Մտածողության մեջ նրանք փնտռում են և գտնում վոչ միայն առարկայի գիտելիքը, այլևս գիտելիքի առարկան: Այդ տեսակետից հավասարապես նման են մարբուրգյան, բադենյան և գյոտինգենյան դրսյությունները:

Հակառակ լոգիստն երին և աբսոլյուտիստն երին այսպես կոչված ռելյատիվիստն երը կանգնած են պսիխոլոգիզմի տեսակետի վրա: Այս ուղղությունը կարելի է բնութագրել, վորպես փիլիսոփայական մանր-բուրժուական ուղղություն, ինչպես ճիշտ կերպով մասնանշում էր Լենինը: Ռելյատիվիզմի և ֆենոմենալիզմի տեսակետից իրականությունը մեզ անմատչելի է: Մենք միայն սահում ենք իրականության մակերեվոյթի վրայով, վորպես ստվերներ և անընդունակ ենք թափանցել ոբյեկտիվ բնության մեջ: Մեր մտապատկերների և գաղափարների ճշմարիտ լինելու հարցը լուծում է վոչ թե տրամաբանական հասկացողության վորակը, ինչպես լոգիստներն են ասում, այլ սուբյեկտի ապրումը: Աշխարհը ինքնըստինքյան մի ինչ վոր նախնական քոս է: Միայն մարդն է,

այսպես ասած, կազմակերպում բնությունը: Ռելյատիվիզմը բռնում է պսիխոլոգիայի և բիոլոգիայի կողմը: Հանձինս Ծայգինգերի արդի ռելյատիվիզմը գալիս է այն յեղրակացության, վոր մեր ամբողջ իմացությունը զուրկ է ոբյեկտիվ բովանդակությունից: Ճշմարտությունը ներկայացնում է, Ծայգինգերի բառերով, միայն «նպատակահարմար մոլորություն»: Այսպիսով ֆիկցիան, այսինքն՝ խաբուսանքը դարձվում է ճշմարտություն: Նյութը, արտաքին աշխարհը, անողոք դասակարգային պայքարը, հեղափոխական փոթորիկները—այս բոլորը կատարյալ ֆիկցիաներ են: Սակայն վորոշ ֆիկցիաներ, ասենք աստված, ունեն գործնական արժեք, վորի մեջ է կայանում և այդ ֆիկցիաների իսկական իմաստը:

Փիլիսոփայական մտքի հակիրճ բնութագրված այդ յերկու ուղղությունները կանգնած են նյութական աշխարհը բացասելու հողի վրա, նյութի (մատերիալիզմի) հաղթահարման անհրաժեշտության տեսակետի վրա և ոբյեկտիվ աշխարհի «ծանրությունը» հոգուց ազատելու հողի վրա, ինչպես սրամտորեն արտահայտվում է մի գրող այլ առիթով: Ոբյեկտները ճնշում են մարդուն իրենց ամբողջ ծանրությամբ, հարկադրում են իրենց հաշվի առնել, իսկ դրան հակառակ, իդեալիզմը հայտարարում է, վոր ինքը անհամաձայն է ճանաչել նրանց ռեալականությունը, վոր նա բացասում է բնության և պատմության վորյեվ ոբյեկտիվ որոնքների գոյությունը:

Բնագիտության, մասնավորապես ֆիզիկայի բնագավառում կատարված նվաճումները մի կողմից, և հեղափոխական ցնցումները հասարակության մեջ մյուս կողմից, պետք է համոզեն սխոլաստիկայով դեռ վերջնականապես չկուրացած ամեն մեկին, վոր պնդել թե բնությունն ու հասարակությունը անփոփոխ են—հիմարություն է. ոբյեկտիվ աշխարհից յեկող զգայական մոլումները պետք է վոր արթնացնեն իդեալիստական սոմամբուլիզմի վիճակից ամենաթունդ սուբյեկտիվիստին: Իրոք այդ յերեվոյթները մղում են նրանց ավելի ու ավելի ֆենոմենալիզմի և իդեալիզմի գիրկը այն պարզ պատճառով, վոր բուրժուական միտքը բնորոշվում է իրականության հատուկ պայմաններով, իրականության, վորը նրա համար անհնար է դարձնում ամենահասարակ ճշմարտությունների յուրացումը:

Դիալեկտիքական մատերիալիզմը կամ մարքսիզմը միակ գիտական թեորիան է, վոր գտնում է իրականության ուղին: Մատերիալիզմը չի խզում իմացությունը կյանքից: Մարքսիզմի յուրահատկությունն այն է, վոր նա, հակառակ լոգիզմի և պսիխոլոգիզմի,

հարում է բացառապես պատմությունը: Եյապես ասած, մենք գիտենք միայն միակ մի գիտություն, գրում է Մարքսը «գերմանական իդեոլոգիայի» մեջ, վորն է՝ պատմության գիտությունը, վորը ստորաբաժանվում է բնության պատմության և մարդկանց պատմության: Իստորիզմը մարքսիզմի բնորոշ գիծն է, իսկ հասարակական կյանքը նրա կենտրոնական պրոբլեմը: Հենց մարդկանց գործնական կյանքը առաջին անգամ մարքսիզմի մեջ դարձավ թեորիայի հիմնական բովանդակությունը. աշխարհահայացքի վերջին արժանիքները և հիմքը պրակտիկայի գործունեություն, կուլտուրական ստեղծագործության և հասարակա-պատմական կյանքի մեջ են գտնվում:

Մարքսիզմին ոտար են մարդու իմացական ընդունակությունների վերաբերյալ մշտական կասկածները. պատմության մեջ կյանքի շինարարություն, նրա կազմակերպմանը կոչված դասակարգը բնականաբար չի կարող ազդարարել գիտության անկարողությունը, ինչպես այդ անում են բուրժուական փրկիստիայություն ներկայացուցիչները: Պրոլետարիատին հատուկ է առողջ ստեղծագործական ուղիվի գոյությունը: Նա չի բավարարվում կյանքի հաշիվից ու թշնամի, նա խորտակում է հին կյանքը և ստեղծագործում նորը: Այստեղ թեորիայի և պրակտիկայի խզումն իրարից տեղ չունի, ինչպես և բացակայում է աշխարհին տիրապետելուց և նրա գաղտնիքների մեջ թափանցելուց հրաժարվելը: Աշխարհը ամբողջովին իմանալի չէ: Յեվ յեթե հին աշխարհի ներկայացուցիչները թախծով հայտարարում են, վոր «պատմությունը մեծ անհաշտություն է», հապա պրոլետարիատի իդեոլոգիան, և առանձնապես Լենինը, ապացուցեցին, վոր մի հասարակական-պատմական ֆորմացիայի կործանումը նշանակում է նորի ծնունդը, վոր պատմական պրոցեսը մի վերելք է ցած աստիճանից դեպի բարձր աստիճանը: Քայքայիչ գործունեությունը հետեվ բացասման մեջ պարփակված է հաստատումը: Բնություն, իբրեւ ամբողջության կենդանի ղեկավարողական պրոցեսի մեջ մարդու պատմական կյանքը, պատմական պրոցեսը կազմում են տիեզերքի ընդհանուր պրոցեսի մի մասը:

Պատմական պրոցեսը բնորոշվում է յերկու հիմնական գծերով. առաջին՝ նա ունի ձգտողականություն դեպի ապագան: Պատմության առարկան հանդիսանում է վոչ միայն անցյալը, այլևս ապագան. պատմական պրոցեսը ներկայացնում է իրենից վոչ միայն հի-

շողությունների մի գերեզման, այլևս ապագայի հույսերը: Ներկան վոչ միայն անդառնալի անցյալի մեջ է կորչում, այլ նա իր դեմքով դարձած է դեպի ապագան: Պատմությունը շարժվող ապագան է, վոր շարունակ ներհոսում է ներկայի մեջ: Իսկ ներկան հոսում է դեպի ապագան: Ժամանակը պատմության, ինչպես և ընդհանրապես կյանքի հիմնական կատեգորիան է: Յեվ այդ պատճառով, այսինքն՝ վորովհետեւ ամեն ինչ փոխվում է, հենց այդ պատճառով պատմությունը գոյություն ունի. նա բոլոր յերեւոյթների հիմքն է: Այդ իմաստով ել պետք է հասկանալ Մարքսին, յերբ նա խոսում է միակ գիտության՝ պատմության մասին: Բայց մարդկային պատմությունը բնության պատմության մի մասն է: Ամեն ինչ լափող և միաժամանակ ամեն ինչ կենդանացնող ժամանակի հոսանքի և փոփոխությունների պրոցեսին միատեսակ յենթակա յե այն, ինչ գոյություն ունի: Չկա ղեկավարիկա առանց ժամանակի, վորովհետեւ ժամանակը ամեն մի փոփոխության արատրակա ֆորման է:

Պատմությունն իր եյությունը հեղափոխական է, վորովհետեւ նա և՛ կապված է անցյալի հետ և՛ խզված է նրանից: Ռեակցիոն և կոնսերվատիվ աշխարհայացքները կապված են անցյալի և ներկայի հետ, նրանք բացասում են ապագան: Հեղափոխական աշխարհայացքը միշտ կապված է ապագայի հետ, ձգտում է դեպի ապագան և խզումն է անցյալից: Ամեն տեսակի ռացիոնալիզմ և արտալյուտ փրկիստիայություն և թեորիայի բնագավառում արտահայտվում է ժամանակից անկախ ճշմարտությունների հաստատմամբ, վորով և այդ ճշմարտությունները ստանում են բացարձակ և միյնունդ ժամանակ արատրակա բնույթ: Իսկ պատմական ասպեկտում յուրաքանչյուր հաստատություն, և այն, ինչ գոյություն ունի—հարաբերական արժեք է: Վոչինչ չի կարելի պոկել պատմական, այսինքն՝ կոնկրետ պայմաններից, և ամեն ինչ անցողական գոյություն ունի: Դիալեկտիքական մատերիալիզմի հիմքում գտնվում է այն հիմնական միտքը, թե աշխարհը կազմված է վոչ թե պատրաստի, ավարտված առարկաներից, այլ ներկայացնում է պրոցեսների մի ամբողջություն, վորի մեջ անփոփոխ թվացող առարկաները, նույնպես և զլխում հանվող նրանց լուսանկարները— հասկացողությունները գտնվում են անընդհատ փոփոխության մեջ. մերթ գոյանում են, մերթ վոչնչանում*):

Իր պատմական կյանքում մարդը ստեղծում է մի ինչ-վոր ինք-

*) Энгельс, Л. Фейербах, с. 62.

նուրույն աշխարհ. կրոնը, իրավունքը, արվեստը, փիլիսոփայությունը, գիտությունը, տնտեսությունը և այլն, այսինքն՝ այն, ինչ վոր կազմում է այսպես կոչված «հոգու գիտություն» առարկան, հանդիսանում է կոլեկտիվ մարդու արտագրությունը: Այդ և նրանց տարբերությունը բնութայն առարկաներից, կամ հենց բնությունից: Մարդկային գործունեությունը ստեղծված այդ արդյունքները ոտարացվում են նրանցից, և հակադրված են նրանց վորպես որբեկտիվ ռեալականություններ, վորպես ինչ վոր ինքնուրույն արարածներ: Վորոշ ժամանակ մարդիկ կարծում են, վոր այդ բոլորը ստեղծում են ինչ վոր բարձրագույն ուժեր, վորոնք մարդկանց և հասարակություն վրա յեն կանգնած: Մարքսիզմը անդրամպյան բարձունքներից գետին իջեցրեց կրոնը, մետաֆիզիկան, իրավունքը, ամբողջ հոգեվոր աշխարհը և նրան տվեց մատերիալիստական բացատրություն: Մարդիկ, զարգացնելով իրենց նյութական արտադրությունը, զարգացնում են և փոփոխում իրենց այդ գործունեություն մեջ իրենց մտածողությունը և իրենց մտածողության արդյունքները, ասում է Մարքսը: Պատմական կյանքի և մարդկային գործունեություն ամբողջ բովանդակությունը հանգում է բնությունը փոփոխելուն, այն անընդհատ կերպարանափոխելուն և ըստ այնմ «հոգու», այսինքն՝ ամբողջ իդեոլոգիայի փոփոխման: Այսպիսով ամբողջ իդեոլոգիան հանդիսանում է պատմության արդյունք և տվյալ ամեն մի աստիճանի վրա-հետեւմանը մարդկանց վորոշ վերաբերմունքի դեպի բնությունը և դեպի իրար: Այդպիսի պայմաններում պատմությունը դառնում է ամեն մի գիտական աշխարհայացքի կենտրոնական պրոբլեմը: Հեգելը փիլիսոփայության ծանրության կենտրոնը փոխադրեց բնագիտությունից հասարակա-պատմական կյանքը: Կուլտուրան, բառիս ընդարձակ իմաստով, դարձավ Հեգելի համար հիմնական պրոբլեմը: Պատմական իրականությունը բնության հետ համեմատած ներկայացնում է իրենից կացության բարձր ֆորման, վորովհետեւ ամեն մի կացություն դրսեվորում է իր իսկական բնությունը, իր ներքին եյությունը փոփոխման մեջ: Սակայն կուլտուրան բնության կերպարանափոխումն է կոլեկտիվ աշխատանքի միջոցով: Յեթե ճիշտ է, վոր բնությունը միայն այն դեպքում կարող եր իր ծոցից մարդուն ծնել, յերբ ստեղծվել եյին վորոշ պայմաններ մարդկային կյանքի համար, ապա կուլտուրան նշանակում է բնության փոփոխումը տեխնիկայի միջոցով, նրա հարմարեցնումը՝ մարդկային կարիքներին և պահանջներին:

Սուբյեկտի հարաբերության պրոբլեմը դեպի անհաար լուծվում է

վոր թե հայեցողություն միջոցով, այլ որբեկտի գործնական տիրապետման միջոցով: Միայն աշխատանքի, գործունեություն միջոցով մարդը բանում է իրերի եյությունը, թափանցում կացության գաղտնիքի մեջ: Սուբյեկտը հաղթություն է նվաճում որբեկտի վրա տեխնիկայով, աշխատանքով: Փիլիսոփաները կարծում եյին, վոր մեր վերաբերմունքը դեպի աշխարհը սպառվում է մտածողություն վրա: Մենք այժմ գիտենք, վոր մեր ճշմարիտ վերաբերմունքը դեպի աշխարհը կայանում է գործունեություն մեջ: Մենք սպրում ենք վոր թե մտածողության, այլ աշխատանքի, գործունեություն համար: Ով չի աշխատում, նա գտնվում է կուլտուրայից դուրս, պատմություն վրա: Աշխարհը գոյություն ունի վոր թե միայն վորպես խոհունների որբեկտ, այլ իբրեւ աշխատանքի որբեկտ: Ինքը մտածողությունը միջոց է գործունեություն համար և նրա արդյունքը: Մտածողությունը հետեւում է գործունեության, նա սրա գործիքն է: Պատմական իրականությունը մի մասն է կացություն ընդհանրապես, վորովհետեւ կացությունը ընդգրկում է ինչպես բնությունը, այնպես ել պատմությունը: Յեւ ինչպես կացությունը իմացվում է գիտակցության միջոցով ու գիտակցություն՝ կացության միջոցով, այնպես ել բնությունը, լինելով մարդու գործունեություն արդյունք, բանում է իր գաղտնիքները պատմության միջոցով: Մարքսի ժամանակից պատմական աշխարհի պրոբլեմը կյանքի և փիլիսոփայություն կենտրոնական պրոբլեմն է, վորովհետեւ պատմական իրականություն, վորպես ֆոկուսի մեջ, կենտրոնանում են, ինչպես մեր ամբողջ վերաբերմունքը դեպի բնությունը, այնպես ել հոգեվոր աշխարհը, կենտրոնանում է ամբողջ կյանքը:

Վորոշ փիլիսոփաներ՝ բուրժուական բանակից, յերազում են դառնալու «խտորիզմի» կողմը: Նրանք խոսում են պատմության հողի վրա աշխարհայացք կառուցելու անհրաժեշտության մասին, վորովհետեւ պատմության պրոբլեմը, ինչպես արտահայտվում է այդպիսի փիլիսոփաներից մեկը, «դարձել է մեր ամբողջ գոյություն ճակատագրական հարցը»: Իրոք, կարծես ամբողջ բուրժուական աշխարհն ապահովագրել է իրեն անխուսափելի հեղափոխությունից նրանով, վոր նրա մտածողները հայտարարել են աշխարհը հավիտենական և բանական հարաբերությունների անփոփոխ սխառն: Բայց յերբ բուրժուական աշխարհի վորքի տակի հողը սկսեց տատանվել, յերբ սկսվեցին սոցիալական

կատասարդֆները, այդ ժամանակ հին աշխարհի իդեոլոգները հիշեցին, վոր նրանք աչքաթող են արել պատմութիւնը: Սակայն պատմութիւնը նրանց դեմ է: Պատմութիւնը իր միտքը նրանցից շուռ է տվել: Պատմութիւնը պրոգրեսի, հեղափոխութեան կողմն է: Իր գեմքով նա դարձած է դեպի պրոլետարիատը, վորը կոչված է նրա կողմից՝ թարմացնելու և յերիտասարդացնելու մարդկութիւնը: Ուստի ճշմարիտ վոր պատմութիւնը ստանում է ճակատագրական բընույթ բուրժուազիայի գոյութեան համար: Ճանաչել պատմութիւնը — նշանակում է հրաժարել մի հայացքից, ըստ վորի մեր եմպիրիք աշխարհը հայտարարվում է խաբուսիկ տեսիլք, սուտ, իսկ հավիտենական և անփոփոխ հասկացողութիւնները կամ գաղափարները — ճշմարիտ իրականութիւն:

Մանր-բուրժուական ռեյատիվիզմը հետեւանք է, բացի ֆիզիկայի ճգագիտից, ինչպես այդ մատնանշում է Լենինը, և սոցիալական պատճառների: Մանր բուրժուազիան զարգացած կապիտալիզմի ժամանակաշրջանում կտրվում է իրականութեան հողից: Աշխարհում չկա վոչինչ կայուն, վոչինչ բանական: Աշխարհը մի քաոս է, վոր անհրաժեշտ է մի կերպ կազմակերպել: Մանր բուրժուազիան այս աշխարհում չի գտնում վոչ մի տրամաբանութիւն, վոչ մի որին աչափութիւն: Որքեկտիվ պատմական պրոցեսը փոխարինվում է հոգեկան տպրուսների հոսանքով:

Մարքսիզմը հաղթահարում է ռացիոնալիզմը և անհիմն ռեյատիվիզմը: Դիալեկտիքական մատերիալիզմը առավելապես պատմական աշխարհայացք է: Կացութեան, գոյութիւն ունեցողի բնութիւնը բանվում է նրա առաջացման ուղիների վրա, այսինքն՝ պատմական զարգացման ուղիների վրա, վորովհետեւ աշխարհը մշտապես փոփոխվում է, այլ վոչ թե հանդիսանում է ինչ վոր մեռած, քարացած և պատրաստի բան: Համաշխարհային պատմութիւնը համաշխարհային եվոլյուցիայի առաջին ֆորման է: Պատմութիւնը այսպիսով ամբողջ տիեզերքի գոյութեան ֆորման է: Յեթե այդ այդպես է, ուրեմն պատմութիւնը գառնում է հիմնական գիտական դիսցիպլինը:

Մարդկանց պատմութեան բովանդակութիւնն է մարդկանց գործունեութիւնը, ինչ չափով վոր նախ և առաջ նա արտահայտվում է կյանքի արտադրութեամբ: Հեգելի համար տնտեսութիւնը, եկոնոմիկան ներկայացնում է իրենից գաղափարի զարգացման աստիճանը, զրանով էլ եկոնոմիկան Հեգելը մտցրեց բանականութեան

թիւն սիստեմի մեջ: Գրականութեան մեջ, ի միջի այլոց, մատնանշված է, վոր աշխատանքի հասկացողութիւնը Հեգելի ամբողջ սիստեմի մետաֆիզիքական սկզբունք է: Անմիջականութիւնը, վորի մեջ էր սուղված հոգին սկզբից, հաղթահարվում է աշխատանքով: Պատմութիւնը իսկապես աշխատանքի թագավորութիւնն է, վորովհետեւ զարգացման, այսինքն՝ կուլտուրայի բարձր աստիճանների վեր յենելու պրոցեսը կատարվում է աշխատանքի միջոցով: Սակայն Հեգելն անընդունակ էր թափանցել տնտեսութեան բնութիւնը, ուր դիալեկտիկան նրա համար գաղարում է գործել: Հեգելը չէր տեսնում տնտեսութեան ներքին կյանքը և զարգացումը, չնայած նա իր այլ ժամանակակիցներից ավելի լավ հասկացավ ընդհանրապես նրա նշանակութիւնը: Մինչդեռ դիալեկտիկան այլ սֆերաներում դրսեւորում է իրականութեան ներքին անհանգստութիւնը, մինչդեռ արվեստը, կրօնը, փիլիսոփայութիւնը յենթակա յեն դիալեկտիքական կերպարանափոխութիւնների, այսինքն՝ պատմութեան իդեալական արդյունքները չեն տրված ավարտված կերպով, այնուամենայնիվ պատմական և հասարակական գործունեյութեան տնտեսատեսիլքական բաղիսը պատկերանում է Հեգելին ավարտված ձեւով և կարիք չունի հետագա արմատական կերպարանափոխման: Համենայն դեպս տնտեսութիւնը Հեգելի համար դարձավ փիլիսոփայական պրորբեմ: Սոցիալիստական աշխարհի ճշմարիտ փիլիսոփան յեղավ Մարքսը: Մարքսը հաստատեց, վոր տնտեսութեան զարգացման մակարդակը, արտադրական ուժերի զարգացումը կուլտուրայի շարժիչ ֆակտորն է, և վոր գիտութիւնը, փիլիսոփայութիւնը, արվեստը կազմում են այդ պատմականորեն պայմանավորված և զարգացող նյութական կուլտուրայի ճյուղերն ու մասերը: Տնտեսութեան նշանակութիւնը չի սպառվում մեր նյութական պահանջների բավարարմամբ, բայց նա միջոց է մարդկային հասարակութեան համար՝ տիրապետել բնութեանը, դառնալ նրա տերը: Տնտեսութիւնը կազմակերպված և միացած մարդկութեան որքեկտիվ ստեղծագործութիւնն է: Յեւ այդ ստեղծագործութեան մեջ, այդ գործունեութեան մեջ մարդկային իմացութիւնը, բոլոր գիտութիւններն ունեն իրենց վերջին հիմքը: Միաժամանակ Մարքսը կոնկրետ հասարակական պրակտիկան բարձրացրեց փիլիսոփայական թեորետիքական բարձրութեան: Հենց պրակտիքական կյանքը, մարդու պրակտիքական գործունեյութիւնը առաջին անգամ առարկա դարձավ — ամենակարեւոր առարկան — մտքի տեսական

աշխատանքի: Այստեղ որչեկտը չի հակադրված սուբյեկտին, վորպես ինչ վոր մի ոտար բան. սուբյեկտը նրան ձեռնկերպում է և փոփոխում: Իսկ ինքը սուբյեկտը, այսինքն՝ մարդը փոխվում է՝ արտաքին որչեկտներին—բնության փոփոխման հետ միասին: Նյութական կյանքի արտադրությունը որչեկտի և սուբյեկտի, բնության և հասարակության միջի կապն է:

XII

Համաշխարհային պատմության հերթական «առաջարկումը» կատարվում է այժմ՝ դիտելատիքական մատերիալիզմի, մարքսիզմի դրոշի տակ: Բուրժուական թեորիաները խորտակում կրեցին, անկարող լինելով հասկանալ վոչ պատմության ընթացքը, վոչ ել նախատեսել պատմական անցքերը: Այդ բացատրվում է նրանով, վոր բուրժուազիան արդեն անընդունակ էր ղեկավարել կյանքը, վոր նա ինքը անցել է պատմության գիրկը: Վաղվա որը նրան չի պատկանում, չնայած դեռ նա կարող է ժամանակավորապես դիմանալ պատմության մակերեւոյթի վրա: «Գիտությունը մարգարեություն է, —ասում եր Լենինը,—բայց նա փորձի վրա հիմնված մարգարեություն է: Բուրժուական իդեոլոգները և փիլիսոփաները անընդունակ են գիտական մարգարեություն անելու, վորովհետեւ մարգարեությունը գործ ունի ապագայի հետ, իսկ ապագան չի պատկանում բուրժուազիային: Բուրժուազիան կաշտում է անցյալից և ներկայից: Նա յերազում է, վոր ժամանակը կանգ առնի, վոր պատմությունը դադարի, ուստի նրան հարկավոր են գերպատմական, գերժամանակային, հավիտենական ճշմարտություններ: Սակայն նա հավիտենական ճշմարտություններ է համարում գիտակցության և կյանքի ժամանակային, պատմական - սոցիալական ֆորմաները: Պրոլետարիատը պոռթկում է դեպի ապագան. նա հարձակումով, հեղափոխական պայքարի միջոցով նվաճում է այդ ապագան, վորը պատկանում է միայն իրեն: Ուստի պրոլետարիատի աշխարհայացքը, լինելով պատմական՝ վերը զարգացած իմաստով, յեղնելով ներկայի պայմանների մաքուր թյուրիմաց որիյնատանում է դեպի ապագան, դեպի կոմունիզմը, վորն, ըստ Մարքսի արտահայտության, զրուծվում է, այլ ուրիշ շարժում:

Ճշմարիտ կացությունը ապագան է. ապագան զարգացած և իրագործված ներկան է: Ուստի կացությունը չի կարելի վերցնել

և հասկանալ իբրեւ մահած ու ավարտված զրուծվում: Ընդհակառակը, միայն ապագայի միջոցով է ներկան հասկանալի դառնում, միայն հավիտենական շարժումն է զրսեւորում կացության ճշմարիտ իմաստը: Ներկան հետեւանք է անցյալի և գրավականը ապագայի, ինչպես ասում է Հեգելը:

Թեորիայի և պրակտիկայի միջով յեղած հակասությունը հաղթահարվում է այն թեորիայով, վորն իր սկզբունքը դարձրեց պրակտիկան: Սմեն մի թեորիա, վոր կտրված է մարդկային կյանքից, պրակտիկայից—անուժ է: Գերմանական փիլիսոփա Ֆիխտեն ասում էր, վոր փիլիսոփայությունը արժեք և նշանակություն ունի այն չափով, ինչ չափով վոր նա զենք է հանդիսանում հասարակակարգի անարդարությունների դեմ: Այդպես եր ասում խոշոր հեղափոխականը գերմանական բուրժուական հեղափոխության նախորդակին: Իզուր չէ վոր Ֆիխտեն հիացմունքով է վերաբերվում դեպի Ֆրանսիական հեղափոխությունը:

Մի ժամանակ Հունաստանում փիլիսոփա ելին անվանում պետություն խոշոր հիմնադիրներին: Իսկ այժմ փիլիսոփա յեն համարում սիստեմներ «հիմնադիրներին» և փիլիսոփայական նյութերի մասին գրողներին: Սակայն ակներեւ է, վոր պրոլետարական իմաստով ճշմարիտ փիլիսոփան նա յե, ով եյական մի բան է անում մարդկային պրոգրեսի համար և կարելի մի բան՝ սարկությունից մարդկությունը ազատագրելու համար, մի խոսքով, նա, ով վոչ միայն խոհում է բնության և պատմության մասին, այլեւ ստիճաբարձրած ու մ է պատմությունը և զրանով հանդիսանում համաշխարհային պրոցեսի մասնակիցը: Վորովհետեւ միայն կազմակերպված և միացյալ աշխատանքը կազատագրի մարդկությունը սարկությունից և նրան հնարավորություն կտա տիրապետել բնության ուժերին, ուստի ակներեւ է, վոր այդ ուղղությամբ գործելը—ամենաազնիվ և վսեմ գործունեությունն է հանդիսանում: Յեւ ով աշխատում է մարդկային հասարակության լավագույն կազմակերպման, նրա փոփոխության համար, նա յել հենց հանդիսանում է ճշմարիտ փիլիսոփան:

Մենք տեսանք, վոր ըստ Հեգելի, նոր փիլիսոփայությունը, այսինքն՝ իրականության նոր ըմբռնողությունը, «հոգու նոր ֆորման», ինչպես վոր նա կասեր, կամ հասարակական գիտակցության նոր ֆորման ծնվում է վորոշ հասարակական ֆորմացիայի վերջալուսին: Այդ նոր գիտակցությունը ձեռնարկում է իրականության այն

Ֆորմայի քննադատութեան և խորտակման աշխատանքին, վորը պատմութեամբ դատապարտված է խորտակման: Գիտակցութեան նոր Ֆորման կամ իդեոլոգիան նույն հասարակական Ֆորմացիայի արդունք է, բայց միջովնույն ժամանակ նրա memento mori-ն: Մեր եպոխայում հասարակական հասունացած գիտակցութեան, հետեւապես իրականութեան նոր ծնվող Ֆորմայի ամենացայտուն, հետեւողական և անվախ արտահայտիչը հանդիսանում էր Լենինը: Իմպերիալիստական պատերազմը բերեց իր հետ սոցիալիզմի խորտակումը: Մարքսիզմին ոտար է ֆանտաստիքական տեսակետը: Մարդկանց գործողութունները, դասակարգերի և կուսակցութունների գործողութունները պատմական պայքարի մեջ վճռական ֆակտորներ են: Վոչ մի կասկած չկա, վոր սոցիալ-դեմոկրատիան կանգնած էր և մինչեւ այժմ էլ կանգնած է ֆատալիստական տեսակետի վրա. նա նսեմացնում է հեղափոխական դասակարգերի գերը և փոխադրում է ծանրութեան կենտրոնը իրերի բնական ընթացքի «ավտոմատիզմի» կողմը: Այդ «ավտոմատիզմը» բացատրվում է նրանով, վոր պրոլետարիատի վորոշ շերտեր և նրանց ներկայացուցիչ կուսակցութունները այսպես թե այնպես «աճելով կապվել» են արդի հասարակակարգի, մանր բուրժուազիայի, իմպերիալիզմի հետ: Գերմանական սոցիալ-դեմոկրատիան 1918 թվի հեղափոխութունից հետո «հնարավորութուն» ունեւ, միանալով ռուսական պրոլետարիատի հետ, սկսել համաշխարհային պատմութեան նոր եպոխան: Բայց նա վախեցավ սեփական հաղթութունից, վախեցավ առաջադրված պայքարից և վճռեց ինքն իրեն տալ «իրերի բնական ընթացքի» ազատութեան, արդարացնելով իր յերկշտութունը Գերմանիայի անպատրաստութեամբ սոցիալիզմի համար, նրա քայքայվածութեամբ և Անտանտի հանդեպ ունեցած վախով: Այսպիսով գերմանական սոցիալ-դեմոկրատիան յերկու անգամ վճռագործութուն կատարեց. մեկ, վոր արդարացրեց և սրբագործեց իմպերիալիստական պատերազմը և յերկրորդ, վոր հրաժարվեց և ինքն իրեն վանեց սոցիալիզմի համար մղվող հեղափոխական պայքարից: Առաջավոր դասակարգի կուսակցութունը, վոր համարձակութուն չունի հաղթելու, դրանով հենց և ետ կցի ոն դեր է խաղում և իր գործողութուններով պատրաստում է ռեակցիոն դասակարգերի հաղթանակը: Հնաբանութունների այն կրկնութունը, թե արդի պայմաններում սոցիալիստական հեղափոխութունն անժամանակ է—վկայում է այդպիսի «մարքսիստների» բթամտութունը: Այն հանգամանքից, վոր պոլիտի-

կայի հիմքում գտնվում է եկոնոմիկան, անում են այն յեզրակացութիւնը, թե քաղաքական պայքարը յերկրորդական նշանակութիւն ունի, վորով և Լենինի խոսքերով՝ «նսեմացնում են քաղաքական պայքարը մինչեւ տնտեսականը»:

Ինչպես վոր Մարքսը կապիտալիստական հասարակութեան մեխանիզմի ուսումնասիրութեան և բանվոր դասակարգի մշտնջապատ ձգտումների, զգացումների և ապրումների ըմբռնման հիման վրա ստեղծեց ամբողջական աշխարհայացք և դարձավ մարդկութեան առաջնորդը, այնպես էլ մեր եպոխայում Լենինը, ընդգրկելով նույն մատերիալիստական մարքսիստական աշխարհաըմբռնողութիւնը, կարողացավ իմպերիալիստական պատերազմի քառսի մեջ բռնել պրոլետարիատի իսկական ձգտումները, լսել նրա սրտի բարախումը խրամատնութեւ և դադգյահի մոտ ու մարմնացնել նրա մթազին, անձեւակերպ ապրումներն ու զգացումները գիտակցութեան բարձր Ֆորմայի մեջ: Մտածող է նա, ով ամենից ցայտուն կերպով է արտահայտում «ժամանակի վոգին», ով իր դասակարգի անգիտակցական ձգտումները բարձրացնում է գիտակցութեան աստիճանը: Իսկ առաջավոր դասակարգի մտածողը ամբողջ մարդկութեան առաջնորդն է հանդիսանում: Մարքսիզմի մի շարք թեորետիքական ճիշտ դրութիւններն առաջին անգամ յենթարկվեցին գործնական փորձման: Կոմունիզմը հեռավոր նպատակից դարձվեց այսօրվա պրակտիքական պրոբլեմը: Այս վիթխարի ծառայութիւնը մատուցեց Լենինը, ինչ չափով վոր կարելի յէ ընդհանրապես խոսել մեծ անհատների գերի մասին: Դեռ 1905 թ. «Յերկու տակտիկա» գրքում Լենինը գերադանցորեն լուսարանում է մի քանի խոսքերով դիալեկտիքական մատերիալիզմի նշանակութիւնը, հակառակ հին մատերիալիզմի: Դիալեկտիքական մատերիալիզմի խնդիրն է վոչ միայն յերեւոյթներին կարագրութիւնը և բացատրութիւնը: Ուլքեր կանգնած են այդ տեսակետի վրա, նրանք «նսեմացնում են պատմութեան մատերիալիստական ըմբռնումը նրանով, վոր անտես են առնում գործող, ղեկավար և ուղեցույց այն դերը, վոր պետք է խաղան և խաղում են հեղաշրջման նյութական պայմանները գիտակցած և առաջավոր դասակարգերի գլուխ անցած կուսակցութիւնները»: Մատերիալիզմը (մարքսիզմը—դա թե որ ետիքական կոմունիզմն է, իսկ կոմունիզմը՝ պրակտիքական մատերիալիզմը: Թեորիայի և պրակտիկայի, մատերիալիզմի և կոմունիզմի այդ ներքին միասնութիւնը գերադանցորեն հասկանում

եր Լենինը: Ուստի նրան ոտար եր սոցիալիզմի «բաժանումը» նւ-
պատակի և դեպի նպատակը տանող ուղիի: Մի ժամանակ Եդ-
Բերնշտեյնը բաց թողեց իր հայտնի ռեվոլյուցիոնիստական ֆրազը, վոր
դարձավ արդի սոցիալ-դեմոկրատիայի հավատի սիմվոլը: «Վերջնական
նպատակը վոչինչ է, շարժումն՝ ամեն ինչ», ասաց ռեվոլյուցիոնիզմի
հայրը: Լենինը տարբերվում է այլ մարքսիստներից նրանով, վոր նա
սքանչելիորեն տիրապետում եր հեղափոխական դիալեկտիկային:
Ուստի շարժումի և նպատակի այդպիսի մետաֆիզիկական
հակադրումն որդանապես ստար եր նրան: Սողացող եմպիրիզմը կա-
րող է բավականանալ մանր փշրանքներով: Յես այստեղ չեմ մըտ-
նում այն սոցիալական պայմանների քննության մեջ, վորոնք առա-
ջացնում են այդ սողացող եմպիրիզմը կամ ռեվոլյուցիոնիզմը, ինձ այդ
տեսակետից հետաքրքրում է միայն հարցի փրկստփայական-թեո-
րետիքական կողմը: Կանտիականների համար «վերջնական նպա-
տակը» գտնվում է իրականության այն կողմը և ինչ-վոր trans-
consus է, յերբեք նա չի կարող իրագործվել եմպիրիք աշխարհում: Այս-
տեղից և բղխում է շարժումի վերաբնահատությունն ու սողացող
եմպիրիզմի հաղթանակը: Դիալեկտիքական մատերիալիզմը վոչինչ
ընդհանուր չունի այդպիսի եմպիրիզմի կամ իդեալիզմի հետ (վոր
հանդիսանում է սողացող իմպերիզմի մի այլ կողմը): Կանտյական
սոցիալիզմի հետեւորդները սովորաբար ծածկում են իրենց հակա-
հեղափոխական, ոպորտունիստական և չափազանց եմպիրիք գոր-
ծողությունները մարդուն անմատչելի բարձր իդեալների ճղճղան
ֆրազներով, իդեալները՝ վորոնք գտնվում են եմպիրիք աշխարհի
այն կողմը:

Վերջնական նպատակը և շարժումը դիալեկտիքական մատե-
րիալիստի համար մի ամբողջություն են, կոնկրետ միասնություն:
Բայց այն ժամանակ, յերբ ոպորտունիստները յենթարկում են վեր-
ջնական նպատակը շարժումին, հեղափոխական մարքսիզմը յենթար-
կում է շարժումը վերջնական նպատակին: Առաջին անգամ Գ. Վ.
Պլեխանովի կողմից առաջադրված պրոլետարիատի գերիշխանության
գաղափարը կազմում եր Լենինի ամբողջ հեղափոխական գործունե-
յության ղեկավար և կենտրոնական գաղափարը: Հեղափոխական
պայքարի բոլոր ստադիաներում Լենինը յերբեք աչքաթող չեր անում
վերջնական նպատակը, այսինքն՝ սոցիալիզմը: Պրոլետարիատի հե-
զեմոնիան բուրժուական հեղափոխության ընթացքում անցնում
է պրոլետարիատի դիկտատուրայի՝ բուրժուազիային հաղթե-

լուց հետո: Ուստի պրոլետարիատի խնդիրն է—ամենաակտիվ մաս-
նակցությունն ունենալ հեղափոխական պայքարի բոլոր ստադիանե-
րում, այն ղեկավարելու համար և ինքն իրեն նախապատրաստելու՝
վորպեսզի գրավի իշխանությունը սոցիալիզմի իրականացնելու նպա-
տակով: «Պրոլետարիատը պետք է մինչեւ վերջը
հասցնի դեմոկրատական հեղաշրջումը, միացնե-
լով իրեն գյուղացիական մասսան, վորպեսզի ու-
ժով ճնշի միապետութան դիմադրությունը և ջը-
լատի բուրժուազիայի անկաշունությունը: Պրո-
լետարիատը պետք է սոցիալիստական հեղաշրջ-
ում կատարի, իրեն միացնելով բնակչության կի-
սապրոլետար տարրերը, վորպեսզի ուժով ճնշի
բուրժուազիայի դիմադրությունը և ջլատի գյուղ-
ացիության ու մանր բուրժուազիայի դիմադրու-
թյունը» (Լենին):

Իր ամբողջ հեղափոխական գործունեության ընթացքում քա-
րոզելով պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, դիտելով այն
իբրեւ մի գործիք՝ սոցիալիստական հեղաշրջում կատարելու համար,
Լենինն ուրիշներից ավելի յեր սուբյեկտիվորեն պատրաստված՝ գըլ-
խավորելու հեղափոխական շարժումը, վոր ծնունդ եր առել իմպե-
րիալիստական պատերազմի պայմաններից: Լենինը տարբեր եր սո-
ցիալիզմի այլ առաջնորդներից նրանով, վոր «լըջորեն» եր մոտե-
նում սոցիալիստական շարժումի բոլոր պրոբլեմներին: Մինչդեռ
սոցիալիստների խոշոր մեծամասնությունը իմպերիալիստական պա-
տերազմում, միջազգային կոնգրեսները բոլոր վճիռներին հակառակ,
պաշտպանում եր «քաղաքացիական խաղաղությունը», Լենինն առա-
ջին անգամ առաջադրեց մի լոզունգ, վոր ստանում է վճռական
նշանակություն պրոլետարիատի պայքարի համար ընդդեմ բուրժու-
ազիայի, մի լոզունգ, վոր, անկասկած, եպոխա յե կազմում մարդ-
կության պատմության մեջ. այդ լոզունգն է,—իմպերիալիստական
պատերազմը դարձրեք քաղաքացիական պատերազմ: Լենինը իրա-
վացի կերպով գրում է, —«գալլույթի բամբասանքի և ստի վոչ մի
ճիշով նրանք (բալշևիկի մի թշնամիները) չեն մթազնիլ այն հա-
մաշխարհային-պատմական փաստը, վոր հարյուրավոր և հազարավոր
տարիների ընթացքում առաջին անգամ ստրուկները ստրկատերերի
միջով մղվող պատերազմին պատասխանեցին հետեւյալ լոզունգի
բացահայտ ազդարարումով՝ հանուն հասութի բաժանման ստրկա-

տերերի միջով մղվող այս պատերազմը դարձրեք բոլոր ազգերի ստրուկների պատերազմ՝ ընդդեմ բոլոր ազգերի ստրկատերերի:

«Հարյուրավոր և հազարավոր տարիների ընթացքում առաջին անգամ այդ լուղունգը մթաղին և անուժ սպասումից դարձավ պայծառ և պարզ քաղաքական մի ծրագիր. նա դարձավ պրոլետարիատի ղեկավարութայմբ մղվող միլիոնավոր ճնշվածների գործող պայքարը, պրոլետարիատի առաջին հաղթանակը, պատերազմները վերացնելու գործի, բոլոր յերկրների բանվորների միության գործի հաղթանակը տարբեր ազգերի բուրժուազիայի միության վրա, այն բուրժուազիայի, վորը և հաշտվում է և պատերազմում ի հաշիվ կապիտալի ստրուկների, ի հաշիվ վարձու բանվորների, ի հաշիվ գյուղացիության և աշխատավորների»^{*)}:

Յերագույն մի շարք մեծ փիլիսոփաներ յերազում եյին պատերազմը դադարեցնելու մասին: Նրանք առաջադրում եյին ամեն տեսակ բարոյական պատվիրաններ, բանականության հավիտենական որենքներ և այլն: Բայց ինչպես մենք տեսանք, այդ յերազները խաղաղության գործը մի քայլով ել առաջ չտարան: Ընդհակառակը, պատմությունը շարունակում եր դարգանալ միլիտարիզմի ուղղութայմբ: Անողոր և արյունահեղ պատերազմները ժամանակ առ ժամանակ ցնցում են մարդկային հասարակությունը: Բնական է, վոր կապիտալիստական եպոխայում, վորը փոխարինեց ֆեոդալական հասարակությունը, պատերազմներն ստացել են պերիոդաբար կրկնվող ժողովուրդների, վիթխարի պետությունների ընդհարումների բնույթ: Գնալով այդ միջազգային ընդհարումները դառնալու յեն ավելի անողոր և քայքայիչ: Ապագայի «քիմիական» և ամեն այլ տեսակի պատերազմները իրոք վոր սպառնում են կործանելու, եներգիայի չնչին ծախսով, ամբողջ քաղաքներ և տասնյակ միլիոնավոր մարդկանց: Պետք է կույր լինել, վորպեսզի չտեսնել, վոր մարդկությունը կանգնած է ինքնավերման, ինքնավոչնչացման սոսկալի պրոցեսի առջև: Ժամանակակից հասարակության արտադրական ուժերը դրսևվորում են իրենց ավերիչ բնույթը: Նրանք հակաության մեջ են ընկել արտադրական հարաբերությունների հետ: Բայց պատերազմները վարում են տիրապետող դասակարգերը, ըստրկատերերը, վորոնք կանգ չեն առնում մարդկության ջարդի առաջ, յեթե այդ պահանջում են իրենց յեսամոլ շահերը: Բուրժուազիան է ղեկավարում պատերազմները, սակայն հանուն նրա շա-

^{*)} Ленин—Собрание сочинений т., XVIII ч. 1 № 367—368

հերի իրենց արյունը թափում են բանվորները և գյուղացիները, վորոնց միակ շահը ստրկատերերի իշխանության տապալման մեջ է կայանում:

Լենինի մեծագույն ծառայությունը կմնա այն, վոր նա կոչում եր իմպերիալիստական պատերազմը դարձնել քաղաքացիական պատերազմ, վոր նա բարձրացրեց ապստամբության դրոշը ընդդեմ պատերազմի և չսահմանափակվեց միայն սոսկ բանաձևվերով պատերազմին պատերազմ հայտարարելու անհրաժեշտության մասին: «Յեթե իրոք ճիշտ է, գրում է Լենինը գրեթե համաշխարհային պատերազմի սկզբին, վոր այժմյան պատերազմը իմպերիալիստական պատերազմ է, վոր իմպերիալիզմը մի ամբողջ պատմական ստադիա յե կապիտալիզմի վերջացող զարգացման մեջ, յեթե ճիշտ է, վոր այժմյան պատերազմը կարող է բանալ կրկնվող իմպերիալիստական պատերազմների մի ամբողջ եպոխա, յեթե իմպերիալիստական պատերազմների եպոխան սպառնում է մեզ անհամար թշվառություններով, արյան ծովերով, միլիոնավոր զոհերով, միջազգային միության թուլացումով, սպառնում է բավականին հեռու յետ շարտել պրոլետարիատի մեծ ազատագրական շարժումը,— յեթե այս բոլորն այդպես է, իսկ այդ անկասկած այդպես է, ուրեմն մենք, հեղափոխական սոցիալ-դեմոկրատներս, պետք է վոր մեզ հարց տանք, ինչպես կույր վրա հասնող շարիքի դեմ, ինչով մենք ընդառաջենք այդ վրա հասնող եպոխային, ինչպես կանխականգնենք այն կործանիչ հետեվանքները, վոր արդեն իսկ բերեց իր հետ մեծ իմպերիալիստական պատերազմներից առաջինը»:

Այդ անիճյալ հարցը կանգնած է միջազգային պրոլետարիատի առջև և մինչև այսոր: Ստեղծված դրությունից միակ յեղքն է— պրոլետարիատի ապստամբությունը, պրոլետարական հեղափոխությունը, իշխանության գրավումը բանվոր դասակարգի կողմից և պայքարը՝ հանուն սոցիալիզմի: Պրակտիքական մատերիալիզմը իրեն նպատակ է դնում, ասում է Մարքսը,— գոյություն ունեցող աշխարհը հեղափոխականացնել: Նա պրակտիքապես, և վոչ թե միայն թեորետիքորեն, բառացիորեն, պլատոնորեն, ինչպես այդ անում եյին նախկին փիլիսոփաները, դառնում է հին աշխարհի դեմ և փոխում է այն: Առանց պայքարի վոչ մի մեծ բան չի իրագործվում կյանքում: Այս նույնքան խորիմաստ, վորքան հասարակ ճշմարտությունը քաղաքում է մարքսիստական մատերիալիզմը, մատերիալիստական փիլիսոփայությունը: Ուստի պարզ է, վոր ով կանգնում

ե այլ տեսակետի վրա, ով մտածում ե, վոր կարելի յե աշխարհը փոխել թախանձանքների, լավ բանաձեւերի միջոցով, նա փաստորեն իդեալիզմի տեսակետի վրա յե կանգնում և դավաճանում ե մատերիալիզմին: Համաշխարհային պատմական մեծ խնդիրները, վոր կանգնած են արդի հասարակութայն առաջավոր դասակարգի առջեւ, կարող են լուծվել միայն դասակարգային պայքարի միջոցով: Բուրժուազիայի իշխանութայն տապալումը և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը նոր պատմական եպոխայի սկիզբն են հանդիսանում: Լենինը, կշռադատելով Հոկտեմբերյան հեղափոխութունը, գրում ե—«մենք իրավունք ունենք հպարտանալու (և մենք հպարտանում ենք), վոր մեզ յերջանկութուն ե վիճակվել՝ սկսել խորհրդային պետութայն կառուցումը, սկսել դրանով համաշխարհային պատմութայն նոր եպոխան, նոր դասակարգի իշխանութայն եպոխան, մի դասակարգի, վորը բոլոր կապիտալիստական յերկրներում ճնշված ե և ամենուր գնում ե դեպի նոր կյանքը, դեպի բուրժուազիային հաղթելը, պրոլետարիատի դիկտատուրան, մարդկային ազատագրումը կապիտալի լծից և իմպերիալիստական պատերազմներից:

XIII

Մատերիալիստական դիալեկտիկան ուսուցանում ե մեզ, վոր հին հասարակական ֆորմացիան, վորից ծնվում ե նորը, վերջինիս վրա, սկզբնական շրջանում, դնում ե իր կնիքը: Ուստի Մարքսը, նրանից հետո և Լենինը, ճշտորեն դիտում են «կոմունիզմը իբրեւ կապիտալիզմից զարգացող մի բան», և սահմանում են կոմունիզմի տնտեսական հասունութայն մի շարք աստիճաններ: «Իր առաջին ֆազի մեջ, —գրում ե Լենինը,—առաջին աստիճանում կոմունիզմը դեռ չի կարող տնտեսապես լիովին հասուն, լիովին ազատ լինել տրադիցիաներից կամ կապիտալիզմի հետքերից»: Այստեղից հետեւում ե մի այնպիսի հետաքրքրական յերեւույթ, վորպիսին բուրժուական իրավունքի նեղ հորիզոնի պահպանումն ե» կոմունիզմի որոք, նրա առաջին ֆազում: Բուրժուական իրավունքը սպառնում ա պրոդուկտների բաշխման վերաբերյալ, իհարկե, յենթադրում ե անխուսափելիորեն և բուրժուական պետութունը, վորովհետեւ իրավունքն առանց ապարատի, վոր ընդունակ լինի հարկադրել ճանաչել իրավունքի նորմաները—վոչինչ ե:

Բանից դուրս ե գալիս, վոր կոմունիզմի որոք վոչ միայն վորոշ ժամանակի ընթացքում պահպանվում ե բուրժուական իրավունք-

քը, այլ նույնիսկ և բուրժուական պետութունն ե մնում առանց բուրժուազիայի:

Սա կարող ե պարագոքս թվալ, կամ ուղղակի դիալեկտիքական մտքի խաղ, վորի համար հաճախ մեղադրում են մարքսիզմը մարդիկ, վորոնք վոչ մի կաթիլ անգամ ջանք չեն թափել՝ ուսումնասիրելու այդ պարագոքսի չափազանց հարուստ բովանդակութունը:

Իսկապես, կյանքն ամեն քայլափոխում մեզ ցույց ե տալիս հին մնացորդները նորի մեջ և բնութայն և հասարակութայն գաղափարում: Յեւ Մարքսը վոչ թե կամայականորեն մոցրեց «բուրժուական» իրավունքի մի կտոր կոմունիզմի մեջ, այլ վերցրեց այն, ինչ վոր տնտեսապես և քաղաքականապես անխուսափելի յե կապիտալիզմի ծոցից դուրս յերնող հասարակութայն մեջ»:

Պետութունն ընդհանրապես մի դասակարգի սխտեմատիքական բռնութայն կազմակերպութունն ե մի այլ դասակարգի վրա: Այդ տեսակետից տարբերութուն չկա բուրժուական դեմոկրատական պետութայն և պրոլետարական դիկտատուրայի միջեւ, պետական կազմակերպութայն տարբեր ֆորմաների միջեւ ընդհանրապես: Բայց եյապես նրանց միջեւ գոյութուն ունի վիթխարի տարբերութուն, ըստ վորի բուրժուական պետութայն, նրա նույնիսկ բախճի ֆորմայի խնդիրն ե՝ բուրժուազիայի տիրապետութայն հաստատումը. իսկ պրոլետարիատը իր պետութունը դարձնում ե բացասման, ամեն տեսակի պետութայն վերացման գործիք: Պրոլետարական պետութայն գործունեութունը ուղղված ե այն բանի վրա, վորպեսզի պետութունն ավելորդ դառնա: Պրոլետարական պետութայն խնդիրն ե վերել բուրժուազիայի դիմադրութունը, և ինչ չափով վոր իրագործվում ե այդ պրոցեսը, պրոլետարական պետութունը մեռնում ե:

«Մեր վերջնական նպատակն ե, ասում ե Լենինը, վոչնչացնել պետութունը, այսինքն վերացնել ամեն մի կազմակերպված և սխտեմատիքական բռնութունը մարդկանց վրա, վերացնել ընդհանրապես ամեն մի բռնութուն: Մենք չենք սպասում այնպիսի մի հասարակակարգի գալուն, վոր չի իրագործի փոքրամասնութայն յենթաթաղկվելու սկզբունքը մեծամասնութայն: Սակայն ձգտելով սոցիալիզմի, մենք համոզված ենք, վոր նա աճելով կփոխվի կոմունիզմի, իսկ դրան զուգընթաց կվերանա մարդկանց վրա բռնանալու ամեն մի կարեւորութայն, մի մարդուն մի ուրիշին յենթաթաղկվելու կարեւորութունը, վորովհետեւ մարդիկ կսովորեն հասարա-

կականության տարրական պայմանները իրագործել առանց բռնության և յեն թաքելիութիւն:

Լենինը իր «Պետութիւն և հեղափոխութիւն» գրքի շատ տեղերում ընդգծում է «հանրակեցության տարրական կանոնները և պայմանները նշանակութիւնը»: Այսպես ապացուցելով ազատության և պետության անմիացնելիութիւնը, ընդգծելով, վոր միայն կոմունիստական հասարակության մեջ, ուր չեն լինի դասակարգեր, ուր գոյութիւն կունենա փաստական համասարութիւն հասարակության անդամների մեջ արտադրության և սպառման միջոցների վերաբերյալ,—կիրականանա իսկական ազատութիւնը և տեղ չի ունենա պետութիւնը, նա շարունակում է—«Յեւ այդ ժամանակ միայն դեմոկրատիան կսկսի մեռնել այն պարզ հանգամանքի հետեւանքով, վոր մարդիկ, ազատված կապիտալիստական լծից, անթիվ սարսափներից, վայրագութիւններից, անհեթեթիւութիւններից, կապիտալիստական շահագործման զաղրելիութիւններից, աստիճանաբար կընտելանան հանրակեցության տարրական, դարեւոր հայտնի, հազարավոր տարիներով կրկնվող որենքների իրագործման, առանց բռնության, հարկադրանքի, յենթարկման, առանց հատուկ հարկադրող ապարատի, վոր կոչվում է պետութիւն»*):

Կոմունիստական հասարակութիւնը ինչ-վոր սառած, ավարտված հասարակական դրութիւն չէ: Ընդհակառակը, սոցիալիզմը ռեյալ շարժում է, այլ վոչ թե դրութիւն, ասում է Մարքսը: Ժամանակակից հասարակության մեջ մասսաները ճնշված են և հալածված: Արագ առաջարժումը անձնական և հասարակական կյանքի բոլոր գովառներում կսկսվի միայն սոցիալիզմով, վորովհետեւ այդ շարժման կմասնակցեն սկզբից բնակչության մեծամասնութիւնը, իսկ հետո և ամբողջ բնակչութիւնը, ասում է Լենինը:

Կոմունիստական կուսակցութիւնը առաջին ֆազը, սոցիալիզմը կրում է իր վրա դրոշմը այնպիսի հասարակութիւն, վորի ծոցից է նա յելել: Այդ սոցիալիստական ֆազը բնորոշվում է նրանով, վոր արտագրական միջոցները կդադարեն լինել մասնավոր սեփականութիւն առարկա և կպատկանեն ամբողջ հասարակութիւն: Հասարակական զարգացման այդ ստադիայում սպառման առարկաները կբաշխվեն ըստ աշխատանքի:

Զարգացման այս աստիճանի վրա դեռ համասարութիւնը և

*) Ленин, նույն տեղը էջ 380

արդարութիւնը չեն իրականացած, վորովհետեւ համասար իրավունքը նշանակում է՝ անարդարութիւն, համասարութիւն խախտումը, վորովհետեւ իրավունքը յենթադրում է միատեսակ մաշտարի կիրարկումը տարբեր մարդկանց նկատմամբ, մարդկանց վորոնք միատեսակ չեն, համասար չեն: Այդ դեպքում սոցիալիզմը անում է միայն առաջին քայլը. նա վերացնում է մարդու շահագործումը մարդու ձեռքով: Հետեւապես, կոմունիզմի առաջին ֆազը արդարութիւն և համասարութիւն դեռ տալ չի կարող: Հասարակութիւն տարբերութիւնները կմնան, և այն եւ անարդարացի տարբերութիւններ, սակայն անհնարին կլինի մարդու շահագործումը մարդու ձեռքով, անհնարին կլինի արտադրութիւն միջոցները, ֆաբրիկաները, մեքենաները, հողի և այլն մասնավոր սեփականացումը»*):

Լիակատար կոմունիզմի որոք սպառման առարկաներն կբաշխվեն ըստ կարիքների: Կոմունիզմի տնտեսական հիմքերի զարգացման չափով իրականանում են, Լենինի կարծիքով, ինչպես և ամեն մի մարքսիստի կարծիքով, հանրակեցութիւն տարրական կանոնները—համասարութիւնը, ազատութիւնը և արդարութիւնը: Իդեալիստ փիլիսոփաները, ինչպես և բուրժուական իդեոլոգները քարոզում են ին համասարութիւնը, յեղբայրութիւնը, ազատութիւնը և արդարութիւնը իբրեւ «հավիտենական արժեքներ», վորոնք ըստ յերեւելի թիւն մնալու յեն վորպես հավիտենական արժեքներ, իդեալներ, վորոնք սովորում են իբրեւ անմարմին հոգիներ մեղսոտ եմպիրիք յերկրի վրա, ուր շարունակում են թագավորել թալանը, բռնութիւնը և ամեն տեսակի զազանութիւնները: Սակայն նրանք բավականանում են ին նրանով, վոր գերեմպիրիք, այնպիսի աշխարհում գոյութիւն ունեն այնպիսի սքանչելի բաներ, վորպիսիք են՝ համասարութիւնը, ազատութիւնը և արդարութիւնը: Մարքսիզմը առաջին անգամ պատմութիւն մեջ մոտենում է այդ «բարձր» բարոյական իդեալներին վոչ թե բարոյական տեսակետից, այլ պատմա-մատերիալիստական տեսակետից: Բուրժուազիայի նախնութաց ամբողջ փիլիսոփայութիւնն ու իդեոլոգիան կանգնած են ին ձեւական համասարութիւն, ձեւական ազատութիւն և այլնի տեսակետի վրա, վորովհետեւ ինքը փիլիսոփայութիւնը հանդիսանում է հասարակական հարաբերութիւնների արատրակտ արտահայտութիւն: Մարքսիզմն ապացուցում է, վոր ձեւական համասար-

*) Ленин, նույն տեղը, էջ 373.

ը ու թյ ու ն ը արդի հասարակության մեջ ու ե ա լ ա ն հ ա վ ա ս ա-
 ը ու թյ ա ն ն արտահայտությունն է, ի ս կ ձ ե վ ա կ ա ն ա զ ա տ ու-
 թյ ու ն ը՝ ու ե ա լ ա ն ա զ ա տ ու թյ ա ն արտահայտությունը և այլն: Մարք-
 սիստական ետիկան «իդեալի» մեջ չի տեսնում ինչ-վոր մի բան,
 վոր ոտար է և հակադրված իրականության, իբրեւ ինչ-վոր պարտա-
 դրողականության (ДОЛЖЕСТВОВАНІЕ): Մարքսիզմի համար իրակա-
 նության խզվելը իդեալից գոյություն չունի: Կոմունիզմը,—գրում
 է Մարքսը,—իդեալ չէ, վորի հետ պիտի համակերպվի իրականություն-
 նը: Նրանք, ովքեր կանգնած են ի դ ե ա լ ի գ մ ի տեսակետի վրա,
 իդեալի տեսակետի վրա, սովորաբար մոռանում են այդ իրականու-
 թյան մասին, մնալով վերացական իդեալի հողի վրա: Դիալեկտիքա-
 կան մատերիալիզմը հենց նրանով է տարբերվում իդեալիզմից, վոր
 «իդեալները» նա բացատրում է և բղխեցնում իրականության ու ե ա լ
 պայմաններից: Վոչ ձե վ ա կ ա ն, այլ փաստական հավասարությունը
 իրենից չի ներկայացնում մի վերացական ճշմարտություն, ինչ-վոր
 հավիտենական կատեգորիա, վոր հավասարապես ճշմարիտ է բոլոր
 ժամանակների համար, այլ նա արդի հասարակության վորոշ դասա-
 կարգի ու ե ա լ շարժումն է, վոր բղխում է այդ դասակարգի կյանքի
 սովյալ կոնկրետ պայմաններից: Մարքսը,—ասում է Լենինը, ու-
 տոպիաներով չեն զբաղվում: Մարքսը կոմունիզմի հարցը արծար-
 ծում է այնպես, ինչպես վոր բնագետը կարծարծեր նոր, ասենք,
 բիոլոգիական այլատեսակի զարգացման հարցը, քանի վոր մենք
 գիտենք, վոր այդ այլատեսակը առաջացել է այսպես, և այսպիսի
 վորոշ ուղղությամբ փոխվում է», Կոմունիզմի զարգացման հետ այ-
 լափոխվում են և զարգանում մարդկային գաղափարները բարոյա-
 կանի, գեղեցիկի և ճշմարիտի մասին:

Իդեալի և իրականության, թեորիայի և պրակտիկայի խզումը
 մեկն է այն ամենամեծ չարիքներից և պատուհաններից, վորոնք մնա-
 ցել են կապիտալիստական հասարակությունից, ասում է ճշտորեն
 Լենինը: Թեորիայում, գրքերի մեջ գրում են վերամբարձ նյութերի
 մասին, իսկ իրենց գործունեություն մեջ, կյանքում դեկավարվում
 են հակառակ սկզբունքներով. մատերիալիզմը պայքարի փիլիսո-
 փայությունն է: Թեորիան և պրակտիկան իրագործում է իր
 միասնությունը, իր սինտեզը պայքարում, հանուն կոմունիզմի
 մղվող պայքարում, իրականության գործնական փոփոխության մեջ:

Ինչ է ներկայացնում մորալը: Յեւ ընդհանրապես գոյություն
 ունի՞ արդյոք կոմունիստական մորալ: Այս հարցերին Լենինը պատաս-

խանում է հետեւյալը: Կոմունիստները բացասում են բարոյականու-
 թյունն այն իմաստով, ինչ իմաստով վոր քարոզում եր բուրժուազիան:
 Բուրժուազիան բղխեցնում է բարոյականության որենքները, բարո-
 յականությունը կամ աստծու թելադրանքներից, կամ թե վերացա-
 կան բարոյականությունից, իդեալիստական ֆրագներից: Մարքսիզ-
 մը բացասում է ապամարդկային, ապադասակարգային հասկացողու-
 թյունից վերցրած բարոյականությունը: Կոմունիստի համար ամ-
 բողջ բարոյականությունը կայանում է գիտակցական մասնայա-
 կան պայքարի մեջ ընդդեմ շահագործողների: «Բարոյականություն-
 նը ծառայում է մարդկային հասարակությունը բարձրացնելու դե-
 պի վեր, խուսափելու աշխատանքի շահագործումից»*)։ Բարոյակա-
 նությունը յենթակա յե այսպիսով պրոլետարիատի դասակարգա-
 յին պայքարի շահերին: Քանի շարունակվում է դասակարգային պայ-
 քարը, կոմունիստական բարոյականությունը պետք է ծառայի այդ
 պայքարին: (Բարոյականությունն այն է, ինչ ծառայում է հին շա-
 հագործող հասարակության քայքայման և բոլոր աշխատավորնե-
 րի միացման պրոլետարիատի շուրջը, վորն ստեղծում է կոմունիս-
 տների նոր հասարակությունը):

Այսպիսով կապիտալիզմի զարգացումը ստեղծում է ու ե ա լ
 նյութական պայմաններ հավասարության, ազատության և արդա-
 ը ու թյ ա ն իրագործման համար: Պրոլետարիատը պայքարում է հանուն
 փաստական ազատության և փաստական հավասարության: Այդ լոզունգ-
 ները կամ իդեալները ունեն հակայական նշանակություն: Արդի հա-
 սարակության զարգացման պրոցեսը ընթանում է ձե վ ա կ ա ն հա վ ա-
 սարությունից և ազատությունից, դեմոկրատիայից պրոլետարիատի
 դիկտատուրայի միջոցով դեպի սոցիալիզմ և կոմունիզմ: «Ֆարքի-
 կային» դիսցիպլինան, վոր կապիտալիստներին հաղթած, շահագործող-
 ներին տապալած պրոլետարիատը կտարածի ամբողջ հասարակու-
 թյան վրա, ասում է Լենինը, վոչ մի կերպ չի հանդիսանում վոչ
 մեր իդեալը, վոչ ել մեր վերջնական նպատակը, այլ միայն նա մի փ ո ջ-
 ր ի կ ա ս տ ի ճ ա ն է, վոր անհրաժեշտ է արմատապես զտելու
 հասարակությունը կապիտալիստական շահագործման գարշանքից
 ու զազրանքից և՛ հետագա «առաջարժման» համար: «Ֆարքիկա-
 յին դիսցիպլինան կմիացնի և կհամախմբի մարդկանց, նրանց կը-
 դաստիարակի հասարակական շահերի վոգով, մարդիկ կսովորեն
 յենթարկել իրենց անհատական շահերը հասարակական շահերին:

*) Ленин—Собрание сочинений т. XVII, 42 324.

«Ամեն մի հանրակեցութեան պարզ հիմնական կանոնների կատարման անհրաժեշտութիւնը, ինչպես արտահայտվում է Լենինը, սովորութեան կղանա: Մարդիկ աստիճանաբար կսովորեն աշխատել հասարակութեան համար առանց իրավունքի վորյեվ են որման երի: Յեւ վորովհետեւ պետութեանը անհավասարութեան և ճնշման արտահայտութեանն է, ուստի հավասարութեան և ազատութեան իրականացման հետ պետութեանը պետք է մեռնի: Սկզբում կիրառործվի հասարակութեան բոլոր անդամների հավասարութեանը արտագրական միջոցներին տիրելու վերաբերյալ. իսկ հասարակութեան հետագա զարգացումը անխուսափելիորեն կընթեր մարդկանց դեպի փաստական հավասարութեան, դեպի «ամեն վոր ըստ ընդունակութեանների, ամեն վոր ըստ կարիքների» կանոնի իրագործմանը»: Պետութեանը կարող է մեռնել լիովին այն ժամանակ, ասում է Լենինը, յերբ հասարակութեանը կիրառործի այս կանոնը՝ «ամեն վոր ըստ ընդունակութեանների, ամեն վոր ըստ կարիքների», այսինքն՝ յերբ մարդիկ այնքան կսովորեն հանրակեցութեան հիմնական կանոններն ի կատար ածել, և նրանց աշխատանքը այնչափ արտագրական կլինի, վոր նրանք կամովին կաշխատեն ըստ ընդունակութեանն երի»*):

Այդպիսով հասարակական կյանքի բոլոր կողմերը կապված են իրար հետ մի կոնկրետ ամբողջութեան մեջ: Լիակատար հավասարութեանը և ազատութեանը կիրականան միայն կոմունիստական հասարակութեան մեջ, ուր անհատի շահերը կգուգորդվեն հասարակութեան շահերի հետ: Այդպիսի հասարակութեան մեջ պետութեանը տեղ չի ունենա: Բոլոր մարդիկ կվարեն հասարակական գործերը, իսկ այնտեղ, ուր բոլորն են կառավարում, այդտեղ հասարակութեան գլխին կանգնած հատուկ կազմակերպութեան կարիքը չի լինի: Կոմունիստական հասարակութեան մեջ կառավարութեան որոշակի կլինեն վոչ թե մարդիկ, այլ իրերը:

Իշխանութեան, բարոյական գաղափարների և կրոնական մտապատկերների աղբյուրն է վոչ թե գերմարդկային աշխարհը, այլ հասարակական հարաբերութեանները: Իսկ հասարակական հարաբերութեանները, այսինքն՝ հասարակակարգը փոխվում է և բնորոշվում մարդկային կոլեկտիվի հարաբերութեամբ դեպի բնութեանը: Իդեալիզմի տեսակետից բարոյական գաղափարները, ինչպես և իմացական ճշմարտութեանը գտնվում է պատմական ի,

*) Ленин, Собрание сочинений, т. XIV № 376.

այսինքն՝ փոփոխական: զգայական նյութական աշխարհի այն կողմը: Ինչպես վոր իմացաբանութեան մեջ նրանք յենում են հավիտենական անշարժ գաղափարները, այդպես էլ մորալի բնագավառում նրանք դիմում են հավիտենական հասկացողութեաններին: Նրանք ըստ այնմ հաստատում են, վոր ունալ աշխարհը, կոնկրետ իրականութեանը իր անցողական բնույթի հետեւանքով չի կարող որոշելով ճշմարտութեան տալ: Լոգիզմը և ռացիոնալիզմը ետիկայի գավառում հաստատում են մորալն ինքնինի գոյութեանը, ինչպես և ճշմարտութեանն ինքնինի գոյութեանը, այսինքն՝ մետաֆիզիքական բարոյական որոշումներ, վոր բարձրանում է փոփոխվող, պատմական իրականութեանը վեր: Սակայն այդ մետաֆիզիքական աշխարհագրութեանների յետեւը թագնվում է տիրապետող դասակարգի ցանկութեանն ու ձգտումը՝ սառնել տվյալ իրականութեանը, վերածելով այն անփոփոխ պատմական կատեգորիայի, վոր բացասում է պատմական գաղափարները: Այդպես է հասարակական եւոլյուցիայի իսկական դիալեկտիկան: Ով ձգտում է վերացնել գաղափարները նա չի տրական: Ով ձգտում է վերացնել գաղափարները, կամ կարող գրավել արդի հասարակութեան մեջ ապագա սակարգային, կամ թե գերդասակարգային դիրք, այլ պետք է յեն թարկի ամեն ինչ պրոլետարիատի դասակարգային պայքարին, վորովհետեւ պատմութեանը տանում է դեպի ապագա սակարգային հասարակութեան, դեպի մարդկանց հասարակական համերաշխութեան՝ միայն թիւն, դեպի մարդկանց հասարակական համերաշխութեան՝ միայն դասակարգային պայքարի միջոցով: Լենինի խոսքերով ասած, «Ֆարբիկային» դիսցիպլինայի միջոցով մարդկութեանը գալիս է այնպիսի հասարակական կազմակերպութեան, յերբ մարդիկ կնայեն աշխատանքի վրա, վորպես հաճույքի և կամովին կաշխատեն հասարակական բարիքի համար: Սակայն դեպի վերջնական նպատակը, իդեալը (ամեն վոր ըստ ընդունակութեանների, ամեն վոր ըստ կարիքների) — ինչպես ասում է Լենինը, — տանող ուղին ընթանում է զանազան աստիճաններով և փոխանցման ֆորմաներով, վորոնք կապված են խիստ դիսցիպլինայի, բռնի կազմակերպութեան հետ: Այդ ուղիով, վորը վարդերով չի ծածկված, այլ հաճախ և փշերով, և վորը կապված է առանձին մարդկանց մեծ տանջանքների հետ, հասարակութեանը իրամբողջութեամբ անխուսափելիորեն ու անշեղ առաջ եղարժվում դեպի պրոգրես՝ տնտեսական զարգացման գուգրնթաց: Միայն հակասութեանների միջոցով է հասարակութեանը ընթանում դեպի համերաշխութեան և խիստ կազմակերպութեան ու յեն թարկման միջոցով դեպի մի հասարակական կազմակերպութեան, վոր չգիտե

բռնութիւն, յենթարկում և հարկադրանք: Վորպեսզի մարդիկ սովորեն, ինչպես ասում են Լենինը, կատարել հանրակեցութեան տարրական պայմանները, անհրաժեշտ են վոչ թե բարոյական գաղափարների քարոզը, այլ մարդու ինքնադաստիարակումը և մարդու փոփոխութիւնը հասարակութեան անհրաժեշտ տնտեսական կերպարանափոխութեան զուգընթաց: Համաշխարհային պատմութիւնը տալիս է մարդկութիւնը անհավասարութիւններից դեպի հավասարութիւն, հարկադրանքից դեպի ազատութիւն, դասակարգային հասարակութիւններից դեպի ապադասակարգային և ապապետական հասարակութիւն: Ամեն մի բարոյագիտական թեորիա մինչ այժմ, ասում են Ենգելսը, հանդիսանում են վերջին հաշիւով հասարակութեան տվյալ տնտեսական վիճակի հետեւանք: «Իսկ վորովհետեւ մինչ այժմ հասարակութիւնը միշտ զարգացել են դասակարգային հակասութիւնների ճանապարհով, ուստի բարոյականութիւնը միշտ էլ յեղել են դասակարգային բարոյականութիւն. նա կամ արդարացրել են տիրապետող դասակարգերի շահերն ու իշխանութիւնը, կամ թե, յերբ ճնշված դասակարգը բաւականաչափ ուժեղ են դարձել, արասնայտել են զայրույթը տիրապետողների դեմ և պաշտպանել են ճնշվածների ապագա շահերը: Վոր ըստ այնմ ընդհանուր առմամբ բարոյականութեան ինչպես և մարդկային իմացութեան այլ բնագաւառներում պրոգրես են կատարվել, դրա մեջ չի կարելի կասկածել: Բայց դեռ այժմ էլ մենք չենք դուրս յեկել դասակարգային բարոյականութեան սահմաններից: Դասակարգային հակասութիւններից և ամեն տեսակի նրանց հուշերից վեր կանգնած բարոյականութիւնը հնարավոր կդառնա հասարակութեան զարգացման այնպիսի աստիճանի որոք, յերբ վոչ միայն կվերանա դասակարգերի ներհակութիւնը, այլև միաժամանակ կանհետանա նրա հետքը գործնական կյանքից»): Հավասարութեան և ազատութեան արդարութեան և բոլոր մարդկանց յեղբայրական համերաշխութեան մտապատկերները պատմական պրոցեսի արդունք են, հետեւանք են վորոշ նյութական պայմանների, վորոնցից նրանք անբաժանելի յեն: Հավասարութեան բուրժուական պահանջը նկատի ունենալով դասակարգային արտոնութիւնների վերացումը քաղաքական սփերայում և պետական հարաբերութիւնների սփերայում հավասարութիւն հաստատելը: Նույնը վերաբերում են ազատութեան պահանջին: Իսկ հավասարու-

*) Энгелс—Анти-Дюринг, русское изд., 1918 г. к. 2, 84.

թեան պրոլետարական պահանջը հանգում են դասակարգերի վերացման և հավասարութեան հաստատման տնտեսական և հասարակական կյանքի ունալ պայմաններում, ինչպես ասում են Ենգելսը: Բացարձակ բարոյականութիւնը գոյութիւն չունի, սակայն այժմ գոյութիւն ունեցող բոլոր բարոյագիտական թեորիաներից, միայն ապագայի պրոլետարական մորալն «ունի փոքրաթիւ տարրեր, վորոնք նրան խոստանում են տեւական կայունութիւն, վորը տվյալ եպոխայում արտահայտում են ապագայի տեսակետը» (Ենգելս):

Պրոլետարական աշխարհամբռնութիւնը և նրանից բխող գործնական պայքարը կոմունիզմի իրականացման համար այդպիսով բանում են ամբողջ մարդկութեան առջեւ հոյակապ հեռանկարներ: Վոչ մի ուսմունք չի կարող նրա հետ համեմատվել վոչ գիտականութիւն և վոչ էլ նրա գործնական արժեքի տեսակետից: Սովորաբար բուրժուական փիլիսոփաները գողողանում են նրանով, վոր «մորալը» նրանց մենաշնորհն են, վոր մարքսիզմը և մատերիալիզմը բացասում են ամեն մի բարոյականութիւն: Ասածից սակայն պարզ են, վոր դասուտ են: Յեւ Նշանակալիյե, վոր յերբ բանը համարում են «մորալի մեծ սկզբունքների» իրականացման, վորոնց մասին այդչափ մտահոգված են իդեալիստ մտածողները, նրանք իսկույն յեվել իրար են անցնում և ապացուցում են իրենց իսկ քարոզած մորալի սկզբունքների անկայունութիւնը: Մարքսիզմի քննադատներից մեկը, վոմմ Գերլիխ*) ծաղրում են Լենինին նրա համար, վոր նա սպասում են կոմունիստական հասարակութեան մեջ նոր մարդու ծնունդը, վոր նա այդպիսի հսկայական նշանակութիւն են տալիս սովորութեան և այլն: Հեղինակը ըստ այնմ համադրում են արքսիզմը դեպի յերկրային դրախտը տաժած նրա «հավատով» ու պրոլետարիատին «աստվածացնելով» քրիստոնեյութեան հետ: Ինքնըստինքյան հասկանալի յեն, վոր այդ Գերլիխը հասկացողութիւն չունի այն առարկայից, վորի մասին նա գրել են մի ամբողջ գիրք**): Այդ համադրութեան ժամանակ, ի հարկե, դրսեվորվում են «քրիստոնեութեան բոլոր առավելութիւնները», չնայած և մարքսիզմը, ըստ բուրժուական տրագիկայի, նրանց կողմից կրոն են հայտարարվում: Գրիստոնեութեան առավելութիւնը դրանք հա-

*) Տես նրա գիրքը— Fritz Gerlich, Der Kommunismus als Lehre vom Tausendjährigen Reich, München 1906 թ.

**) Կոմունիզմի յեւ մասնավորապես Լենինի մասին արտասահմանում յերեւման են յեկել մի շարք գրքեր:

մարում են այն, վոր նա պահանջում է անհատի փոփոխությունը, մինչդեռ հեղափոխական մարքսիզմը և մասնավորապես լենինը պահանջում են ամբողջ հասարակարգի փոփոխումը: Քրիստոնեությունը ուսուցանում է աստծու թագավորության մասին, իսկ այդ ատելի «ուսուցիսները» կոմունիստները յերազում են յերկրային դրախտի մասին և պայքարում են հանուն նրա և այլն: Հեղինակը իբրեւ լապտերյա մատնանշում է Մարքսին և Ենգելսին, լենինին և Տրոցկուն: Քրիստոնեությունը, «փրկիչ» է համարում մի անհատի, իսկ մարքսիզմը մարդկության փրկիչ է ճանաչում մի ամբողջ դասակարգ՝ պրոլետարիատը: Քրիստոնեությունն ուսուցանում է, վոր հավատը փրկում է, իսկ մարքսիզմը քարոզում է մի այլ բան: Ինչպես չհամաձայնել այդ սքանչելի հեղինակի հետ, վոր «գերմանական հոգին» կարիք ունի «նոր» աշխարհայացքի, վորը հիմքեր քրիստոնեության վրա: Ահա թե վորպիսի անհեթեթություն է հակադրվում մարքսիզմին:

Այդպես, սովորությունն ըստ լենինի, մարդու մեծ դաստիարակն է, ասում է Գերլիխը: Ի հարկե, այդպիսի ընդհանուր ձեւով այդ պնդումը միակողմանի յե և սխալ: Մակայն բանն այն է, վոր այդ ձեւի պնդումը պատկանում է վոչ թե լենինին, այլ Գերլիխին: Մարքսը գրել է դեռ անցյալ դարի 40-ական թվականներին, վոր մատերիալիզմը կոմունիզմի և ողջիալիզմի հիմքն է: Յեթե մարդը ստանում է իր բոլոր զգացողությունները, գիտելիքները և այլն արտաքին աշխարհից և փորձից, ձեռք է բերում այս աշխարհից, ուրեմն և պետք է այս աշխարհը այնպես սարքել, վոր պեսզի մարդը ստանա նրանից նրան վայել տպավորություններ, վորպեսզի նա իրեն մարդ զգա: Յեթե ճիշտ հասկացված անձնական շահը ամեն մի բարոյականություն հիմքն է, ապա ուրեմն պետք է հոգ տանել, վորպեսզի առանձին մարդու շահերը զուգորդվեն մարդկության շահերի հետ: Յեթե մարդկային բնությունը ստեղծում են հանգամանքները, ապա ուրեմն պետք է այդ հանգամանքները մարդուն վայել դարձնել: Յեթե բնությունը կանխորոշել է մարդուն հասարակական կյանքի համար, ուրեմն միայն հասարակության մեջ է նա դրսեւորում իր ճշմարիտ բնությունը: Լենինը Մարքսից հետո, խոսելով սովորության մասին, նկատի ունի մարդու փոփոխությունը նրան շրջապատող միջավայրի հասարակական պայմանների ազդեցության ներքո: Հասարակությունը մարդու միակ և մեծ դաստիարակն է: Այդպիսի այբբենական ճշմարտությունը

ստիպված ես զոռով մտցնել բուրժուական իդեոլոգիաների գլուխները: Յեւ յեթե ճիշտ է, իսկ մատերիալիստական տեսակետից այդ անպայման ճիշտ է, վոր մարդը փոխվում է միջավայրի, հասարակական կազմակերպության փոփոխության հետ միասին, հապա ուրեմն կոմունիստական հասարակության մեջ մարդը, այսինքն՝ նրա մտապատկերների և գաղափարների ամբողջությունը, նրա ամբողջ պիսիկան, բնավորությունը և սովորությունները արմատապես կփոխվեն: Ուստի Մարքսը և Ենգելսը խոսում են նոր մարդու, նոր սերնդի մասին, վորը կծնվի և կզարգանա նոր, ազատ, հասարակական պայմաններում և հետեւապես կյուրացնի նոր «սովորություններ»: Յեւ վորովհետեւ կոմունիզմի բարձրագույն ֆազը յենթադրել է տալիս նոր մարդուն, վորովհետեւ կոմունիստական հասարակության մեջ մարդը, լենինի խոսքերով, կնայի աշխատանքի վրա, վորպես առաջին կենսական պահանջի, ուրեմն մարդու հարմարվելը կյանքի նոր պայմաններին կկատարվի նախնական ստորին ֆազի միջոցով և այդ ֆազում կիրադորվի հասարակության և պետության ամենախիստ հսկողությունը առանձին անհատի վրա, — «աշխատանքի չափի և սպառման չափի վրա»: Շնոր մարդը ծնվում է վոչ միանգամից, այլ ձեւակերպվում է հասարակական զարգացման և արտաքին բնության դեմ կռիվով միացյալ ու կազմակերպված պայքարի ընթացքում:

մարում են այն, վոր նա պահանջում է անհատի փոփոխությունը, մինչդեռ հեղափոխական մարքսիզմը և մասնավորապես Լենինը պահանջում են ամբողջ հասարակակարգի փոփոխումը: Քրիստոնեությունը ուսուցանում է աստծու թագավորության մասին, իսկ այդ ասելի «ուսուպիստները»՝ կոմունիստները յերազում են յերկրային դրախտի մասին և պայքարում են հանուն նրա և այլն: Հեղինակը իբրեւ մալացույց մատնանշում է Մարքսին և Ենգելսին, Լենինին և Տրոցկուն: Քրիստոնեությունը, «փրկիչ» է համարում մի անհատի, իսկ մարքսիզմը մարդկության փրկիչ է ճանաչում մի ամբողջ դասակարգ՝ պրոլետարիատը: Քրիստոնեությունն ուսուցանում է, վոր հավատը փրկում է, իսկ մարքսիզմը քարոզում է մի այլ բան: Ի՞նչպես չհամաձայնել այդ սքանչելի հեղինակի հետ, վոր «գերմանական հոգին» կարիք ունի «նոր» աշխարհայացքի, վորը հիջներ քրիստոնեության վրա: Ահա թե վորպիսի անհեթեթություն է հակադրվում մարքսիզմին:

Այդպես, սովորությունն ըստ Լենինի, մարդու մեծ դաստիարակն է, ասում է Գերլիխը: Ի հարկե, այդպիսի ընդհանուր ձեւով այդ պնդումը միակողմանի յե և սխալ: Սակայն բանն այն է, վոր այդ ձեւի պնդումը պատկանում է վոչ թե Լենինին, այլ Գերլիխին: Մարքսը գրել է դեռ անցյալ դարի 40-ական թվականներին, վոր մատերիալիզմը կոմունիզմի և ողորակիչի հիմքն է: Յեթե մարդը ստանում է իր բոլոր զգացողությունները, գիտելիքները և այլն արտաքին աշխարհից և փորձից, ձեռք է բերում այս աշխարհից, ուրեմն և պետք է այս աշխարհը այնպես սարքել, վոր պեսզի մարդը ստանա նրանից նրան վայել տպավորություններ, վորպեսզի նա իրեն մարդ զգա: Յեթե ճիշտ հասկացված անձնական շահը ամեն մի բարոյականության հիմքն է, ապա ուրեմն պետք է հոգ տանել, վորպեսզի առանձին մարդու շահերը զուգորդվեն մարդկության շահերի հետ: Յեթե մարդկային բնությունը ստեղծում են հանգամանքները, ապա ուրեմն պետք է այդ հանգամանքները մարդուն վայել դարձնել: Յեթե բնությունը կանխորոշել է մարդուն հասարակական կյանքի համար, ուրեմն միայն հասարակության մեջ է նա զբաղվորում իր ճշմարիտ բնությունը: Լենինը Մարքսից հետո, խոսելով սովորության մասին, նկատի ունի մարդու փոփոխությունը նրան շրջապատող միջավայրի հասարակական պայմանների ազդեցության ներքո: Հասարակությունը մարդու միակ և մեծ դաստիարակն է: Այդպիսի այբբենական ճշմարտությունը

ստիպված ես զուով մտցնել բուրժուական իդեոլոգիաների գլուխները: Յեւ յեթե ճիշտ է, իսկ մատերիալիստական տեսակետից այդ անպայման ճիշտ է, վոր մարդը փոխվում է միջավայրի, հասարակական կազմակերպության փոփոխության հետ միասին, հապա ուրեմն կոմունիստական հասարակության մեջ մարդը, այսինքն՝ նրա մտապատկերների և գաղափարների ամբողջությունը, նրա ամբողջ պիլիքիկան, բնավորությունը և սովորությունները արմատապես պիլիքիկան: Ուստի Մարքսը և Ենգելսը խոսում են նոր մարդու, նոր սերնդի մասին, վորը կծնվի և կզարգանա նոր, ազատ, հասարակական պայմաններում և հետեւապես կյուրացնի նոր «սովորություններ»: Յեւ վորովհետեւ կոմունիզմի բարձրագույն ֆավորությունները է տալիս նոր մարդուն, վորովհետեւ կոմունիստազը յենթադրել է տալիս նոր մարդուն, Լենինի խոսքերով, կնայի աշխական հասարակության մեջ մարդը, Լենինի խոսքերով, կնայի աշխատանքի վրա, վորպես առաջին կենսական պահանջի, ուրեմն մարդու հարմարվելը կյանքի նոր պայմաններին կկատարվի նախնական ստորին ֆազի միջոցով և այդ ֆազում կիրադործվի հասարակության և պետության ամենախիստ հակողությունը առանձին անհատի վրա, — «աշխատանքի չափի և սպառման չափի վրա»: «Նոր մարդը» ծնվում է վոչ միանգամից, այլ ձեւակերպվում է հասարակական զարգացման և արտաքին բնության դեմ կոլեկտիվի միացյալ ու կազմակերպված պայքարի ընթացքում:

ՎԻՊԱԿ. — 8-րդ եջի վրա 29-րդ տողում տպված է ճնշող, պետք է լինի ճնշվող:

Հ.Ս.Խ.Հ. ՊԵՏՅՐԱՏԻ ՄՈՍԿՎԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ

«ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ» ԾԱՐՔԻՑ

Կ. ՄԱՐԲՍ և Ֆ. ԵՆԳԵԼՍ.— «Կոմունիստական Մանիֆեստ»

Դ. ՌՅԱՋԱՆՈՎԻ պարզաբանումներով յեզ նախաբանով հայկական հրատարակության առթիվ:

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Ե

Տպագրության համաք.— «Մաքքսը վորպես մարդ, հեղափոխական յեզ մասծող» — հոդվածների ժողովածու:

«ԼԵՆԻՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ԾԱՐՔԻՑ

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ

Ա. ԴԵՐՈՐԻՆ.— «Լենինը վորպես մարտնչող մատերիալիստ» հեղինակի նախաբանով հայկական հրատարակության առթիվ:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե

Ն. ԲՈՒՄԱՐԻՆ.— «Լենինը վորպես մարքսիստ»:

«ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ԾԱՐՔԻՑ

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ

ԿՈՐԴԵԼԻԱ.— «Գնացքը փրկող աղջիկը»:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե

«Կախարդական կայծը»:

ՀՀ Ազգային գրադարան



NL0181935

947
u s 1
m o